

Ռ.Լ. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՉ ՎԱՅԵՐԵՆԻ
ԲԱՅԱԿԱՆ
ԲԱՌԱԿԱՊԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՁԵՎԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

Р. Л. УРУТЯН

ФОРМАЛЬНОЕ ОПИСАНИЕ
ГЛАГОЛЬНЫХ СЛОВСОЧЕТАНИЙ
СОВРЕМЕННОГО
АРМЯНСКОГО ЯЗЫКА


ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1984

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱԺԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ռ. Լ. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ
ԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԵՎԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

A $\frac{II}{71077}$



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1984

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Զահեկյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
բան. գիտ. դոկտոր Վ. Մ. Գրիգորյանը և բան. գիտ. թեկնածու-
ներ Բ. Կ. Ղազարյանը և Տ. Մ. Ավետիսյանը

Աշխատությունը նվիրված է լեզվաբանության նորագույն մեթոդ-
ներով ժամանակակից հայերենի բայական բառակապակցությունների
կառուցվածքային վերլուծության հարցերին: Անմիջական բաղադրիչ-
ների ու նախադասության անդամների կաղապարների օգնությամբ
գուգահեռաբար քննվել են գոտո մակբայական և գոտո գոյականական
ստորադասությամբ բայական բառակապակցությունները: Վերջիններս
մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել բայական հարադրու-
թյուններին, որոնք գոյական < բայ կառույցի դրսևորման առավել
դինամիկ ձևերն են: Առաջարկվում է նախադասության մեջ հարադիր
բայերի սահմանադատման շարահյուսական եղանակ, և փաստական օրի-
նակներով ցույց է տրվում այդ միջոցի արդյունավետությունը բա-
յական հարադրությունների ճանաչման մեջ:

Նախատեսվում է լեզվաբանների, կիրառական մաթեմատիկայի և
բանասիրական ֆակուլտետների ուսանողության համար:

ՈԻ $\frac{4602010000}{703(02)-84}$ 47 - 83

ԳՄԴ 81.22
4Ap

Տվյալ երեւոյթը դիտարկելու հնարավորութիւնները կախված է այն բանից, թե ինչ տեսութիւններից ենք օգտւում: Տեսութիւնն է հենց որոշում այն, ինչ կարող ենք դիտարկել:

Ա. ԷՅՆՇՏԵՅՆ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սովորաբար, երբ խոսքը վերաբերում է լեզվի դինամիզմին, ապա ամենից առաջ նկատի է առնվում լեզվում կատարվող տեղաշարժերը տարածաժամանակյա կտրվածքով, այսինքն՝ այն փոփոխութիւնները, որոնք տեղի են ունենում լեզվի մեջ ժամանակի ընթացքում՝ պատմական առումով: Լեզվի դինամիզմն ավելի լայն առումով ընդգրկում է նաեւ նրա համաժամանակյա կտրվածքը, եթե ոչ դինամիզմով, ապա ինչո՞ւ կարող ենք մեկնարանել այն փաստը, որ լեզվական միեւնոյն միավորը տարբեր խոսքային իրադրութիւններում կատարում է պատմական, որոնք բնութագրվում են հատում չունեցող հարացուցաշարահարաւան հատկանիշներով: Կամ, օրինակ, ինչո՞ւ բացատրել լեզվական միավորների երկակիութիւնը, երբ լեզվական ցանկացած միավոր կարող ենք քննարկել երկու հայեցակետով՝ 1) այդ միավորը կամ երկւթը դիտարկվում է ստատիկ վիճակում և բացահայտվում նրա տարբերակիչ հատկանիշները լեզվական այլ միավորների կամ երեւոյթների համեմատ, 2) այդ միավորը կամ երեւոյթը դիտարկվում է դինամիկ վիճակում իբրեւ որոշ սերույ պրոցեսի արդիւնք և որոշվում սերման ելակետային միավորներն ու տրվում այդ պրոցեսի սերման կադապարը: Ի դեպ, յուրաքանչյուր այդպիսի կադապար, կախված հարցադրումից, նույնպէս երկակի բնութիւն ունի. այն կարող է դիտարկվել իբրեւ լեզվական միավորների ու երեւոյթների վերլուծութեան միջոց կամ դրանց սերման ընթացքի նկարագրութիւն: Առաջին բնութիւնի կադապարները կիրառվում են նկարագրողական նպատակներով, իսկ երկրորդ բնութիւնի կադապարները՝ բացատրողական:

Ժամանակակից լեզվաբանութեան մեջ զուգահեռաբար օգտագործվում են և նկարագրողական, և բացատրողական կադապարները, քանի որ դրեթե միշտ էլ կիրառվում են լեզվական որեւէ օբյեկտի կամ երեւիւթի նկարագրման կամ մեկնարանում անդանակները։ Սակայն հարկ է նկատել, որ լեզվաբանական նորագոյն հետազոտութեաններում նրկատվում է անցում հետազոտման նկարագրական-էմպիրիկ եղանակներէ դէպի վերացական-տեսական եղանակները։ Այլ կերպ ասած՝ անցում է կատարվում ստատիկ կադապարումից՝ դինամիկ կադապարման, որը կարող է բացահայտել լեզվական օբյեկտների ու երեւույթների նոր առանձնահատկութեաններ։ վերջիններս նկատելի չեն ստատիկ կադապարման դէպքում։

Անհրաժեշտ է նշել, որ լեզվի դինամիկ կադապարման գալափարը նոր է։ Լեզվի դինամիկ կադապարների կիրառութեանը կարելի է հանդիպել հին հնդկական քերականութեան մեջ, որտեղ լեզվական օբյեկտներէ նկարագրութեան ընթացքը համապատասխանութեան մեջ էր դրվում նրանց ձեւի կառուցվածքահամագրական մոտեցմանը։ Այդ նշանակում է, որ դեռեւ հնագոյն ժամանակներից խնդրի է դրվել ոչ միայն նրկարագրել առանձին վերցրած լեզվական օբյեկտները, այլ և բացահայտել նրանց կառուցվածքագործական առանձնահատկութեանները, լինեն դանք տարածամանակյա և թե համաժամանակյա կտրվածքներում։

Հայտնի է նաեւ, որ լեզվաբանման կադապարները բնութագրվում են ալապկան կոչված բացատրողական ուժով։ Կադապարի բացատրողական ուժը համեմատական է առանձնահատկութեանների կամ հատկանիշների ալն քանակութեանը, որոնք կարող են բացահայտվել տվյալ կադապարով՝ լեզվական որեւէ օբյեկտ կամ երեւույթ քննելիս։

Մասնավորապէս, ժամանակակից լեզվաբանութեանը հայտնի են նախադասութեան քննութեան մի քանի առավել տարածված կադապարներ։ Դրանք նախադասութեան անդամների, անմիջական բաղադրիչների և անմիջական շարահյուսական կախումների կադապարներն են, որոնց կառուցման համար համապատասխանաշար հիմք են բնութենվել նախադասութեան մեջ նախադասութեան անդամների սահմանադատման, լեզվական օբյեկտների երկատման և նախադասութեան կադմոդ բաղերի միջև անմիջական շարահյուսական կախումների բացահայտման սկզբունքները։ Նրկված երեք կադապարները տարբերվում են և՛ բացատրողական ուժով, և՛ ելակետալին տվյալներով, հետեաբար, և՛ նախադասութեան նկարագրման ճշգրտութեանը։

Ներկա ալխատութեան մեջ ներկայացվում են նախադասութեան անդամների, անմիջական բաղադրիչների և անմիջական շարահյուսական կախումների կադապարները, քննարկվում յուրաքանչյուր կադապարի վե-

բարերյալ ելակետային տվյալների ու արտածման կանոնների դրսևո-
րումները ժամանակակից հայերենում և լայն ընդգրկումով դիտարկ-
վում ալդ կադապարների կիրառութլունը ժամանակակից հայերենի բա-
յական բառակապակցութլունների նկարագրման համար: Նշենք, որ քըն-
նութլան ընթացքում առանձնահատուկ ուշադրութլուն ենք դարձրել
ժամանակակից հայերենի բայական հարադրութլունների առանձնահատ-
կութլունների բացահայտմանը՝ հարադիր բայերն են դրսևորում NV
(անուն-բայ) կառույցը, որն օժտված է մեծ դինամիզմով: NV կա-
ռույցի դրսևորման դինամիկան նկարագրելիս պարզ կերեան տարբեր
կադապարների (մասնավորապես նախադասութլան անդամների և անմի-
ջական բադադրիչների) բացատրողական ունակութլունները, առավելու-
թլունները կամ թերութլունները:

Օբյեկտիվ իրականութլան մեջ դրսևորվող գործողութլունները և
եդելութլունները լեզվի մեջ իրենց արտապատկերումն են ստանում
ԲԱՅ խոսքի մասի միջոցով, և որպեսդի վերջինս կարողանա ընդգրկել
այն բադմադանութլունները, որոնք կապված են մատերիայի այս կամ
այն կարգի փոփոխութլունների հետ, բայը բարդ փոխհարաբերութլուն-
ների ու շարահյուսական (անմիջական կամ ոչ անմիջական) կապերի
մեջ է մտնում ալլ խոսքի մասերի (այդ թվում նաե բայ խոսքի մասի)
հետ: Ալլ կերպ ասած՝ բայն ստեղծում է բայական կապակցութլուն
կամ բայական բառակապակցութլուն: Նշենք, որ ներկա աշխատութլան
չրջանակներում իրեք բայական կապակցութլուն կրնդունենք կամ բա-
յական բառակապակցութլունն առանձին վերցրած (Գ. Բ. Ջահուկյան,
1974, էջ 343), կամ նախադասութլունից անջատված բայական բառ-
խումբը: Որպես բայական բառակապակցութլան աշխատանքային սահմա-
նում մենք ընդունում ենք Գ. Բ. Ջահուկյանի կողմից տրված հետեյալ
սահմանումը, որ եթե բայական բառակապակցութլունը դիտենք լայն ա-
ռումով՝ ներադելով ոչ միայն բայի խնդրառութլամբ պայմանավորված
խնդիրները, ալլե բայի արժույթով պայմանավորված բուն (գործող)
ենթական և ստորոգելին (ստորոգելիական վերադիրը՝ ստորոգյալի ան-
վանական մասը), ապա նախադասութլան օբյեկտիվ պլանը հանդես կդա-
հենց որպես բայական բառակապակցութլուն՝ ստորոգմամբ կամ առանց
դրա, և նախադասութլունը կլինի բայական բառակապակցութլուն՝ լը-
րադված ստորոգումով (Գ. Բ. Ջահուկյան, 1974, էջ 333):

ժամանակակից հայերենում բայական բառակապակցութլունների շար-
քում իրենց ուրույն ու հետաքրքիր տեղն ունեն բայական հարադրական
բարդութլունները, կամ այսպես կոչված հարադիր բայերը:

Նախ խորձենք պարզել թե ինչ են ներկայացնում հարադիր բայերը և
ինչպես են դրսևորվում խոսքի մեջ:

Հարադրական բարդութլունները, - դրում է Մ. Արեդյանը, - հատուկ
են հայոց լեզվին, կադմվում են մի բայից և մի հարադիր բառից, որ

լինում է բայի լրացումը՝ բայն ու հարադիրը ստանում են մեկ բա-
ռի նշանակություն և կարող են հաճախ մեկ բառով փոխանակվել, օ-
րինակ, բաց անել→բացել, լաց լինել→լացել և այլն (Մ. Աբեղյան,
1965, էջ 170):

Սրանով իսկ արձանագրվում է այն փաստը, որ երբ ժամանակա-
կից հայերենի բայական բառակապակցությունների մի ենթաբաղմունք-
յան վերագրվում է մի նոր հատկանիշ, բայի ուղիղ խնդիր լրացումը
կորցնում է իր լրացականության հատկանիշը և բայի հետ միաձուլ-
վում է մեկ ընդհանուր բառիմաստի մեջ՝ նրա հետ միասին նախագա-
սության մեջ ստանձնելով ստորոգյալի պաշտոն: Այստեղ պարզ երևում
է լեզվի դինամիզմը: NV կառույցը օժտված լինելով բավական մեծ
դինամիզմով՝ տվյալ պարագայում կարող է դտնվել երկու կալուս-
վիճակներից որեւէ մեկում՝ կամ սովորական շարահյուսական կապակ-
ցության՝ բայի մոտ որպես խնդրի վիճակում կամ հարադրական կա-
պակցության վիճակում, որտեղ գոյականն ու բայը դրսևորում են
մեկ բայական բառ: Բնական է, որ NV կառույցի այդ երկու վիճակ-
ները բնորոշվում են տարբեր հարացուցաշարահյուսական հատկանիշ-
ներով: Այդ տարբերակումները բերված են Ալ. Մարգարյանի «Հայե-
րենի հարադիր բայերը», աշխատության մեջ (Ալ. Մարգարյան, 1966):
Նշված աշխատության մեջ հեղինակը փորձ է արել տարբերակել հարա-
դիր բայերը սովորական շարահյուսական կառուցվածքներից՝ հենվե-
լով այսպես կոչված ներկադույցային առանձնահատկությունների վը-
րա, որոնք, ի դեպ, վերաբերում են ստատիկ կադապարմանը:

Ներկադույցային առանձնահատկությունների քննությունը չի կա-
րող պատասխան տալ այն հիմնական հարցին, թե ի՞նչ պայմանների
դեպքում բայական սովորական շարահյուսական կառուցվածքը կարող
է վերածվել բայական հարադրության, կամ, որ նույնն է, կարո՞ղ է
արդյոք միեւնույն բայական բառակապակցությունը հանդես գալ և իր-
եւ սովորական շարահյուսական կապակցություն, և իրեւ բայական
հարադրություն:

Առաջին հարցին կարելի է պատասխանել միայն այն դեպքում, երբ
մեր ձեռքի տակ կունենանք ժամանակակից հայերենի բայական բառա-
կապակցությունների դինամիկ կադապարներ, մինչդեռ այս հարցից բը-
խող հետեւանքի քննարկման համար (որը կհանդիսանա մեր երկրորդ
հարցը) մեզ թերեւս բավարարեն ստատիկ կադապարման արդյունքները:
Դրանք, մասնավորապես, բերված են Ա. Աբրահամյանի «Բայը ժամա-
նակակից հայերենում», աշխատության մեջ (Ա. Աբրահամյան, 1962),
«Հոլովական հիմունքով կազմված բայական հարադրությունների ճա-
նաչման տեսակետից», գրում է Ա. Աբրահամյանը, - առանձնապես կա-
րեւոր է հաշվի առնել այն իրողությունը, որ սակավ չեն այնպիսի հա-
րադրությունները, որոնք առանց ձեւալին որեւէ փոփոխություն, միայն

իմաստալին հանգամանքներով, մեզ կարող են ներկայանալ շարահյուսական սովորական կապակցություններ, առանց բառական իմաստի միասնության, (Ա. Աբրահամյան, 1962, էջ 170):

Ի հաստատումն ասվածի՝ դիտարկենք հետեւյալ երկու նախադասությունները (նախադասությունները առնված են Ա. Աբրահամյանի նըշված աշխատությունից)․

- | | |
|--|---|
| 1) մինչ լողացողը փորձ արեց
ցատկել վեր՝ աչքերը մթնեցին
և գլուխը պտտվեց: | 2) ուսուցիչը նախ պատմեց օգտագործման երեւոյթի մասին և
այնուհետեւ փորձ արեց: |
|--|---|

Բերած երկու նախադասություններում էլ ներառված է փորձ արեց բայական լատակապակցությունը, որը հանդես է գալիս ձեռքի միեւնույն առանձնահատկություններով: Դրանք, ինչպես նշեցինք, ներկառուցային առանձնահատկություններ են, որոնք հանդես են գալիս ստատիկ կադապարման ընթացքում: Չնայած երկու նախադասություններում փորձ արեց բայական բառակապակցության հարացուցային հատկանիշների նույնությանը՝ հարադրված մասերի իմաստալին կապով և բառային արժեքով նրանք տարբեր են: Առաջինում բաղադրիչներն ունեն միասնական ընդհանրացված իմաստ՝ «փորձել», իսկ երկրորդում դրանք մի ընդհանուր բառույթի բաղկացուցիչ մասեր չեն, այլ անկախ են և ձեռով, և իմաստով: Նրանց միջև առկա է առանձին ստորոգյալի (արեց) և ուղիղ խնդրի (փորձ) շարահյուսական կապ, հետևաբար վերջինս բայական կապույն հարադրություն չէ, այլ շարահյուսական ժամանակավոր կապակցություն (Ա. Աբրահամյան, 1962, էջ 171):

Այստեղից կարելի է բխեցնել մեկ հարց էս, որը հարող է մեր առաջին հարցին: Ի՞նչ ժամանակակից հայերենում միեւնույն բայական կառույցը կարող է հանդես գալ երկու ձեռով կամ իրրեւ հարադիր բայ, կամ իրրեւ սովորական շարահյուսական (ազատ) կապակցություն, ապա գոյություն ունենալ արդյոք քերականական միջոցներ՝ այդ երկվությունը լուծելու, թե՛ այն (երկվությունը) չունի նյութական-քերականական հիմք:

Հայ քերականագիտական գրականության մեջ կարելի է գտնել այս հարցի պատասխանը: Այսպես օրինակ, նկատված է, որ հոդի գործածությունը անջրպետում է հարադրվող բաղադրիչները և քայքայում նրա իմաստալին ամբողջությունը, ինչպես՝ ձեռք մեկնել և ձեռք մեկնել, ձայն տալ և ձայնը տալ և այլն, որտեղ կապույն հարադրություններ են անհոդ անվանախոյն բաղադրիչներով բայական բառակապակցությունները (ձեռք մեկնել, ձայն տալ), իսկ հոդով գործածված բառերն անկախ են, ուստի և անկախ են բայերը, այսինքն՝ այդ դեպքում կապույն հարադրություն չկա: Տվյալ դեպքում հարադրության վերածումը շարահյուսական սովորական կապակցության կատարվում է կազմիչ

բառերի իմաստալիճն ուրույնությամբ ու շարահյուսական պաշտոնների ստանձնումով, և միաժամանակ անվանական բառի վրա հոգի դործածությունը դառնում է բաժանման ձեային, ցուցիչ: Այս երեույթը առկա է մեծ թիվ կազմող այն բայերի մեջ, որոնք այս ճանապարհով կարելի է քայքայել, ինչպես՝ գլխի ընկնել և գլխից ընկնել, կողքի ընկնել և կողքից ընկնել, լույս տեսնել և այն (Ա. Աբրահամյան, 1962, էջ 173): Սակայն նշվում են դեպքեր, երբ հոգի դործածությունը չի կարող քայքայել բայական հարադրությունը, և՛ իրրե ամբողջական բառով, այն կարող է հանդես գալ և առանց հոգի, և հոգով, ինչպես՝ գլուխ տանել (ձանձրացնել), գլուխը տանել (մեկին ձանձրացնել), սիրտ առնել (սրտապնդվել), սիրտը առնել (մեկին մխիթարել) և այլն (Ա. Աբրահամյան, 1962, էջ 177):

Մեզ թվում է, որ այս պնդումը ընդունելի է, եթե, առաջ անցնելով, անենք հետևյալ վերապահումը. խելե ցանկանում ենք ճշգրիտ լինել, ապա նշված օրինակներում անվանական բաղադրիչի հոդառումը ամենեին էլ պատճառ չէ հարադրության քայքայման. գլուխ տանել և գլուխը տանել բայական բառակապակցությունները արտահայտում են տարբեր իմաստներ, ինչպես նշվեց վերեւում, առաջինը նշանակում է ձանձրացնել ընդհանրապես, իսկ երկրորդը՝ մեկին ձանձրացնել: Նշանակում է՝ այս դեպքում իմաստատարերակման արտահայտման միջոցը անվանական բաղադրիչի առկայությունն է: Զի կարելի ասել, թե հոգի դործածությունը այսպիսի դեպքերում քայքայում է բայական հարադրությունը, Այս երեույթն առկա կլիներ միայն այն դեպքում, երբ հնարավոր լիներ միեւնույն իմաստն արտահայտել մի անգամ՝ բայական հարադրությամբ, այսինքն՝ առանց հոգի դործածության, իսկ մեկ այլ անգամ հարադրության բաղադրիչներից կազմված սովորական շարահյուսական կապակցությամբ՝ անվանական բաղադրիչի հոդառությամբ: Մինչդեռ բերված օրինակներում արտահայտության պլանը փոխելիս փոփոխության է ենթարկվում բովանդակության պլանը: Ի՞նչ դա բնական է: Հետեւաբար, այսպիսի դեպքերի համար կարող ենք միայն պնդել, որ ժամանակակից հայերենում հոգի դործածությունը չի խանգարում բայական հարադրության բաղադրիչներից կազմել սովորական շարահյուսական կապակցություն: Ի՞նչ ոչ ավելին: Վերջինիս օգտին է վկայում այն փաստը, որ ժամանակակից հայերենում սակավ չեն այն դեպքերը, երբ բայական հարադրությունը առկա է նաեւ անվանական հարադրի առկայացման պայմաններում: Ստորեւ ցույց կտանք, որ ոչ թե բայական հարադրության անվանական բաղադրիչի հոդառումն է քայքայում հարադրությունը, այլ բայական հարադրության քայքայման դեպքում արտահայտության պլանի փոփոխման ձևերից մեկը անվանական բաղադրիչի հոդառումն է: Ստացվել է այնպես, որ հետեւանքն ընդունվել է իրրե պատճառ, իսկ պատճառն իրրե հետեւանք:

Առաջ քաշենք բայական հարադրությունների հետ կապված մի հարց եւս: Ժամանակակից հայ լեզվաբանական գրականության մեջ առաջ է մղվում մի գաղափար, որի համաձայն ժամանակակից հայերենում ոչ բոլոր բայերն են ունակ կազմելու բայական հարադրություն: Այլ կերպ ասած՝ ժամանակակից հայերենում չի կարելի դանկազած բայով (այդ թվում նաեւ հարադիր բայով) հարադրական բարդություն կազմել: Այս կապակցութեամբ Ա. Աբրահամյանը գրում է. «Երկու կամ ավելի բառերի ամեն մի պատահական հարադրում, իհարկե, չի կարող հարադրական բարդություն կազմել: Դա վերաբերում է եւ բայական հարադրություններին: Ամեն մի բառ չի կարելի կամայականորեն հարադրել որեւէ բայի եւ ստանալ հարադրական բայ, (Ա. Աբրահամյան, 1962, էջ 164): Այն հարցին, թե խոսքի մեջ ամեն մի հարադրություն, որի մի բաղադրիչը բայ է, կարելի՞ է արդյոք դիտել իբրեւ բայական հարադրություն, Ալ. Մարգարյանը պատասխանում է հետեւյալ կերպ:

Նման բայերը (խոսքը վերաբերում է այն բայերին, որոնք կամ զրկված են իրենց բուն բայական նշանակությունից, ինչպես՝ անել, լինել, տալ եւ այլն, կամ ուղղակի արտահայտում են շարժման, տեղափոխության կամ գործողության իմաստ, ինչպես՝ գնալ, գալ, ելնել, քաշել եւ այլն՝ Ռ. Ու.) հարադրավոր բայեր կարող են կազմել համապատասխան հարադիրների հետ հարադրվելու, նրանց հետ միասին նոր գործողություն կամ գործողության մի նոր նշանակություն արտահայտելու հնարավորության կամ բավարար տրամաբանական հիմքերի առկայության չեզոքում միայն: Այստեղից միաժամանակ հետեւում է, որ լեզվական ամեն միավոր նույնպես չի կարող հարադրվել ամեն մի բայի հետ, կազմել հարադրավոր բայ եւ հանդես գալ իբրեւ հարադիր (Ալ. Մարգարյան, 1966, էջ 87):

Բայերի հարադրական բարդություն կազմելու ունակության վերաբերյալ ձեականացման առումով առաջին պնդումը (Ա. Աբրահամյան) փոքր ինչ անորոշ է, իսկ երկրորդ պնդումը (Ալ. Մարգարյան)՝ թույլ: Նախ՝ ակնհայտ է, որ խոսքի մեջ բառային միավորների կամայական հարադրում հնարավոր չէ: Թուրքանչյուր բառ խոսքի մեջ ներառվում է ըստ նրա իմաստաշարահյուսական առանձնահատկությունների: Այդ լիովին վերաբերում է նաեւ բայերին: Հետեւաբար, խոսքի մեջ տեղի ունի միայն որոշակի կանոններով թույլատրված զուգորդում: Ինչպես տեսանք, այն հարցը, թե անվան եւ բայի ամեն մի զուգորդում կարո՞ղ է արդյոք համապատասխան լեզվական իրողություններում դառնալ բայական հարադրական բարդություն, հայ լեզվաբանական գրականության մեջ լուծվում է բացասական կերպով (Ա. Աբրահամյան, 1962, Ալ. Մարգարյան, 1966):

Մեզ թվում է, որ լեզվական որեւէ երեւոյթի ընդունում կամ մեր-
ժում պետք է հիմնված լինի քերականագիտական որոշակի դրույթնե-
րի վրա: Իհարկէ, հասկանալի է, որ կարող են լինել դեպքեր, երբ եղած
դրույթները կամ նշանակալի տվյալները բավարար չեն լինի երեւոյ-
թի մեկնաբանելու համար, սակայն հասկանալի է նաեւ, որ որեւէ օբյեկտ
կամ երեւոյթ քննելու համար անհրաժեշտ է կառուցել նրանց կադա-
պոնները: Մասնավորապես, մենք չենք կարող քննել հարադրությունը,
իրեւ. քերականական երեւոյթ, քանի դեռ չունենք հարադիր բայերի
սերման կադապրը: Հենց այդ պատճառով մենք չենք պատասխանել
այն հարցին, թե ինչու՞ վերեւում բերված նախադասություններից ա-
ռաջինում փորձ արեց բայական բառակապակցությունը հարաբերակցում
է բայ խոսքի մասին, իսկ երկրորդում հանդես է գալիս ադատ՝ առան-
ձին բայի, սովորական շարահյուսական կապակցության ձեռք: Տար-
բերկաման ամբողջ դժվարությունն այն է, որ բայական հարադրութ-
յունը, որ տեղի ունի ժամանակակից հայերենում, պայմանավորված
է վերջինիս դինամիզմով և կարող է մեկնաբանվել միայն դինամիկ
կադապրների օգնութեամբ: Մինչդեռ հղված աշխատություններում
փորձ է արվում խնդիրը լուծել սաստիկ կադապրների օգնութեամբ՝
առանձին դեպքերում, չնախադասության անդամների, կադապրի
ներդրումով, որոշի դեպ, հուսարի միջոց չէ նախադասություն-
ների գիտական վերլուծության համար:

Ներկայումս գոյություն ունեցող կադապրների կողքին լեզվաբա-
նական գիտությանը հայտնի են նոր սկզբունքներով մշակված կադա-
պրներ, որոնք լայնորեն օգտագործվում են նախադասությունների
վերլուծության համար: Դրանք անմիջական բաղադրիչների և անմի-
ջական շարահյուսական կախումների կադապրներն են: Ներկա աշխա-
տության մեջ քննվում են անմիջական բաղադրիչների և անմիջական
շարահյուսական կախումների կադապրները, և վերջիններիս օգնութե-
ամբ համեմատական քննության են ենթարկվում ժամանակակից հա-
յերենի բայական բառակապակցությունների կառուցվածքային առանձ-
նահատկությունները: Մանրամասնորեն ուսումնասիրված են NV կառույցը
և նրա դրսեւորման բոլոր ձևերը ժամանակակից հայերենում: Վերլուծու-
թյան են ենթարկված նաեւ դուռ մակրայական յրացմամբ բայական բառ-
կապակցությունները, որոնք ներկայացվել են կադապրային սխեմանե-
րով: Վերջում փորձ է արվել բայական բառակապակցությունների ան-
միջական բաղադրիչների համակարգը փոխակերպել անմիջական շարա-
հյուսական կախումների համակարգի:

ՀԱՐՑԱԴՐՈՒՄ. ՄԻ ՓԱՆԻ ՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՑԹՆԵՐ

Նախարանում արդեն ասվեց, որ մեր նպատակն է նախադառնություն անդամների և անմիջական բաղադրիչների քերականությունների օգնությամբ համեմատական քննություն ենթարկել ժամանակակից հայերենի բայական բառակազմակերպությունները՝ Նշեցինք նաև, որ բայական բառակազմակերպությունների բազմություն մեջ կադելի է առանձնացնել հարադրական բարդությունների ենթաբազմություն, որոնք խոսքի մեջ դրոսեորման տեսակետից առավել հետաքրքրություն են ներկայացնում: Այդ պատճառով հարկ ենք համարում մեր քննությունն սկսել բայական հարադրություններից:

Հետազոտել բայական հարադրությունը՝ նշանակում է նպատակ դրել ել պատասխանելու հետեյալ հարցին. խոսքի արտահայտություն պահում ինչպիսի են կազմավորվում հարադիր բայերը, և, եթե դրանք առկա են, ապա ինչպիսի սահմանադատել բառական մյուս միավորներին: Ի՞նչ քանի որ հարադիր բայերը պատկանում են բայական բառակազմակերպությունների բազմությանը, ապա այդ հարցին կարող ենք պատասխանել, եթե կարողանանք քերականական հիմունքներով տարբերել բայական հարադրությունը սովորական բայական շարահյուսական կազմակերպությունից:

Այսպիսով, եթե մենք նպատակ ունենք լուծելու բայական հարադրությունների սերման կամ խոսքի մեջ դրանց սահմանադատման խընդիրը, ապա մեզ անհրաժեշտ է մշակել հետեյալ երկու ելակետային դրույթները՝

ա) ի՞նչ են իրենցից ներկայացնում բայական հարադրական բարդությունները, և

բ) լեզվի ո՞ր մակարդակում է անհրաժեշտ որոնել հարադիր բայերի տարբերակիչ հատկանիշները:

Նախ փորձենք պարզաբանել առաջ քաշված դրույթները՝ հիմք ունենալով բայական հարադրական բարդությունների այն սահմանումները, որոնք տրված են հայ լեզվաբանական գրականության մեջ:

Մեր ձեռքի տակ ունենք այդ հարցին վերաբերող մի քանի գրական աղբյուրներ, որոնցից առաջինը՝ Ալ. Մարգարյանի «Հայերենի հարադիր

այերը, աշխատությունն է, որը բայական հարադրությունների վե-
արերյալ ծավալուն ու ամփոփիչ ուսումնասիրությունն է:

Ըստ Ալ. Մարգարյանի, «... հայագիտության հաստատմամբ բա-
յական խոսքի մեջ մտնող բառերն ըստ իրենց կազմության բաժանվում
են երկու խմբի՝ համադրական, ինչպես, օրինակ՝ զնալ, լսել, թռչել...
և վերլուծական կամ հարադրական, ինչպես, օրինակ՝ անց կենալ, ա-
ռաջ զնալ, դուռն տալ և այլն: Համադրական բայերի մեջ նրանց բա-
ռային՝ արտաքին՝ հնչյունական, ներքին՝ իմաստային-իմաստաբանա-
կան կողմերը հանդես են գալիս միաձեռային ամբողջությամբ և հա-
մատեցվում են բացառապես ձևի մեջ, որպեսզի իմաստով և նման բա-
ռերի բառային բնույթը որոշելը որեէ դժվարություն կամ բարդութ-
յուն չի ներկայացնում: Իսկ վերլուծական կամ հարադրական բայե-
րը, որ կառուցվածքային ալելի բազմազան կողմեր ունեն, այն բայերն
են, որոնց բաղադրիչները մի ամբողջության մեջ հանդես են գալիս
ոչ թե անանջատ ու միաձուլ, այլ տարանջատ ու անմիջապես իրար
չմիացված ձևով: Նման ձևաբանական կառուցվածք ունեցող բայերը
կոչվում են հարադրավոր բայեր, (Ալ. Մարգարյան, 1956, էջ 66-67):
Նկատենք, որ ժամանակակից հայերենում չափազանց շատ են վերլու-
ծական բնույթի բայական կազմությունները, որոնք հարադիր բայեր
չեն, ել հետեւաբար, «վերլուծական», և հարադիր բայ, հասկացութ-
յունները նույնանալ և կամ շողկապով՝ կապվել չեն կարող:

Այնուհետեւ, որն ավելի կարեւոր է, հարադիր բայերի այսպիսի սահ-
մանումը բոլորովին էլ չի բացահայտում նրանց քերականական առանձ-
նահատկությունները: Այդ պատճառով, եթե հիմք ընդունենք հարադիր
բայերի Ալ. Մարգարյանի կողմից տրված սահմանումը, չենք կարող
պատասխանել այն հարցին, թե ինչու՞ վերեւում դիտարկված նախա-
դասությունների մեջ փորձ արեց բայական բառակապակցությունը մի
անգամ հանդես է գալիս բայական հարադրության, իսկ մյուս անգամ՝
սովորական շարահյուսական կապակցության ձևով:

Ալ. Մարգարյանի նույն աշխատությունն մեջ բերված բայական հա-
րադրության մեկ այլ սահմանում էս. «բայական հարադրական բար-
դություններ են կոչվում կամ որեէ հարադրից (իսկ դա անկախ վերց-
րած, կարող է լինել գոյական, ածական, դերանուն, մակրայ, ձայնա-
կություն, բայարմատ և այլն) և որեէ բայից կամ զուտ բայական միա-
վորներից հարադրակաճ հիմունքներով (բնդգծումը Ռ. Ու.) կազմված
բարդությունները, որոնք արտահայտում են իրենց բաղադրիչներից տար-
բեր մի նշանակություն», (Ալ. Մարգարյան, 1966, էջ 9):

Բայական հարադրությունների նման սահմանումը, պետք է ասել, դերժ
չէ թերությունից, որը սահմանափակում է այն օգտագործել բայական
հարադրությունների սահմանազատման համար, ինչու՞

Ընդհանրապես, որպես կանոն, որեւէ նոր հասկացութիւն սահմանելիս անհրաժեշտ է հենվել տվյալ ընադաւառին հայտնի հասկացութիւններին վրա: Իսկ եթէ վերջիններս բաղմանչանակ են, ապա պետք է նշել այն նշանակութիւնը, որը նկատի է առնվում: Պետք է հնարավորին չափ բացառել նույնաբանութիւնը: Այս Մարգարյանը բայական հարադրական բարդութիւնը բնորոշում է հենց հարադրի օգնութիւնով, որը այդ բարդութիւնն բաղադրիչն է: Այդպիսի սահմանումն ընդունելի կըլինեն, եթէ բառի հարադիր լինելը որոշվեր նախքան նրան, հարադրութիւն մեջ ներառելը, այլապես նույնաբանութիւնը ակնհայտ է: Այնուհետեւ, սահմանման մեջ օգտագործված է «նոր նշանակութիւն», հասկացութիւնը, որը նույնպես բնորոշված է: Սակաւ չեն այն դեպքերը, երբ դժվար է որոշել, գուցէ և անհնարին է վերականգնել, հարադրութիւնն բաղադրիչների հին նշանակութիւնը: Գործն առանձնապես բարդանում է, երբ այդ բաղադրիչների հին ու նոր նշանակութիւնները համընկնում են: Այսպես օրինակ, անց կենալ հարադիր բայը «Արդի հայերենի բացատրական բառարանում», մեկնաբանվում է իբրեւ անցնել, այն դեպքում, երբ անց-ը նույնպես անցնել կամ անց կենալ է: Այժմ աշխատենք պարզել, թե ի՞նչ է իրենից ներկայացնում այսպես կոչված հարադրութիւնն հիմունքը:

«Հարադրական... հարադիր... հարադրյալ բառերով, - նշված է «Լեզվաբանական բառարանում»- սկսվում են մի շարք լեզվաբանական տերմիններ, որոնք ցույց են տալիս, որ լեզվաբանական տվյալ իրողութիւնը բարդված է հարադիր բարդութիւնն սկզբունքով», (Հ. Պետրոսյան, 1975): Մյուս կողմից «արդի հայերենում այն անիսկական բարդութիւնը, որի բաղադրիչները, մեկ ընդհանուր իմաստ արտահայտելով և առանձին գրվելով, հիմնականում կամ լրիվ պահպանում են իրենց բուն իմաստը: Հարադիր բարդ բառերի ընդհանուր իմաստը նրա բաղադրիչների իմաստների գումարն է: Հայերենում հարադիրների մեծագույն մասը բայական է (գլուխ տալ, աչք մտնել, մոտ գնալ, ետ դառնալ)», (Հ. Պետրոսյան, 1975, էջ 174): Ուրեմն՝ հարադրութիւնը անիսկական բարդութիւն է, որն իր հերթին, «... կաշմվում է շարահյուսութեան կապված բառերի հետեւյալ բարդութիւններով՝ ա) միեւնոյն բառի (արմատի) կրկնութիւնով, բ) տարբեր բառերի հարադրութիւնով (ընդգծումը՝ Ռ. Ու.), գ) կցումով», (Հ. Պետրոսյան, 1975, էջ 13):

Հարադրութիւնն հիմունքը, և նրա վրա հենվելով հարադիր բայերի բնութիւնը պարզելու նպատակով ընդհանրացնենք «Լեզվաբանական բառարանից», մեջբերած հատվածները: Հարադիր բայերը բարդութիւնն այն տեսակն են, որոնք կաշմվում են շարահյուսութեան կապված տարբեր բառերի (այսինքն՝ բայի և ոչ բայի՝ Ռ. Ու.) հարադրութիւնով, և այդ բայերի ընդհանուր իմաստը բաղադրիչների ընդհանուր իմաստն է:

Դժվար չէ գույց տալ, որ Հարադիր բայերի այսպիսի սահմանումը չի կարող հիմք ծառայել խոսքի մեջ բայական հարադրական կազմութ-յունների սահմանազատման համար թեկուզ հենց այն պարզ պատճառով, որ գիտությանը դեռ հայտնի չէ այնպիսի գործողություն՝ ինչպիսին բառերի իմաստների գումարումն է։ Նման հարցադրմամբ ինչպես կարելի է ապացուցել, թե սովորական շարահյուսական կապակցու-թյան իմաստը նրա կազմի մեջ մտնող բառերի իմաստների գումարը չէ։

Կատարենք նույն փորձը ժամանակակից և արդի հայերենի բացատրական բառարանների հետ (,ժամանակակից հայերենի բացատրական բառարան,, , 1974, ,Արդի հայերենի բացատրական բառարան,, , 1976)։

Ըստ առաջին բառարանի, ՀԱՐԱԴԻՐ գլխաբառը մեկնաբանվում է իբրեւ ,կից դրված, կողքի դրված,, Այնուհետեւ հարադիր բայերի համար ունենք. ,Հարադիր բայեր՝ բարդություններ՝ այնպիսի բարդ բառեր, որոնք միացված չեն դրվում, բայց մի բառի իմաստ ունեն,, (,Բացատրական բառարան,, , 1974)։


Դժվար չէ նկատել, որ ըստ էություն հարադիր բայերի վերջին բունորոշումը չի տարբերվում արդեն մեզ հայտնի սահմանումներից, թերեւս որոշ առումով ավելի թույլ է։ Հարադիր բայերի այսպիսի բնորոշումը, վերջի վերջո կարող է հանգեցնել այն ծալրահեղությունը, որ բացատրական բառարաններում բայիմաստ արտահայտող գլխաբառերի բացատրությունը, երբ այն տրված է երկու և ավելի բառերի կապակցությամբ, ինչպես օրինակ, ասեղել – ասեղով կամ ասեղի նման իրով ծակել (տես, ժամանակակից հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երեւան 1971), խոսքային բոլոր իրողություններում՝ կարելի է դիտել իբրեւ հարադիր բայ։

Նմանօրինակ արդյունք ենք ստանում, եթե ժամանակակից հայերենի հարադիր բայերի բնորոշման հարցը ցանկանում ենք լուծել ,Արդի հայերենի բացատրական բառարանի,, օգնությամբ (է. Աղայան, 1976)։ Նշված բառարանում հարադիր հասկացությունը մեկնաբանված է իբրեւ ,իրար կից, իրար կողքի դրված,, իսկ ,Հարադիր բառը բարդություն է, բարդ բառ, որի բաղադրիչները պահպանում են իրենց ձևական անկախությունը՝ (առանձին–առանձին չնշտ են կրում և գրվում են իրարից անկախ),, (է. Աղայան, 1976)։

Պատկերը հիմնականում պարզ է. ժամանակակից հայերենում հանդիպող բայական հարադրական բարդության սահմանումները, որոնք հիմնականում բերվեցին հայ քերականագիտական տարբեր աղբյուրներից, իհարկե որոշ չնչին տարբերություններով, համընկնում են Միաժամանակ նշենք, որ բայական հարադրությունների վերաբերյալ բոլոր սահմանումներում փորձ է արվում հարադրությունը բնորոշել իբրեւ ներկառույցային երեւոյթ, որն ընդգրկում է լեզվի զուտ բառային մա-

կարողակր, թեև բայական հարադրությունը ընտրողիս հաշվի է առն-
վում նաև իմաստալին մակարդակը: Հետաքրքիր է, որ ոչ մի սահման-
ման մեջ նկատի չի առնվում լեզվի շարահյուսական մակարդակը:
Երևում է հարադրության բնույթը իմաստալին է, սակայն լեզվի իմաս-
տալին մակարդակը գեոեւ գիտարկելի է և առաջին դիտարկելի մա-
կարդակը, որտեղ բայական հարադրությունը իր արտացոլումն է գրա-
նում, դա շարահյուսական մակարդակն է, թեև առանձին դեպքերում
այն արտացոլելովում է նաև բառալին մակարդակի վրա: Այս կապակ-
ցությամբ ն. Պառնասյանը գրում է, - «Ժամանակակից հայերենում
խիստ տարածված են բայական հարադրությունները, որոնց ամենայայն-
ուսումնասիրությունը բառագիտության խնդիրն է, (Ս. Աբրահամյան
և ուրիշն., 1974, էջ 248): Մենք հեղինակի հետ կարող ենք համաձայնել,
եթե խոսքը վերաբերում է մասնավոր դեպքերին: Անժխտելի է այն
փաստը, որ ժամանակակից հայերենում սակավ չեն այն բայերը, որոնք
օժտված են հարադիր բայ (բայ վերեում տրված սահմանումներին)
կազմելու ունակությամբ, և, հաճախ, նրանց մի մասը խոսքի մեջ հան-
դես են գալիս միայն հարադրական կապակցության տեսքով: Սակայն
այս փաստը հիմք չի կարող հանդիսանալ պնդելու, թե բայական հա-
րադրությունը լեզվի բառալին մակարդակից բխող երեւոյթ է: Ավելի
ճիշտ կլիներ ենթադրել, թե բայական հարադրական կազմության մեջ
կապակցությունը ոչ թե բառերն են, այլ կառույցները, և հիմնական գոր-
ծոնը, որն ստեղծում է հարադրություն, դա լեզվի գիտարկումն է: Ինչ-
պես բառերը, որոնք խոսքի մեջ կարող են հանդես գալ տարբեր խոսքի
մասերի հարաբերակցող բառաձևերով, նույնպես և կառույցները, այդ
թվում նաև NV կառույցը, խոսքի մեջ կարող են դրսևորվել տարբեր
խոսքի մասերի հարաբերակցող կառուցվածքներով: Դրա ապացույցն այն
փաստն է, որ իմաստի վերագրումը NV կառույցի դրսևորմանը ժամա-
նակակից հայերենում հիմնականում կախված է խոսքային իրադրութ-
յունից, այլպես բոլոր N<V կառուցվածքները հանդես կգան միեւնույն
նշանակությամբ՝ կամ հարադիր բայի կամ սովորական շարահյուսա-
կան կապակցության: Տերմինային թյուրիմացությունները զանց առնե-
լու նպատակով հարկ են համարում նշել, որ խոսքի վերացական պա-
նում գոյական-բայ գուգորդությունը կանխանք NV կառույց, իսկ
նրա դրսևորումը արտահայտության պանում՝ N<V կառուցվածք: Երբ
N<V կառուցվածքը տրվում է բառային մակարդակում, ապա չնշանի
փոխարեն ընդգծվում է ամբողջ բայական բառակապակցությունը, օրի-
նակ, փորձեւանել փորձ աճել:

Այսպիսով՝ NV կառույցը ժամանակակից հայերենում նկարագրվում
է երկու ստատիկ՝ հարադիր բայի և սովորական շարահյուսական կապակ-
ցության, միմյանքից, որոնց միջև կապը, և հետեւաբար փոխադարձ



անցումը մեկից մյուսը, ցույց չի տրվում: Եվ եթե նույն կառույցը փորձենք նկարագրել գինամիկ կադապարով, ապա հարկ կլինի հաշվի առնել այն պայմանները, որոնց գեպքում կարելի է անցնել մի վիճակից մյուս վիճակը: Այդ կերպ ստա՞ծ՝ եթե երկու ստատիկ կադապարներ միացնենք անցումային սխեմաներով, NV կառույցը ժամանակակից հայերենի գինամիկ կադապարի վրա կդրողեցնի երկու գիրք: Նրա մեջից առաջինը կհամապատասխանի զոյական-բայական բառակապակցության հարադրության պաշտոնին, իսկ երկրորդը՝ սովորական շարահյուսական կապակցության պաշտոնին:

Եթե ընդունում ենք NV կառույցի գինամիզմը, ապա հարկ է լեզվի մեջ որոնել միջոցներ, որոնք կառավարում են գինամիկ կադապարի մի վիճակից մյուսին անցման պրոցեսները: Դրանցից մեկի մասին խոսվեց վերեւում: Դա բայական հարադրության անվանական բաղադրիչի հոգառումն է: Ճիշտ է, հիմնական առարկությունը նրա պատճառ-հետեանք իրողության մասին է, սակայն հետեանք լինելով հանդերձ անվանական բաղադրիչի հոգառումը կարող է կառավարել, իհարկե նեղ շրջանակներում, մի վիճակից մյուսին անցումը: Շատ գեպքերում կադապարի վիճակների ընտրությունը կարող է կատարվել ինչ-որ մտային գործողությամբ: Այսպես օրինակ, Եվեր տալ կապակցության գեպքում, երբ Եվեր տալ կապակցությունը դիտում ենք իրեն մի գործողություն (նվիրել), ապա NV կառույցը կգանձի բայական հարադրության համապատասխանող գիրքում, իսկ հակառակը, եթե այն դիտում ենք տալու գործողություն Եվեր կոչվող առարկայի հետ, NV կառույցը կգտնվի սովորական շարահյուսական կապակցության համապատասխանող գիրքում:

Իսկ ինչպես նկարագրել այդ գործողությունը:

Հայտնի է, որ դասական լեզվաբանության մեջ նախադասության վերլուծության նպատակով լայնորեն օգտագործվում է չնախադասության անդամները, կադապարը: Ըստ այդ կադապարի նախադասության մեջ նախ որոշվում են նրա գլխավոր անդամները, իսկ այնուհետև՝ երկրորդական անդամները՝ լրացումները, լրացումների լրացումները և այլն:

Սակայն չնախադասության անդամների սահմանադատման որոշակի չափանիշների բացակայությունը, գրում է Լ. Ս. Բարխուդարովը, պատճառ է դառնում բազմաթիվ միջանկյալ, միավորների առաջացման, որն ավելի է խճճում առանց այն էլ խճճված պատկերը, (Լ. Ս. Բարխուդարով, 1966, էջ 8): Եվ քանի որ չնախադասության անդամները, կադապարի մեջ բացակայում է նախադասության անդամների գիտական սահմանումը, ապա այն ներկա վիճակով պիտանի է նախադասության կառուցվածքի վերլուծության համար (Լ. Ս. Բարխուդարով, 1966, էջ 8):

Եթե անդրադառնանք բայական հարադրությունների հարցին, ապա խոսքի մեջ ալգայիսիք սահմանադատման համար նախադասության անդամների կադապարի կիրառման դեպքում N ՀV կառուցվածքի կազմիչների խմաստաքերականական առանձնահատկություններից ելնելով նրան տրվում է ստորոգյալի պաշտոն և դիտվում իբրեւ հարադիր բայ: Ստացվում է այնպես, որ ձեաբանական կամ բառային մակարդակի միավորը, ոչոք տվյալ դեպքում հարադիր բայն է, որոշվում է շարահյուսական մակարդակում, թեև պետք էր տեղի ունենար հակառակը՝ նախառանձնացվեր հարադիր բայը, ապա նրան տրվեր ստորոգյալի պաշտոն: Գործնականում ալգայես արվում է մասնակի դեպքերում, երբ հնարավոր է գուցակներով տալ այն բայերն ու գոյականները, որոնք ստեղծում են հարադրական կազմություններ: Ալգ գուցակները, ինչպես ասացինք, կաղմում են ստատիկ կադապարների հիմքը:

Նախադասության մեջ հարադիր բայերի սահմանադատումը իբրեւ նախադասության գլխավոր անդամի՝ ստորոգյալի, կարդարացվեր, եթե ժամանակակից շարահյուսության մեջ դրված չլիներ նախադասության անդամի պրորևմը: Նախադասության անդամներ, կադապարի ելակետային հասկացություններից մեկը նախադասության անդամն է, որի համար, դավոր, առ այսօր գոյություն չունի սպառիչ սահմանում:

Թեև նախադասության անդամը իրենից ներկայացնում է նախադասության մեջ բառի իրականացումը,՝ դրում է Վ. Գ. Գալի,՝ նրա սահմանները չեն համընկնում բառի սահմանների հետ, և, վերջինիս նման, նա էլ կարող է ունենալ ոչ միայն համադրական, այլև վերլուծական կառուցվածք, (Վ. Գալ, 1965, էջ 130): Եթե Վ. Գ. Գալի ասածը վերագրենք ժամանակակից հայերենի հարադիր բայերին, ապա վերջիններիս սահմանադատումը խոսքի մեջ անհամեմատ դժվարանում է այն պատճառով, որ հարադիր բայերի սահմանները թե որպես բառաշրջանի հատված, թե որպես նախադասության անդամ որոշվում է իմաստային առանձնահատկություններից ելնելով, այնինչ, իբրի առաջացման շարահյուսաձեարանական եղանակներից բացի գոյություն ունեն ղուտ շարահյուսական եղանակներ. տվյալ տիպի բայերը հանդիսանում են կառուցական պակցություններ՝ բաղկացած խոլիրներից, պարագաներից, կամ, հազվադեպ դեպքերում, ենթակայից և բայական ստորոգյալից, որոնք կազմում են միասնական ավարտուն ամբողջություն, (Ա. Կոռնով, 1956, էջ 270):

Դժվար չէ գուցա տալ, որ վերջին դրույթը հեշտությամբ կարելի էր բխեցնել հարադիր բայերի վերաբերյալ ժամանակակից հայ մասնագիտական գրականությունից: Վկայված են առանձին գոյականներ (օրինակ մարդու մարմնի մասերը նշանակող գոյականները), որոնք մի շարք բայերի հետ կաղմում են կայուն բայական բառակապակցություններ: Վերջիններս խոսքի մեջ հանդես են գալիս իբրեւ հարադիր բայեր և նախա-

դասութիւն մեջ ստանձնում են ստորոգելի պաշտոն: Այդպիսի գոյականները գրականութիւն մեջ բերվում են ցուցակներով (Ա. Մարգարյան, 1966, էջ 102-154):

Ավելորդ բարդութիւններից խուսափելու նպատակով այս հատվածում կդիտարկենք այն բայական հարադրութիւնները, որոնք բացկացած են երկու բաղադրիչներից՝ խնդիր կամ պարագա հարադրված լինմաստ կամ թերմաստ (կամ օժանդակ) բայով: Այլ կերպ ասած՝ մենք կուսումնասիրենք NV կառույցը:

Այժմ լեզվաբանական գրականութիւն մեջ դերիշխում է այն կարծիքը, թե NV կառույցը պատկանում է վերլուծական բնույթի օբյեկտներին: Կերկրադաշտի միավորներին վերլուծական բնույթ վերագրելու համար կարող է հիմք ծառայել, - գրում է Մ. Ա. Կուլմախովը, - նրանց իմաստային ամբողջականութիւնը, (Մ. Կուլմախով, 1965, էջ 278): Սակայն, - այնուհետեւ նկատում է հեղինակը, - միայն իմաստային միասնութիւնը հետո է բավարար լինելուց դրանց բառերի որոշակի դասի վերագրելու համար: Մ. Կուլմախովը պնդում է, թե NV կառույցներին վերլուծական բնույթ վերագրելու համար պետք է առկա լինի նրանց կառուցվածքային ամբողջականութիւնը: Իսկ կառուցվածքային ամբողջականութիւնը, ... բնութագրվում է հետեւյալ հատկանիշներով. 1) իմաստային ամբողջականութիւն, 2) հարաբերակցութիւն մի հարացուցային դասի (հարադիր բայերի դեպքում՝ հարաբերակցութիւնը կլինի բայերի հետ՝ Ռ. Ու.), 3) բաղադրիչների հոծութիւն (компактность), 4) բաղադրիչներն առանձին-առանձին այլ բառերով սահմանելու հնարավորութիւն բացակայութիւն, 5) բաղադրիչների հաջորդման կայուն կարգ, (Մ. Կուլմախով, 1965, էջ 278):

Եթե նշված հատկանիշները զուգադրենք ժամանակակից հայերենի բայական հարադրական բարդութիւնների բնորոշումների հետ (որոնք բերվեցին վերեւում), ապա դժվար չէ նկատել բավականին լինդհանրութիւններ: Այսպես, Ա. Աբրահամյանը գտնում է, որ «բայական հարադրութիւն մեջ ինչպես ամեն մի բաղադրիչ մաս կամ բաղադրութիւն եզր, նույնպես և բայականը իր բառական իմաստը ներդրում է ամբողջ հարադրութիւն իմաստի մեջ, (Ա. Աբրահամյան, 1962, էջ 204) և հարադիր բայերի (իրեւ N < V վերլուծական բնույթի կառուցվածքի) կառուցվածքային «ամբողջականութիւն հիմնական պայմանը իմաստային ընդհանրութիւնն ու ամբողջականութիւնն է՝ բայակազմական արդիւնքով, (Ա. Աբրահամյան, 1962, էջ 204): Վերջինիս պարզ ապացույցն այն է, որ բայական բառակապակցութիւնները, այդ թվում նաեւ հարադիր բայերը, ... ունեն հարացուցային բոլոր ձեւերը, ինչ գերադաս բայը, (Ս. Աբրահամյան, 1976, էջ 86): Մատնանշելով Ա. Մ. Կուլմախովի կողմից տրված հատկանիշները, ժամանակակից հայերենի հարադիր բայերը հարաբերակցում են բայական խոսքի մասին:

ի լրացումն նշածի մենք բաժանում ենք նաև այն կարծիքը, որ հա-
րադիր բայերի բաղադրիչներն ունեն կաշուն հաջորդում: Պակաս կա-
րե որ չէ նաև այն փաստը, որ հարադրությունը որպես շարահյուսա-
կան երեւոյթ հատկանշական չէ միայն հայերենին:

Տարբեր լեզուներում կարելի է հանդիպել բայի առաջացման շարա-
հյուսական եղանակներին:

Այս ամենը մեզ թույլ է տալիս պնդել, որ ժամանակակից հայերե-
նում լայն տարածում ստացած հարադիր բայերը ոչ այլ ինչ են, եթե
ոչ $N \leq V$ վերլուծական բնութքի կառուցվածքներ, որոնք ընդհանուր
առմամբ ունեն երկու կարգի հատկանիշների խումբ՝ ներկադույցային
ու արտակառույցային: Արտակառույցային ու ներկադույցային հատ-
կանիշները դրսևորվում են իրարից ոչ անկախ: Դրանք գտնվում են
փոխադրման օրինակում թյան մեջ, և դրանում գլխավորը արտակա-
ռույցային հատկանիշներն են, որոնցից կարելի է բխեցնել նաև ներկա-
դույցային հատկանիշները: Մենք գտնում ենք, որ Ա. Մ. Կումարիովի
թվարկած հատկանիշները $N \leq V$ կառուցվածքի վերաբերյալ, բացի մի
հարացուցային դասի հարաբերակցության հատկանիշից, կարելի է հա-
մարել որպես ներկադույցային հատկանիշներ: Սրանք բնորոշում են
կառուցվածքի ներքին առանձնահատկությունները, այսինքն՝ այն, ինչ
վերաբերում է $N \leq V$ կառուցվածքի բաղադրիչներին առանձին-առան-
ձին վերցրած կամ նրանց միջև եղած փոխհարաբերությանը: Պարզ է,
որ նման հարաբերություններ բոլոր կարգի կառուցվածքներում դո-
յություն ունեն, և դրանք, տվյալ դեպքում, բավարար չեն բայական
բառակապակցությունները իրեն հարադիր բայեր բնորոշելու համար:

Ինչ վերաբերում է մի հարացուցային դասի հարաբերակցության
հատկանշին, ապա կարող ենք ասել հետևյալը՝ եթե $N \leq V$ կառուցված-
քը դիտարկում ենք բայական հարացուցային համակարգում, ապա այն
կհամարենք իրեն ներկադույցային հատկանիշ, քանի որ այն կբնորոշի
 $N \leq V$ կառուցվածքը անջատ, անառիկ վիճակում, իսկ եթե $N \leq V$ կա-
ռուցվածքը դիտարկում ենք իրեն որեւէ նախադրյալներով արտածված
բառաշղթայի հատված (այլ կերպ ասած $N \leq V$ կառուցվածքը դիտում
ենք դինամիկ վիճակում), ապա մի հարացուցային դասի հարաբերա-
ցության հատկանիշը կհամարենք որպես արտադույցային հատկանիշ:
Վերջին պնդումը մեզ թույլ է տալիս անել հետևյալ գոտոդույթյունը՝
սի բայական հարադրությունը արտակառույցային երեւոյթ է, քանի որ
 $N \leq V$ կառուցվածքը ընդունելով իրեն մեկ շարահյուսական միավոր
կարող ենք քննել նրա փոխհարաբերությունները շարահյուսական միջու-
միավորների հետ,

բ) անհրաժեշտ է խոսքի մեջ գտնել լեզվական այլ միավորներ, որոնք
թույլ կտան բացահայտել $N \leq V$ կառուցվածքի մի հարացուցային դա-

սի հարաբերակցության հատկանիշը, որը, իր հերթին, հիմք կհանդիսանա հարադրական կազմությունների սահմանադատման համար:

Հարկ է նշել, որ ՆՋՎ կառուցվածքի սահմանադատումը և նրա վերլուծական միավորին հատուկ հատկանիշների վերադրումը չեն խախտում հարադրական կազմության չափադրիչների միջև գոյություն ունեցող նախկին հարաբերությունները: Հարադիր բայերի համար, ինչպես նշեցինք վերեւում, դրանք կարող են լինել խնդրային, պարագայական և առանձնահատուկ դեպքերում՝ ստորոգումային հարաբերությունների:

Ո՞րն է այս դատողության հիմքը:

Ա. Ա. Լեոնտեւը գտնում է, որ տեքստում կան հատվածներ, որոնք կարող են դործառվել տվյալ խոսքային համատեքստից դուրս, չփոխելով իրենց համակարգային (այլ բառաձևերի նկատմամբ) և ռեֆերենտային (իրականության առարկաների ու երեւոյթների նկատմամբ) հարաբերակցությունը (Ա. Լեոնտեւ, 1963, էջ 50): Նա առաջարկում է տեքստի ալդպիսի հատվածն անվանել լեկսա (բառաձևի դիստրիբուտիվ տարբերակը): Ի դեպ, մի լեկսան կարող է նույնիսկ համապատասխանել երկու կամ ավելի բառաձևերի (Ա. Լեոնտեւ, 1965, էջ 97):

Այս կապակցությամբ Գ. Ա. Բրուտյանը գրում է. «Ինչ էն դեպքերը, երբ բառակապակցությունը կազմված է գոյականից ու բայական ձևից և կատարում է բայական ֆունկցիա: Անգլիացու համար to observe և to make an observation (նկատել և զննել) կատարում են միևնույն իմաստային ֆունկցիան, թեև ոճական որոշ տարբերությամբ, որը քրոնարկվող հարցի տեսանկյունից չի կարող նկատելի նշանակություն ունենալ (նույնը հավասարապես վերաբերում է մեր հարցին. Խ. Ու.): Մի՞թե անգլերեն խոսողը իրականության նկատմամբ այլ վերաբերմուք է ցուցաբերում, երբ մի դեպքում օգտագործում է to ask, իսկ մյուս դեպքում to put a question, երկու դեպքում էլ դրանց տակ հասկանալով հարցնելը: Նույն բանը կարելի է ասել ռուսերենի համար. Победить և одержать победу, влиять և оказывать влияние, спросить և задать вопрос և այլն, իմաստային միևնույն բովանդակություն ունեն, և այս կամ այն տարբերակի օգտագործումը չի կարող ներգործել ռուսերենով խոսողների կողմից իրականության մտային յուրացման և իմաստավորման վրա» (Գ. Բրուտյան, 1972, էջ 72-73):

Ասածից ակնբախորեն հետեւում է, որ խոսքի մեջ կարող են լինել բառախմբեր կամ առանձին բառեր, որոնց միջև չարկարգային հարաբերությունները կարելի է դիտել լեկսային հարաբերությունների արտապատկերումը լեզվի չարահյուսական մակարդակի վրա: Այդ հարաբերություններն էլ բնորոշում են տվյալ բառախմբի արտակառուցային հատկանիշները: Երբ լեկսային հարաբերությունները արտապատկերվեն լեզվի բառային մակարդակի վրա, լեկսան դրսեւորող բառակապակցության չափադրիչների միջև հարաբերությունը կորոշի արդեն ներկառուցային հատ-

կանիչները: Այդ հատկանիշների հիման վրա կարող ենք որոշել առանձին բաղադրիչների իմաստային ու քերականական բեռնվածությունը: Ակնհայտ է, երբ լեկսան դրսևորվում է մեկ թառածեով, ապա վերջինս իր վրա է վերցնում և իմաստային, և քերականական բեռնվածությունը: Այն դեպքերում, երբ լեկսան դրսևորվում է մեկից ավելի թառածեերով, ապա, բնականաբար, պետք է տեղի ունենա բեռնվածության բաշխում առանձին բաղադրիչների միջև:

Այս աշխատության մեջ մենք նկատի չենք ունենա այս կամ այն բաղադրիչի բեռնվածության չափը՝ ավելի շատ քերականական կամ իմաստային և այլն: Մենք կհամարենք, որ տվյալ բաղադրիչը իմաստային կամ քերականական բեռնվածություն կրող է (կնշանակենք Δ նշանով) կամ չի կրում (կնշանակենք $-$ նշանով): Քանի որ մեր ուսումնասիրության առարկան NV կառույցն է, ապա շնորհիվ համակարգում մենք կունենանք այդ կառույցի դրսևորման 16 դեպք, որոնցից, իհարկե, ոչ բոլորն են դրսևորվում ժամանակակից Հայերենում: Անվանական և բայական բաղադրիչների զուգորդումն արտահայտությամբ պայմանավորված ներկայացնենք հետևյալ տեսքով՝ $N_b^a V_b^a$, որտեղ a -ն ներկայացնում է իմաստային բեռնվածությունը, իսկ b -ն՝ քերականական բեռնվածությունը:

Եթե ընդունենք այդ-ոչ հասկանալի համակարգի գաղափար սահմանումը, ապա առաջին կառույցը պետք է դրսևորվի այնպես, երբ թե՛ անվանական, թե՛ բայական բաղադրիչը զուգորդվի լինեն և՛ իմաստային, և՛ քերականական բեռնվածություն (N $_b^a$ -V $_b^a$): Ակնհայտ է, որ ընդհանրապես ոչ մի լեզվում ոչ մի կառույց նման դրսևորում չի ունենա: Բաղադրիչներից զոնե մեկը որե՛ն բեռնվածություն (իմաստային կամ քերականական) պետք է ունենա:

N $_b^a$ -V $_b^a$ կառույցը բնորոշ է նրանով, որ անվանական բաղադրիչը պետք է զուգորդվի լինի և իմաստային, և քերականական բեռնվածություն (իսկ բայական բաղադրիչը կրի միայն քերականական բեռնվածություն): Պարզ է, նման դեպքում անվանական բաղադրիչը խոսքում հանդես չի գա և NV կառույցը ժամանակակից Հայերենում կդրսևորվի օժանդակ բայի տեսքով:

Ի տարբերություն նախորդի՝ N $_a^b$ -V $_a^b$ դրսևորմամբ բայական բաղադրիչը հանդես է գալիս զուտ իմաստային բեռնվածությամբ, ժամանակակից Հայերենում այն հանդես կգա չնչու լծավորված բայի ձևով: Դրանք անսրուշ դերբայի ձևերն են, ..., որոնք ունենալով ըզձականի առաջին ձևերի արժանիքները, չունեն նրանց հոգևրական թվերությունը և ձևորոշ են դիտվել որպես ելակետային ձևեր, (Գ. Ջ. Հուկյան, 1974, էջ 223):

Հաջորդ՝ N $_a^b$ -V $_a^b$ դրսևորման մեջ բայական բաղադրիչը կրում է և՛ իմաստային, և՛ քերականական բեռնվածություն, Քանի որ այստեղ

նույնպէս անվանական բաղադրիչը բացակայում է, ապա NV կառուցքը ժամանակակից հայերենում կարող է հանդէս գալ միայն համադրական կազմութեամբ դիմաւոր բայաձեւերով:

NV կառուցքի դրսեւորման ներկայացված չորս ձեւերն առանձնաւորապէս տուել են նրանով, որ նրանցում անվանական բաղադրիչն իսպառ բացակայում է, իսկ $N_{a-}^{b-} V_{a-}^{b-}$ դրսեւորումը ընդհանրապես իր արտահայտութեան եղանակը չունի:

Հաջորդ չորս դրսեւորումները՝ $N_{a-}^{b+} V_{a-}^{b-}$, $N_{a-}^{b+} V_{a+}^{b+}$, $N_{a+}^{b+} V_{a+}^{b-}$, $N_{a+}^{b+} V_{a+}^{b+}$ բնորոշ են նրանով, որ անվանական բաղադրիչը հանդէս է գալիս զուտ քերականական բեռնվածութեամբ, այն դեպքում, երբ, նմանակ նախորդ չորսի, բայական բաղադրիչը հանդէս է գալիս իմաստային կամ քերականական բեռնվածութիւն ունենալու կամ չունենալու չորս հնարավոր տարբերակներով: Բոլոր չորս դրսեւորումներն էլ ժամանակակից հայերենում շատ սակավ են հանդէս գալիս: Ի դեպ, $N_{a-}^{b+} V_{a-}^{b-}$ և $N_{a+}^{b+} V_{a+}^{b+}$ դրսեւորումները բոլորովին հանդէս չեն գալիս, իսկ $N_{a-}^{b+} V_{a+}^{b-}$ և $N_{a+}^{b+} V_{a+}^{b+}$ դրսեւորումների հանդիպում ենք հատուկ կենտ դեպքերում, այն էլ դարձվածքների ձեւով: Այսպէս օրինակ, ռադ աճել դարձվածքը կարելի է համարել իբրեւ $N_{a-}^{b+} V_{a+}^{b-}$ դրսեւորման նմուշը, իսկ բայի դիմաւոր ձեւերով նույն դարձվածքները (ռադ արեցի, ռադ արեց և այլն)՝ $N_{a+}^{b+} V_{a+}^{b+}$ դրսեւորման նմուշ: Այստեղ կարող է առարկութիւն լինել անվանական բաղադրիչի քերականական բեռնվածութեան վերաբերյալ: Այդ բաղադրիչը իմաստային բեռնվածութիւններից զուրկ է: Ռադ աճել դարձվածքի անվանական բաղադրիչի կարգի բառերը բացակայում են ժամանակակից հայերենի բոլոր տեսակի ուղղագրական ու բացատրական բառարաններից: Իսկ ինչ վերաբերում է քերականական բեռնվածութեանը, եթե այն չկրեր, ապա ռադ աճել և աճել հասկացութիւնները կնույնանային:

Հաջորդ չորս դրսեւորումներն առանձնահատուկ են նրանով, որ NV կառուցքի անվանական բաղադրիչը հանդէս է գալիս զուտ իմաստային բեռնվածութեամբ, իսկ բայական բաղադրիչը՝ վերեւում դիտարկված չորս տարբերակներով: Դրանցից առաջինը կլինի այն, երբ անվանական բաղադրիչը հանդէս է գալիս իմաստային բեռնվածութեամբ, իսկ բայական բաղադրիչը չի կրում ոչ իմաստային, ոչ քերականական բեռնվածութիւն ($N_{a+}^{b-} V_{a-}^{b-}$): Պարզ է, որ դա պետք է լինի չնչույթմոված դրական:

Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում $N_{a+}^{b-} V_{a-}^{b+}$ դրսեւորումը: Այստեղ անվանական բաղադրիչն ունի միայն իմաստային բեռնվածութիւն, բայական բաղադրիչը՝ քերականական: Ժամանակակից հայերենում այսպիսի դրսեւորմամբ հանդէս է գալիս բաղադրյալ ստորոգյալը, որի անվանական մասն արտահայտում է ենթակայի որեւէ հատկանիշը, իսկ հանդույցը այդ հատկանիշը վերադրում, ստորոգում է ենթակային,

(Ս. Աբրահամյան, 1976, էջ 162): Այն ստորոգյալները, որոնց գեպ-բուս էմ և դառնում էմ տիպարային իմաստներն արտահայտված են վերլուծականության առաջին աստիճանով (մարդ է, մարդ է դառնում), ընդունված է կոչել բաղադրյալ, քանի որ այս դեպքում ենթակայի վիճակն արտահայտող կամ, ինչպես սովորաբար նշվում է, հատկանիշ-ցույց տվող մասը հիմնականում անվանական արտահայտությունն ու-նի (ածական կամ գոյական անուն, բացառված է նաև դերանվանա-կան արտահայտությունը)։ Բաղադրյալ ստորոգյալ ունեցող նախագա-սությունները կոչվում են անվանական։ Բաղադրյալ ստորոգյալի վի-ճակագույց կամ հատկանշացույց մասը կոչվում է ստորոգելի, իսկ մյուս մասը՝ հանգույց։ Եմ և դառնում եմ բայերը, որոնք հանդես են գալիս որպես հանգույց (ենթական ու ստորոգելին միացնող, երկ-րորդն առաջինին վերաբերող), կոչվում են վերացական բայեր (Գ. Ջա-հուկյան, 1974, էջ 402)։ Դա հաստատում է նաև այն, որ բայական հարադրությունների մեջ իրենց նյութական իմաստը կորցրել և հա-ճախ միայն բառակազմական-քերականական արժեքով են հանդես գա-լիս նաև առնել, դնել, ընկնել և այլ բայեր։ Օրինակ՝ վեր առնել→վերց-նել, կանգ առնել→կանգնել, նշան դնել→նշանել, մուսք ընկնել→մըք-նել, ցուրտն ընկնել→ցրտել և այլն (Ս. Աբրահամյան 1974, էջ 250)։

NV կառույցի հաջորդ գրսեորումը կլինի մի կառուցվածք, որտեղ թե՛ անվանական, թե՛ բայական բաղադրիչները հանդես են գալիս մի-այն իմաստային բեռնվածությամբ ($N_{a+}^{b-} V_{a+}^{b-}$)։ Ելնելով այն դրույ-թից, որ նախագասության ամեն մի անդամ պետք է կրի և իմաստա-յին, և՛ քերականական բեռնվածություն, ապա գոյականի ու բայի այս զուգորդությունը նախագասության մեջ կստանձնի չնչույթափորված բայի պաշտոն, օրինակ, նա ցանկանում է գինի խմել և այլն։

NV կառույցի $N_{a+}^{b-} V_{a+}^{b-}$ գրսեորումն իրենից ներկայացնում է մի բայական բառակապակցություն, որտեղ անվանական բաղադրիչը հան-դես է գալիս զուտ իմաստային բեռնվածությամբ, իսկ բայական բա-ղադրիչը՝ և՛ իմաստային, և՛ քերականական։ Սա վերլուծական բնույթի կառուցվածք է, որ խոսքի մեջ հանդես է գալիս իբրև հարադիր բայ։ Իմ քանի որ բայական բաղադրիչը կրում է և՛ իմաստային, և՛ քերական-ական բեռնվածություն, ապա այն պետք է ունենա համադրական՝ ձև, օրինակ, լաց եղալ, ձեռք մեկնեց և այլն։

NV կառույցի գրսեորման վերջին չորս ձևերը հատկանշական են նրանով, որ նրանցում անվանական բաղադրիչը հանդես է գալիս և՛ ի-մաստային, և՛ քերականական բեռնվածությամբ։ Այս խմբից առաջին գրսեորման մեջ, ըստ ընդունած սխեմայի, բայական բաղադրիչը զուրկ է թե՛ իմաստային և թե՛ քերականական բեռնվածությունից, և հետեա-րար խոսքի մեջ այն հանդես էի գալիս ժամանակակից հայերենում այս-պիսի գրսեորմամբ՝ կարող են լինել թեքված գոյականները՝ իբրև ան-վանական հարացույցի միավորներ։

Նախ հեշտ է նկատել, որ բնութիւնը կառուցվածքներէջ առաջին ե-
րեքում անվանական բաղադրիչը կրում է զուտ իմաստային բնույթ-
ածութիւն, իսկ հաջորդ երեքում՝ և իմաստային, և քերականական:
Գտնի որ նախադասութեան ցանկացած անդամի համար պարտադիր է
և իմաստային, և քերականական բնութիւնը, ապա առաջին ե-
րեք կառուցվածքների բաղադրիչները նախադասութեան անդամի պաշ-
տոնն չեն կարող ստանձնել (տես ստորեւ): Նույն բանը կարելի է պնդել
հաջորդ երկու կառուցվածքների վերաբերյալ: Նրանցից $N_{a+}^{b+} < V_{a+}^{b+}$ կա-
ռուցվածքը ամբողջութեամբ վերցրած նախադասութեան մեջ կարող է
կատարել ստորոգյալի պաշտոն (օրինակ, խոսնութե կոչկակարի էր),
իսկ երկրորդ՝ $N_{a+}^{b+} < V_{a+}^{b-}$ կառուցվածքը, որի անվանական բաղադրիչը
կրում է իմաստային և քերականական բնութիւնը, իսկ բայա-
կան բաղադրիչը՝ իմաստային, նախադասութեան մեջ կարող է կատա-
րել վերադրի դեր: Ստորոգյալի պաշտոն ստանձնելու համար նրան
անհրաժեշտ է զուգորդել բայական բաղադրիչով, որն իր վրա կրի
ստորոգյալի, իլլոն նախադասութեան անդամի, քերականական բնութիւ-
նը: Նման պահանջի դեպքում է սերվում ժամանակակից հա-
յերենի բարդ ստորոգյալը (օրինակ, նա տուն դնալ ցանկացաւ):

Շարահյուսական պաշտոնների ստանձնման լայն հնարավորութիւն
ներով է օժտված $N_{a+}^{b+} < V_{a+}^{b+}$ կառուցվածքը, որը կարող է նախադա-
սութեան անդամ դառնալ և ամբողջութեամբ վերցրած, բաղադրիչնե-
րով՝ առանձին-առանձին, Հետաքրքիր պատկեր է առաջացնում վերջին
կառուցի դիմամիական, երբ անվանական կամ բայական բաղադրիչի
բնութագրիւմը զուգակցվում է այս կամ այն կառուցվածքի փոխա-
կերպման: անցումային երեւութներով: Վերջիններս բացահայտելու նը-
պատակով փորձենք մեր կողմից կատարած քննութեան արդիւնքը
պատկերել դրաֆիկորեն:

Դրա համար բնութիւնը հիմնական առանցքը, ուր վրա տեղադրելու
ենք անվանական ու բայական բաղադրիչները: Անվանական-բայական
բաղադրիչների զուգորդմանը կենդանացնենք անվանական (ոչ բայա-
կան) - ոչ անվանական (բայական) հաշտութեան միջոցով: Հետեւաբար
այդ առանցքի վրա կարող ենք բնութել երկու կետ, որոնցից մեկը՝ չհա-
մապատասխանի անվանական բաղադրիչին, իսկ մյուսը՝ բայական բա-
ղադրիչին: Եւ քանի որ այդ բաղադրիչներից յուրաքանչյուրը բնու-
թագրվում է երկու հատկանիւնով (իմաստային կամ քերականական բնու-
նութեւնը իմաստային կամ բայականութեւնը), ապա NV կա-
ռուցի բոլոր 16 դրսեւորումները կարելի է ներկայացնել եռաչափ տա-
րածութեամբ, որը, իր հերթին, շատ հեշտութեամբ պատկերվում է մի-
ավոր խորանարդի գծապատկերի օգնութեամբ (գծապատկեր 1): Վերց-
նենք մի խորանարդ և ուղղահայաց կողերից մեկը բնութենք իրեն
նական առանցք՝ նրա վրա տեղադրելով N և V բաղադրիչները: Գտնաթ-

ների ընտրութիւնը լրիւ պայմանական է: Վերեւի դադաթր մենք կը համապատասխանեցնենք անվանական բաղադրիչին, իսկ ներքեւի դադաթր՝ բայական բաղադրիչին: Հիմնական առանցքի ալիսիսի ընտրութեան դեպքում խորանարդի վերեւի և ներքեւի նիստերը համապատասխանաբար կներկայացնեն անվանական և բայական բաղադրիչների բոլոր դրմանները: Յուրաքանչիւր նիստի վիճակագրական կողմերը համապատասխանութեան մէջ դնելով բեռնվածութեան հատկանիշին (իմաստային և քերականական), նրա վրա կստանանք գրեթէ 4 դեպք՝ $N_{a-}^{b-}(V_{a-}^{b-})$, $N_{a-}^{b+}(V_{a-}^{b+})$, $N_{a+}^{b-}(V_{a+}^{b-})$, $N_{a+}^{b+}(V_{a+}^{b+})$;


N և V բաղադրիչները ցանկացած զուգորդում խորանարդի վրա կպատկերվի անկյունագծի միջոցով, որը միացնում է անվանական բաղադրիչին համապատասխանող նիստի դադաթրները բայական բաղադրիչին համապատասխանող նիստի դադաթրների հետ (կունենանք 12 անկյունագծի և 4 ուղղահայաց կող): Ալիսիսով, կստանանք 16 հատվածներ, որոնք համապատասխանում են կառույցի գրեթէ 16 դեպքերին (տես աղյուսակը):

Աղյուսակ 1


կառույցի գրեթէ ման տեսքը	հատվածը		կառույցի գրեթէ ման տեսքը	հատվածը
1 $N_{a-}^{b-} V_{a-}^{b-}$	$n_0 - V_0$	9	$N_{a-}^{b+} V_{a-}^{b-}$	$n_2 - V_0$
2 $N_{a-}^{b-} V_{a+}^{b-}$	$n_0 - V_1$	10	$N_{a-}^{b+} V_{a+}^{b-}$	$n_2 - V_1$
3 $N_{a-}^{b-} V_{a-}^{b+}$	$n_0 - V_2$	11	$N_{a-}^{b+} V_{a-}^{b+}$	$n_2 - V_2$
4 $N_{a-}^{b-} V_{a+}^{b+}$	$n_0 - V_3$	12	$N_{a-}^{b+} V_{a+}^{b+}$	$n_2 - V_3$
5 $N_{a+}^{b-} V_{a-}^{b-}$	$n_1 - V_0$	13	$N_{a+}^{b+} V_{a-}^{b-}$	$n_3 - V_0$
6 $N_{a+}^{b-} V_{a+}^{b-}$	$n_1 - V_1$	14	$N_{a+}^{b+} V_{a+}^{b-}$	$n_3 - V_1$
7 $N_{a+}^{b-} V_{a-}^{b+}$	$n_1 - V_2$	15	$N_{a+}^{b+} V_{a-}^{b+}$	$n_3 - V_2$
8 $N_{a+}^{b-} V_{a+}^{b+}$	$n_1 - V_3$	16	$N_{a+}^{b+} V_{a+}^{b+}$	$n_3 - V_3$

Ժամանակակից հայերենում NV կառույցի գրեթէ ման վերաբերյալ վերջում արած քննութիւնը մեզ թույլ է տալիս գծապատկերի վրա կատարել հետեւյալ երկու պարզեցումներ՝

1) խորանարդից հեռացնել n_0 և n_2 դադաթրները, քանի որ անվանական բաղադրիչի N_{a-}^{b-} և N_{a-}^{b+} գրեթէ մաները ժամանակակից հայերենում



դ ծ ա պ ա տ կ եր 1



դ ծ ա պ ա տ կ եր 2

րենում չեն հանդիպում ($N_{a-}^{b+} < V_{a+}^{b-}$ և $N_{a-}^{b+} < V_{a+}^{b+}$ կառուցվածքները չենք դիտարկում չափազանց սակավ հանդիպելու պատճառով):

2) խորանարդից հեռացնենք նաև V_O դադաթը, քանի որ մենք դիտարկում ենք միայն երկրադադրիչ կառույցները:

Ընտրված խորանարդի վրա համապատասխան փոփոխությունները կատարելուց հետո ստացվում է, որ մեր հարցադրման տեսակետից ժամանակակից հայերենում հանդես են գալիս միայն վեց անվանարայական կառուցվածք (դժապատկեր 2):

Ստացված դժապատկերը թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունը՝

ա) ժամանակակից հայերենում հանդես է գալիս NV կառույցի՝ ըստ բայական բաղադրիչի՝ երեք, իսկ ըստ անվանական բաղադրիչի՝ երկու դրսևորում: Այլ կերպ ասած՝ ժամանակակից հայերենում հաճախակի $N < V$ կառուցվածքները վեցն են, որոնք, ինչպես նշվեց, ըստ անվանական բաղադրիչի բաշխվում են երկու, իսկ ըստ բայական բաղադրիչի՝ երեք խմբերում:

բ) Այդ կառուցվածքներից երկուսը, որոնք համապատասխանում են $N_1 V_1$ և $N_2 V_1$ հատվածներին, նախադասութային մեջ ստորոգյալի պաշտոն չեն կարող ստանալ: Դրանք $N_{a+}^{b-} < V_{a+}^{b-}$, $N_{a-}^{b+} < V_{a+}^{b-}$ կառուցվածքներն են, որոնց բայական բաղադրիչը հարացույց չի կազմում: Այդ պատճառով դրանք միայն կարող են հանդես գալ իրրե ստորոգյալի ման ղուգորդված բայական բաղադրիչի հետ, որն իր վրա պիտի վերցնի ստորոգյալի քերականական բեռնվածությունը: Հակառակ դեպքում այդ կառուցվածքները նախադասութային մեջ հանդես կգան իրրե դերբայական դարձված:

գ) Սրանց հակառակ $N_1 V_2$ և $N_2 V_2$ հատվածներին համապատասխանող $N_{a+}^{b-} < V_{a-}^{b+}$ և $N_{a-}^{b+} < V_{a-}^{b+}$ կառուցվածքները նախադասութային մեջ ստանձնում են միայն ստորոգյալի պաշտոն: Դրա պատճառն այն է, որ բայական բաղադրիչը ղուգրի լինելով իմաստային բեռնվածությունից, առանձին վերցրած, չի կարող նախադասութային ստորոգյալ դառնալ:

դ) Դիտարկված չորս կառուցվածքներն առանձնահատուկ են նրանով, որ ալատեղ թույլ են արտահայտված կամ բացակայում են դինամիկ պրոցեսները: Այդ կառուցվածքները խոսքային բոլոր իրադրություններում հանդես են գալիս շարահյուսական միեմոյն միավորի արժեքով (նշանակությամբ):

Լեզվի դինամիզմն իր ցայտուն արտահայտությունն է ստանում $N_{a+}^{b-} < V_{a+}^{b+}$ և $N_{a-}^{b+} < V_{a+}^{b+}$ կառուցվածքներում, որի շնորհիվ տեղի են ունենում անցումներ խնդրային (պարագայական) կապով սովորական անվանարայական կապակցությունից դեպի բաղադրիչների հարադրական հարաբերությամբ կապակցությունը՝ և հակառակը: Դինամիկ կապարման նպատակն է քաջահայտել այն պայմանները, որոնց առկա-

յութ յան դեպքում $N_{a+}^{b-} < V_{a+}^{b+}$ կառուցվածքը վերածվում է $N_{a+}^{b+} < V_{a+}^{b+}$ կառուցվածքի, և հակառակը:

Այդ նպատակով սահմանենք NV կառույցի դրսեւորման վերաբերյալ երկու կարեւոր հասկացութիւն. թեեւ այդ հասկացութիւնները բխում են բաժական հարադրութիւնների հետ կապված հարցերի քննութիւնից, սակայն կարելի է ցույց տալ, որ դրանք բնութենի կլինեն ալլ հարադրական կազմութիւնների համար ևս:

Ասիմետրում. խոսքի արտահայտութիւնն պլանում հանդէս է գալիս վերլուծական բառ, երբ $N < V$ կառուցվածքի բաղադրիչներից մեկը կրում է գուռ իմաստալին բեռնվածութիւն:

Ասիմետրում. խոսքի արտահայտութիւնն պլանում հանդէս է գալիս վերլուծական ձև, երբ $N < V$ կառուցվածքի բաղադրիչներից մեկը կրում է գուռ քերականական բեռնվածութիւն:

Այստեղ անհրաժեշտ է կատարել հետեւյալ պարզարանումը՝ $N < V$ կառուցվածքի բաղադրիչների քերականական բեռնվածութիւնն ստեղծվում ենք $N < V$ կառուցվածքի շրջանակներում տվյալ բաղադրիչի քերականական կազմի իմաստման հնարավորութիւնը: Անվանական բաղադրիչի համար դա կլինի հոլովառութիւնը, հոգառութիւնն ու հոչանակիացումը, իսկ բայական բաղադրիչի համար՝ խոնարհումը: Եվ քանի որ մենք ուսումնասիրում ենք այնպիսի $N < V$ կառուցվածքները, որոնք հարաբերակցում են բաժական խոսքի մասին, քերականական բեռնվածութիւնն ամենից առաջ վերաբերում է բաժական բաղադրիչին, ինչ վերաբերում է անվանական բաղադրիչին, ապա, առանձին դեպքերում, այն կարող է ուղղական հոլովով առնված չլինել, ինչպէս օրինակ, հալից ընկնել, հալից գալ և այլն: Ընդհանուր առմամբ բաղադրիչը քերականական բեռնվածութիւնից գուրկ կլինի, եթե բացակայում է հարացուցակին համակարգի մի քանի տողով տալու հնարավորութիւնը:

Այդ նկատառումով NV կառույցի 16 հնարավոր գուրգորումների ներկա աշխատութիւնն շրջանակներում քննութիւնն առարկա կարող են հանդիսանալ միայն վեցը՝ $N_{a+}^{b-} < V_{a+}^{b-}$, $N_{a+}^{b-} < V_{a+}^{b+}$, $N_{a+}^{b-} < V_{a+}^{b+}$, $N_{a+}^{b+} < V_{a+}^{b+}$, $N_{a+}^{b+} < V_{a+}^{b+}$, $N_{a+}^{b+} < V_{a+}^{b+}$:

Նշված կառուցվածքներից առաջին երեքում անվանական բաղադրիչը հանդէս է գալիս գուռ իմաստալին բեռնվածութիւնով, իսկ բաժական բաղադրիչը՝ կամ իմաստալին, կամ քերականական, կամ և՛ իմաստալին, և՛ քերականական: Այդ նշանակում է, որ նախադասութիւն մեջ անվանական բաղադրիչը նախադասութիւն ինքնուրույն անդամի պատճառով կարող ստանձնել: Ինչ վերաբերում է ամբողջ $N < V$ կառուցվածքներին, ապա համաձայն վերըստ արված սահմանման, դրանք վերլուծական բառեր են, որովհետեւ հանդէս է գալիս բաղադրիչ, որը կրում է

զուտ իմաստային բեռնվածություն: Դրանցից առաջինը չի կարող դա-
տանալ նախադասության ինքնուրույն անդամի պաշտոն, իսկ մնացած
երկուսը կարող են:

Եթե առաջին կառուցվածքը չի կարող նախադասության մեջ ինք-
նուրույն անդամի պաշտոն ստանալ, ապա, հարց է ծագում՝ կառու-
րում է նա որե՞նչ դեր, երբ աշխուսամենայնիվ, նախադասության կազ-
մում հանդես է եկել: Կաղապարային բանաձևից պարզ երևում է, որ
 $N_{a+}^{b-} < V_{a+}^{b-}$ կառուցվածքի երկու բաշարիչներն էլ ստանում են զուտ
իմաստային բեռնվածություն: Եվ քանի որ մենք քննարկում ենք այն
NV կառույցները, որոնք հարաբերակցում են բայական խոսքի մասին,
ապա $N_{a+}^{b-} < V_{a+}^{b-}$ կառուցվածքը նախադասության մեջ կարող է կա-
տարել անորոշ դերոյի ֆունկցիա: Այստեղ առանձնահատուկ պետք է
շեշտել, որ ստատիկ կաղապարման տեսակետից, այսինքն՝ հարաբերա-
յին համակարգում, $N_{a+}^{b-} < V_{a+}^{b-}$ կառուցվածքը հարադիր բայերի ելա-
կետային ձևն է, որից կարող են կազմվել թե՛ համադրական և թե՛ վեր-
լուծական ձևերը, օրինակ դուրս գալ $\rightarrow$ դուրս գնաց, դուրս գալ $\rightarrow$ դուրս
գնացել է և այլն:

Հաջորդ՝ $N_{a+}^{b-} < V_{a+}^{b-}$ կառուցվածքը, երբ անվանական բաղադրիչը
կրում է զուտ իմաստային բեռնվածություն, իսկ բայական բաղադ-
րիչը՝ զուտ քերականական, կարելի է մեկնաբանել վերլուծական բառի
և վերլուծական ձևի վերաբերյալ սահմանումներով միաժամանակ:

Իսկապես, նախ դա կարող է հանդիսանալ վերլուծական բառ, որով-
հետեւ անվանական բաղադրիչը կրում է զուտ իմաստային բեռնվածու-
թյուն (օրինակ, քար վարձավ, որտեղ վարձավ բայը հանգույց է),
իսկ այնուհետեւ վերլուծական ձև, քանի որ բայական բաղադրիչը կը-
րում է զուտ քերականական բեռնվածություն (օրինակ, մարդ է): Թե՛
առաջին և թե՛ երկրորդ մեկնաբանությունը չեն բացառում, որ $N_{a+}^{b-} < V_{a+}^{b-}$
կառուցվածքը նախադասության մեջ ստանձնի ստորոյայի պաշտոն:
Կառուցվածքն ամբողջութեամբ վերցրած կարող է կրել և՛ իմաստային
(անվանական բաղադրիչ) և՛ քերականական (բայական բաղադրիչ) բեռնու-
վածություն, որը անհրաժեշտ և բավարար պայման է նախադասութ-
յան մեջ ինքնուրույն շարահյուսական միավոր դիտվելու համար:

$N_{a+}^{b-} < V_{a+}^{b-}$ կառուցվածքներին իրենց բնույթով հարում են $N_{a+}^{b-} < V_{a+}^{b+}$
կառուցվածքները, որտեղ բայական բաղադրիչն ստանում է նաև քերա-
կանական բեռնվածություն: Սրանք իրենց նախադասի ($N_{a+}^{b-} < V_{a+}^{b-}$) դի-
մալոր ձևերն են և, բնաշխարհը ժամանակակից հայերենում հանդես
են գալիս հարադիր բայերի ձևով, որտեղ բայական շարադրիչն ունի
համադրական կազմություն: Դիմալոր չէ ցույց տալ, որ այն կարգի կա-
ռուցվածքներում անվանական բաղադրիչը չի յիշում իր հարաբերա-
յին արժեքը, իսկ բայական բաղադրիչը կարող է փոփոխվել բայ խոսքի
մասի լրիվ հարաբերակցով:

Մեր կողմից նշված վեց կառուցվածքներից հաջորդ երեքում, երբ անվանական բաղադրիչի ունեցած խմաստային բեռնվածությունը չանր ավելանում է բերականական բեռնվածություն, փոխվում են ինչպես ամբողջ կառուցվածքի, այնպես էլ նրա բաղադրիչների գործառնական հնարավորությունները: Անվանական բաղադրիչի ալտակի գրգռորումը նախադասության մեջ կարող է հանդես գալ իրեն առանձին շարահյուսական կան միավոր՝ կատարելով հիմնականում խնդրի կամ պարագայի դեր: Այդ երեք կառուցվածքներից մեկում ($N_{a+}^{b+} < V_{a+}^{b+}$) բաղական բաղադրիչը կրում է երկու բեռնվածություն էլ, որը նրան թույլ է տալիս ստանձնելու շարահյուսական ինքնուրույն պաշտոն:

Հաջորդ $N_{a+}^{b+} < V_{a+}^{b+}$ կառուցվածքները ժամանակակից հայերենում հանդես են գալիս վերլուծական բառերի ձևով: Իսկ ո՞րն է նրա ատանձնած պաշտոնը նախադասության մեջ: Ինչպես հայտնի է, մենք բնարկում ենք միայն այն $N < V$ կառուցվածքները, որի մեջ անվանական բաղադրիչը կառավարվում է բաղական բաղադրիչից: Այդ նշանակում է, որ նախադասության մեջ $N < V$ կառուցվածքը վերջնում է գերազաս անդամի, այսինքն՝ բաղական բաղադրիչի, շարահյուսական ֆունկցիոնները: Այստեղ բաղական բաղադրիչն առնված է անորոշ ձևով, որը, ըստ գրգռուման, հարադուցային փոփոխման չի ենթարկվելու: Հետևաբար, $N < V$ կառուցվածքի եղանակավորումը կատարվելու է նախադասության ստորոգյալի միջոցով, որը և որոշելու է նրա շարահյուսական պաշտոնը:

Այս կապակցությամբ ժամանակակից հայ լեզվաբանության մեջ գոյություն ունի այն կարծիքը, թե եղանակավորող ուղեյ, կամենալ, ցանկանալ, փափագել, սկսել, կարողանալ և այլ բայերի մոտ անորոշ գերբայը բաղադրյալ ստորոգյալի մաս է կազմում և ոչ թե ուղիղ խնդիր է. ալտակս՝ ուզում եմ խոսել, կամենում եմ տուն գնալ, փափագում եմ ներկա գտնվել: Իսկ հրամայել, պարտադրել, արգելել, հարկադրել, ստիպել, բռնադատել, առաջարկել, հորդորել և նման բայերի մոտ անորոշ գերբայը ուղիղ խնդիր է. օրինակ՝ կարգադրեց ներս լքել, հորդորում եմ չգնալ, ստիպեց կանգ առնել, արգելեց տուն մտնել:

Իբր դիմավոր բայի և անորոշ գերբայի գործածությունը միևնույն ենթ սկայի հետ է առնչվում, անորոշը ստորոգյալի մաս է, իսկ եթե գրանց ենթակաները տարբեր են, անորոշը դառնում է ուղիղ խնդիր (Ս. Արբահամյան, 1975, էջ 221):

Մենք չենք առարկում անորոշ գերբայի գործառնական ալտակի տարբերակման վերաբերյալ, թեև այնպիսի օրինակներում, ինչպես՝ առաջարկում եմ լաժակ բարձրացնել, առաջարկում եմ գնել մեկական գիրք՝ նախադասության ներքին էլ պարզ չէ անորոշ գերբայի

ենթակալի հարցը, իսկ ցանկանում եմ անմիջապես մեկնել նախագա-
սության մեջ անմիջապես մակրայր լրացնում է ոչ թե ստորոգյալին,
որպես նախադասության ինքնուրույն անդամ, այլ նրա մի մասին, ու-
րր հակասում է, նախագասության անդամները, կադավարի աքսիոմատի-
կային: Քանի որ մեկնել անորոշը ստացել է առանձին լրացում, ապա
այն պետք է դիտել իրեն ինքնուրույն շարահյուսական միավոր:

Ինչ վերաբերում է $N_{a+}^{b+} < V_{a-}^{b+}$ կառուցվածքներին, ապա ժամանա-
կակից հայերենում հալվադեպ է հանդիպում՝ այն էլ, երբ վերադրի
պաշտոնով կարող են հանդես գալ մեկից ավելի հոյովներով առնված
գոյականներ, օրինակ, նամակը եղբորս է, նամակը նրա եղբորից է կամ
նամակը եղբորիցս է և այլն: Այսպիսի գործածությունները՝ չնայած
իրենց ոչ տարածված լինելուն, խորթ չեն հայերենի ոգուն (Ս. Արրա-
համյան, 1976, էջ 164): Ըստ մեր սահմանման, $N_{a+}^{b+} < V_{a+}^{b-}$ կառուց-
վածքները վերլուծական բառեր են:

Այսպիսով, մենք ներկայացրինք $N < V$ կառուցվածքների քննություն-
նր ժամանակակից հայերենում, որ կարելի է կատարել ստատիկ կադա-
վարների օգնությամբ: Այն, ինչի մասին խոսվեց, կարելի է դասել ներ-
կառույցային հարցերի թվին, որոնց լուծումը դուրս էլ գալիս մի կա-
ռույցի շրջանակներից և չի պահանջում արտակառույցային օբյեկտնե-
րի ու երեույթների քննություն:

Ինչնով հարցադրումից, մեզ հետաքրքրում են նաև այն երեույթ-
ները, որոնք բերում են կառուցվածքային փոփոխություններին, երբ մեր
կողմից ներկայացրած մի կառուցվածքը փոխակերպվում է մեկ այլ
կառուցվածքի: Իմ որպեսզի այդ երեույթներն ավելի ակնհայտ երևան,
մենք քննությունը կտանենք գոլգահեռաբար երկու՝ «նախագասության
անդամներին, ու «անմիջական բաղադրիչներին, կադավարների օգնութ-
յամբ: Այդ նպատակով ներկայացնենք նշված երկու կադավարները:

„ՆԱԽԱՌԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ,, ԵՎ „ԱՆՄԻՋԱԿԱՆ
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ,, ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՑԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ:
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇԱՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՖՈՒՆԿՑԻԱ

Ընդունված է ասել, որ խոսքը լեզվական միավորների, որոշ կանոններով թույլատրված, դժային դասավորությունն է: Ի՞նչ էլ վերանանք կոնկրետ խոսքի, համախմբենք լեզվական միավորները և քաջ առ քաջ կիրառենք այդ թույլատրելի կանոնները, ապա ստացված արդյունքը մեզ թույլ կտա խոսելու որեւէ շարակարգային սխեմայի մասին, որ կարելի է վերադարձնել լեզվին: Այդ շարակարգային սխեման, որով ներկայացվում է լեզվի գեներատիվ բնույթը կամ սկզբունքը, հաճախ անվանվում է կադապար:

Հետեւելով այն կարծիքին, որ նախադասությունը լեզվական առանձնահատուկ միավոր է (նկատի առնենք, որ առ ալսօր բացակայում է նախադասության միասնական ըմբռնումը), ժամանակակից շարաչյութագիտության մեջ կարելի է տեսնել նախադասության վերլուծության ու համադրման կադապարների կառուցման ու հետադոման հարցերին:

Ժամանակակից լեզվաբանությանը հայտնի են մի քանի առավել տարածված կադապարներ, որոնք օգտագործվում են նախադասությունների, բառակազմակերպչությունների, բառերի ու լեզվական այլ միավորների վերլուծության ու համադրման համար: Դրանք, չնայած նախադասության անդամներին, չեն անդամաձևում բաղադրիչներին, ու չշարաչյութական անդամաձևում կախումներին, կադապարներն են (Լ. Բաշխուդարով, 1966): Նախադասության վերլուծման կադապարների ալսպիսի բաղմադանությունն էլ վկայում է այն փաստը, որ նախադասությունը, բառակազմակերպչությունը կամ բառի ոլակա լեզվական միավոր ինքնին բարդ օրակտ է: Բայց, այնուամենայնիվ, անկախ վերը նշված պատճառներից, դասական լեզվաբանության մեջ առ ալսօր կիրառվում է չնայած նախադասության անդամներին, կադապարը, որը թույլ է տալիս նախադասության կադմում առանձնացնել ինքնուրույն շարաչյութական միավոր հանդիսացող բառերը կամ բառախմբերը և որոշել նրանց շարաչյութական պաշ-

տոնները նախադասութեան մէջ: «Նախադասութեան անդամները», կադապարի մէջ վերլուծութեան հիմնական մեթոդը հարցի մեթոդն է (Վ. Քոսյան, 1976, էջ 30): Իրեւ հարց ծառայում են հարցալան դերանունները՝ ո՞վ, ի՞նչ... (եկականային կամ հոլովված ձևերով): Սըրանց մի մասը հարաբերակից է հոլովվող խոսքի մասերի (գոյականի, որոշ դերանունների և այլն) համապատասխան ձևերին, իսկ դա նշանակում է, որ նախադասութեան այս կամ այն անդամի համար բնորոշ է այս կամ այն խոսքի մասի որոշակի ձևը: Հարցի մեթոդը օգնում է, աշխուհետե գրում է Վ. Ա. Քոսյանը, լիովին բացահայտելու նախադասութեան կազմիչները: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր կազմիչ պատասխանում է մի հարցի: Այսպես, երեխաները բակից հավաքեցին ձուլը նախադասութեան մէջ յուրաքանչյուր բառաձև պատասխանում է մեկ հարցի (ովքե՞ր հավաքեցին) - երեխաները (ենթակա), (երեխաները) ի՞նչ աշխուհեցին - հավաքեցին (ստորոգյալ), (հավաքեցին) ի՞նչը - ձուլը (ուղիղ խնդիր), (հավաքեցին որտեղի՞ց) - բակից (տեղի պարագա) (Վ. Քոսյան, 1976, էջ 32):

Անմիջապես պարզ դարձավ, որ «նախադասութեան անդամները», կադապարի կիրառութեան ժամանակ լուրջայն ընդունվում է մի կարեւոր վերապահում՝ նախադասութեան մէջ շարահիւսական ինքնուրույն միավորների սահմանները լիովին համապատասխանում են նախադասութեան կազմի մէջ մտնող բառաձևերի սահմանների հետ, ինչպես Վ. Ա. Քոսյանն է նշում, «նախադասութեան մէջ յուրաքանչյուր կազմիչ պատասխանում է մի հարցի», (Վ. Քոսյան, 1976, էջ 32):

Իսկ ինչպե՞ս վարվենք այն դեպքերում, երբ նախադասութեան մէջ շարահիւսական ինքնուրույն միավորը կարող է կազմված լինել ոչ թե մեկ, այլ երկու և ավելի բառաձևերից: Ավելի որոշակի՝ քանի որ մենք քննում ենք NV կառույցը, ապա նախադասութեան անդամ կարող է լինել այդ կառույցի որոշ գրաւորումներ (տե՛ս վերեւում), մասնավորապես հարադիր բայերը:

Ինչ վերաբերում է վերջին հարցին, ապա, թեւե նախադասութեան անդամները, կադապարը գինամիկ կադապար է, հարադիր բայերի սահմանադատումը կատարվում է ստատիկ կադապարների միջոցով: Նախապես, կուտակված փորձի կամ առանձին աղիւսակների հիման վրա, պարզվում է նախադասութեան մէջ հարադիր բայի առկայութիւնը, իսկ աշխուհետե, ստորոգյալին վերաբերող հարցը տրվում է ոչ թե բայական բադադրիչին, այլ ամորոջը N < V կառուցվածքին: Այսպես օրինակ, ինքնաթիռը հաջող վայրէջք կատարեց նախադասութիւնը բոտ նախադասութեան անդամների սովորաբար վերլուծվում է հետեւյալ կերպ. սկզբում որոշվում է ենթական (ինքնաթիռը), աշխուհետե՝ ստորոգյալը (վայրէջք կատարեց) և վերջում՝ լրացումը (հաջող):

Իերած օրինակը հանգեցնում է հետեւյալ խնդրին՝ ինչպես կիրառել նախադասութեան անդամների կադապարը, երբ նախադասութեան անդամների սահմանները չեն համընկնում նախադասութեան կազմի մեջ մտնող բառաձեւերի սահմանների հետ, այլ կերպ ասած՝ երբ նախադասութեան մեջ ի հայտ են գալիս բաղմարայադրիչ կառույցների, վերջում չէլած իմաստով, դինամիկ առանձնահատկութիւնները:

Նախ անհրաժեշտ է նկատի ունենալ այն, որ լեզվարանական ցանկացած կադապար, այնուամենայնիւ, մասնակադապար է և նկարագրում է լեզվական երեւոյթը այս կամ այն հայեցակետով: Այդ պատճառով որեւէ լեզվարանական կադապար կիրառելիս միշտ էլ ծագում են հարցեր, որոնք դուրս են մնում տվյալ կադապարի նկարագրական հնարավորութիւններից: Նման դեպքերում ընդունված է ասել, թէ ընտրած կադապարի բացատրողական ուժն անբավարար է այդ կարգի երեւոյթները նկարագրելու համար:

Փորձենք կիրառել աւմիջական բադադրիչների կադապարը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անմիջական բադադրիչների կադապարը հայ մասնագիտական գրականութեան մեջ բավարար չափով լուսաբանված է, ինչպես նաեւ ժամանակակից հայերենի բայական բուսակապակցութիւնների նկարագրման համար աւմիջական բադադրիչների կադապարի կիրառումն վերաբերյալ համապատասխան սկզբունքներ մշակելու նպատակով, աշխատանքի այս հատվածում ներկայացնենք անմիջական բադադրիչների կադապարը (Ն. Խոմսկի, 1962, էջ 412-527) և քննարկենք արտածման կանոնների դրսեորումները խամանակակից հայերենում: Կադապարը կիրառելիս առանձնակի ուշադրութիւն դարձնենք ժամանակակից հայերենի հարաւիր բայերի քննութեանը:

Անմիջական բադադրիչների կադապարը կարելի է ներկայացնել <Σ, F> համակարգի տեսքով, որտեղ Σ -ն որոշ կարգի տարրերի վերջավոր բաղմութիւն է, իսկ F -ը այդ բաղմութեան վրա որոշված արտածման կանոնների վերջավոր բաղմութիւն է: Σ բաղմութիւնը միավորում է երկու չհատվող բաղմութիւններ՝ ծայրագույն տարրերի բաղմութիւնը և ոչ-ծայրագույն տարրերի բաղմութիւնը: F բաղմութեան յուրաքանչիւր տարր ունի p → q տիպը, որտեղ p -ն և q -ն Σ բաղմութեան տարրեր են: Արտածման կանոնների p → q տիպը գուցէ է տալիս, որ Σ բաղմութեան տարրերի կցումից առաջացած ցանկացած շղթայում կամայական p տարր թույլատրված է փոխարինել q տարրով: Σ բաղմութեան նման երկատման դեպքում, բնականաբար, յուրաքանչիւր արտածման կանոնի ձախ կողմում կարող են տեղ գրավել միայն ոչ ծայրագույն տարրեր, այնինչ սլաքից աջ կարող են լինել թէ՛ ոչ-ծայրագույն և թէ՛ ծայրագույն տարրեր: Եթէ ոչ ծայրագույն տարրերից մեկը (կամ մի քանիսը) ընդունենք իբրեւ նշանակատալին, ապա

նրա երկատուումով կստանանք ծալրագույն կամ ոչ ծալրագույն տարրերի համակցություն՝ դրանց գծային դասավորության գեպքում՝ չրդթա, որն անվանենք արտածման շղթա: Այնհայտ է, որ արտածման շրջալում ոչ ծալրագույն տարրերի առկայության գեպքում կարող ենք կիրառել որեւէ արտածման կանոն, որը կհանդիպի մի նոր արտածման շղթայի: Ոչ ծալրագույն տարրերի երկատման պրոցեսը դրաֆիկորեն կարելի է պատկերել ծառի տեսքով, որը 'լուծվում է արտածման ծառ:

Հ_Σ, F> համակարգի լավագույն բնութաման գեպքում՝ առաջին, պետք է բացակայի արտածման կանոնների ցիկլայնությունը՝ ալիսինքն, արտածման ծառի ճյուղերը չպետք է կոնտուրներ կազմեն, և երկրորդ՝ բանի գեռաբնածման շղթան պարունակում է նույնիսկ մեկ ոչ ծալրագույն տարր, ապա արտածման կանոնների համախմբում պետք է գտնվի առնչվազն մեկ կանոն այդ ոչ ծալրագույն տարրի երկատելու համար:

Վերջին պահանջը բավարարելու գեպքում արտածման բնթացքում ստացվում է մի պահ, երբ արտածման շղթան բաղկացած է լինում միայն ծալրագույն տարրերից, ալիսինքն՝ արտածման շղթան վերածվել է ծալրագույն արտածման շղթայի:

Բացառված չէ այն դեպքը, երբ արտածման կանոնների կիրառման տարրեր հաջորդումների գեպքում կարող են ստացվել տարրեր ծալրագույն շղթաներ, թեև մասնագիտական գրականության մեջ գերիշխում է այն կարծիքը, թե ծալրագույն շղթալում տարրերի հաջորդման կարգը կախված չէ արտածման կանոնների կիրառման հաջորդականությունից:

Անմիջական բաղադրիչների կաղապարի վերաբերյալ այս համառոտ մուտքը բավարար է, որպեսզի կոնկրետ օրինակների օգնությամբ ցուցադրենք անմիջական բաղադրիչների քերականության աշխատանքը (օրինակ փոխառնված է Ն. խոմսկու նշված աշխատությունից):

Դիցուք տրված է Հ_Σ, F> համակարգ*, որտեղ

$$\Sigma = \left\{ \begin{array}{l} \text{Sentence,} \\ \text{NP, VP,} \\ \text{T, N} \\ \text{Verb,} \\ \text{man, ball, hit} \end{array} \right\} \quad F = \left\{ \begin{array}{l} \text{Seuteuce} \rightarrow \text{NP} + \text{VP} \\ \text{NP} \rightarrow \text{T} + \text{N} \\ \text{VP} \rightarrow \text{Verb} + \text{NP} \\ \text{T} \rightarrow \text{the} \\ \text{N} \rightarrow \text{man. N} \rightarrow \text{ball} \\ \text{Verb} \rightarrow \text{hit} \end{array} \right\} \quad \begin{array}{l} \text{I} \\ \text{II} \\ \text{III} \\ \text{IV} \\ \text{V} \\ \text{VI} \end{array}$$

Սերման առաջին փուլում կկիրառենք Seuteuce NP VP արտածման կանոնը և ելակետային Seuteuce ոչ ծալրագույն տարրի փոխարեն կստանանք NP և VP ոչ ծալրագույն տարրերի համակցությունը: Արտածման հաջորդ փուլում մենք հնարավորություն ունենք կիրառելու

* Ն. խոմսկու նշված աշխատության մեջ Σ բաղմության տարրերի համակցությունը տրվում է ֆնչանով:

երկու արտածման կանոն. 1) NP $\rightarrow$ T + N և 2) VP $\rightarrow$ Verb + NP, այնպես երկրորդ կամ երրորդ արտածման կանոնները, ինչ հաջորդմամբ բերված են F բաղադրության մեջ: Այնուհետև կարտասենք NP, VP և այլ ոչ ծալրագույն տարրերը, որոնք գոյանում են արտածման ընթացքում: Ստորև բերվում է ընտրված <Σ, F> համակարգի օգնությամբ ծալրագույն չդթայի սերման տարրերակներից մեկը: Յուրաքանչյուր արտածման կանոնի կիրառումից ստացված արդյունքը տրված է առանձին տողով, որտեղ նշված է նաև տվյալ կանոնի հերթական համարը:

Աղյուսակ 2

Արտածման փուլը	Արտածման արդյունքը	Արտածման կանոնը
1	NP + VP	I
2	T + NP + VP	II
3	T + N + Verb + NP	III
4	the + N' + Verb + NP	IV
5	the + man + Verb + NP	V
6	the + man + hit + NP	VI
7	the + man + hit + T + N	II
8	the + man + hit + the + N	IV
9	the + man + hit + the + ball	V

Տրված <Σ, F> համակարգի օգնությամբ արտածած ծալրագույն չդթան the man hit the ball նախադասությունն է, որը, ինչպես երևում է, բաղկացած է միայն ծալրագույն տարրերից:


Այստեղ անհրաժեշտ է անել հետևյալ դիտողությունը (այն պարզ կդառնա քննության ընթացքում)՝ անմիջական բաղադրիչների կապապարի բացատրողական ուժն ավելի մեծ է քան նախադասության անդամների կապապարի, սակայն անմիջական բաղադրիչների կաղապարը գերծ է թերությունից: Անմիջական բաղադրիչների կաղապարի հիմնական թերությունն այն է, որ այդ կաղապարի օգնությամբ կարելի է նաև լերել նախադասություններ, որոնք կարող են ընդունելի չլինել տվյալ լեզվի համար: Այսպես օրինակ, մեր կողմից դիտարկած <Σ, F> համակարգի օգնությամբ բացի the man hit the ball նախադասությունից, կարելի է սերել the man hit the man (երբ N → ball ար-

տաժման կանոնի փոխարեն կիրառենք $N \rightarrow \text{man}$ արտածման կանոնը),
 *the ball hit the ball (երբ $N \rightarrow \text{man}$ արտածման կանոնի փոխարեն կիրառենք $N \rightarrow \text{ball}$ կանոնը) և, վերջապես, *the ball hit the man (երբ արտածման $N \rightarrow \text{man}$ կանոնի փոխարեն կիրառենք $N \rightarrow \text{ball}$ կանոնը, իսկ $N \rightarrow \text{ball}$ կանոնի փոխարեն՝ $N \rightarrow \text{man}$ կանոնը) ծալրագույն չղթաները, որոնք կարող են բնդուենելի չլինել ժամանակակից անդլերենի համար:

Սակայն նշենք, որ ներկա աշխատության մեջ նպատակ չունենք խոսելու անմիջական բաղադրիչների կազմարարների թերությունների մասին, մանավանդ, երբ դրանք չեն խանգարում մեր հիմնական խնդրի լուծմանը: Անմիջական բաղադրիչների կազմարարների օգնությամբ ժամանակակից հայերենի բալական կապակցությունների քննության քննադրում մենք առավել ուշադրություն կդարձնենք ժամանակակից հայերենի բալական հարադրությունների վերլուծությանը՝ նպատակ ունենալով մշակել ու նկարագրել ձևային հայտանիշներ, որոնց օգնությամբ բալական հարադրական բարդությունները կտարբերակվեն սովորական անուն – բայ բառակապակցություններից: Եվ քանի որ վերևում մենք քննեցինք NV կառույցի բոլոր դրսևորումները ժամանակակից հայերենում, ապա մեր առջև ծառացած խնդիրը ճշգրիտ կերպով կարող ենք ձևակերպել այսպես. ունենալով բայի ու դոլականի դուզորդության ժամանակակից հայերենում բոլոր հնարավոր դրսևորումները, մշակել ձևային հայտանիշ NV կառույցի հարադրային և ոչ հարադրային դրսևորումները տարբերակելու համար:

Փորձենք տալ մի քանի տեսական դրույթներ:

Նախ ճշգրտենք անմիջական բաղադրիչների քերականության սահմանումը: Վերևում ներկայացրինք անմիջական բաղադրիչների քերականության օգնությամբ the man hit the ball ծալրագույն չղթանի սերման պրոցեսը: Նշեցինք, որ սովորաբար չղթաների սերման ընթացքը ներկայացվում է գրաֆիկորեն, որն անվանվում է արտածման ծառ: The man hit the ball ծալրագույն չղթայի արտածման ծառը կունենա հետևյալ տեսքը



Հիշեցնենք, որ յուրաքանչյուր ծառ իրենից ներկայացնում է հարթ
դրամի, եթև

ա) ցանկացած հանդույց, բացի մեկից, որն ընդունում է իրրե ար-
մատ, մանում է միայն մեկ աղեղ,

բ) արմատ աղեղ չի մտնում,

դ) հանդույցների ու աղեղների միացությունը փակ չլիճաներ չեն կոչ-
վում:

Այսպիսով՝ ցանկացած կամայական ծառ կհանդիսանա անմիջական
բաղադրիչների փերականոթյան արտաման ծառ, եթև այդ ծառի հան-
դույցները փոխարարվեք համապատասխանությամբ մեծ դրվի <Σ, F> համա-
կարգի բաղմության տարրերին (արմատը համապատասխանությամբ մեծ
է դրվում էյակկետային տարրի հետ) աշխատ, որ հանդույցներից դուրս
եկող աղեղները փոխարարվեք համապատասխանությամբ մեծ դրվեն Σ
բաղմության տարրերի հետ: (The man hit the ball նախադասությամբ
արտաման ծառի վրա, որը բերված է նկարում, ակնհայտուեն երևում
են թև ծալրադույն, և թև ոչ ծալրադույն հանդույցները, Σ բաղմութ-
յունից ալդ հանդույցներին փոխարարվեք համապատասխան տարրե-
րը, ինչպես նաև աշխատ արտաման կանոնները, որոնք կիրառվել են արվ-
յալ ոչ ծալրադույն տարրերի երկու ման համար):

Անմիջական բաղադրիչների <Σ, F> փերականոթյան ու արտաման
ծառի համեմատումը քույց է տալիս, որ անմիջական փերականոթյան օգ-
նությամբ նախադասությամբ նկարադրության գեղարվում արտաման ծառի
ծալրադույն հանդույցները փոխարարվեք համապատասխանությամբ մեծ են
դրվում լեզվի բառաշանային միավորների հետ, իսկ ոչ ծալրադույն
հանդույցները՝ բառախմբերի ու բառակապակցությունների հետ: Եյա-
կետային տարրը և նրան համապատասխան ծառի արմատը նույնանում
են լեզվական աշխատ միավորների հետ, որի արտաման (կամ նկարադր-
ման) համար նախատեսված է տվյալ կաշտարար: Այսպես, եթև անմի-
ջական բաղադրիչների կաղապարը նախատեսված է նախադասությամբ
արտաման համար, ապա ծառի արմատը նույնանում է նախադասութ-
յամբ համապատասխանությամբ մեծ գտնվող ոչ ծալրադույն տարրե-
րի հետ, իսկ եթև անմիջական բաղադրիչների փերականոթյունը նա-
խատեսված է բառակապակցությունների արտաման համար, ապա ար-
տաման ծառի արմատը նույնանում է բառակապակցությունների հետ
համապատասխանությամբ մեծ գտնվող ոչ ծալրադույն տարրերի հետ
և աշխատ

Նշառի սահմանումից բխում է, որ միեննույն մակարդակի երկու
(կամ ավելի) հանդույցներից սկիզբ առնող ենթածառերը արմատից ա-
վելի հեռացված մակարդակներում հատումներ չեն ունենա: Սա կա-
րեք դրույթ է, որը թույլ է տալիս կատարել սերման հակադարձ

գործողություններն՝ տրված նախադասություն (կամ որեւէ այլ լեզվական միավորի) համար կազմել նրա անմիջական բաղադրիչների համակարգը։

Իսկ ի՞նչն է կազմում տվյալ լեզվական միավորի անմիջական բաղադրիչների համակարգը։ Այդ կապակցությունը է. Վ. Պադուչեան գրում է. «Անմիջական բաղադրիչների համակարգ է նախադասության հատումների ցանկացած բազմությունը, որտեղ 1) գոյություն ունի մի հատում, որ համընկնում է ամբողջ նախադասության հետ, և գոյություն ունեն հատումներ, որ համընկնում են այդ նախադասության յուրաքանչյուր բառի հետ, 2) ոչ մի ցանկացած երկու հատում չեն կարող մասնակիորեն կրկնաձայնակել, (է. Պադուչեան, 1964)։

Նախադասության անմիջական բաղադրիչների համակարգի ավելի ճշգրիտ սահմանում տրվել է Ա. Վ. Գլադկու կողմից «Формальные грамматики и формальные языки» աշխատության մեջ։ Հեղինակը գրում է. «X շղթայի (մասնավորապես կարող ենք բնութենել իրեն նախադասություն Ռ. Ու.) հատումների C բազմությունը կհամարվի այդ շղթայի անմիջական բաղադրիչների համակարգ, եթե այն բավարարում է հետեւյալ երկու պայմաններին՝

ա) C բազմությունը պարունակում է 1) հատում, որ կազմված է շղթայի բոլոր կետերից (այսինքն՝ բնագրվում է ամբողջ նախադասություն՝ Ռ. Ու.), 2) հատումներ, որ կազմված են X շղթայի մեկանդամանոց միավորներից (որոնք համապատասխանության մեջ են դրվում նախադասության կազմի մեջ մտնող բառերի հետ՝ Ռ. Ու.),

բ) ցանկացած երկու հատում՝ վերցրած C բազմությունից, կամ չեն կրկնաձայնակում, կամ մեկը պարունակվում է մյուսի մեջ, (Ա. Գլադկի, 1973, էջ 254)։

Նախադասության անմիջական բաղադրիչների համակարգի վերջին բնորոշումը թույլ է տալիս այդ համակարգի ծառերի տեսքով ներկայացման եղանակից անցնել ներկայացման վերլուծական եղանակի։ Դրա համար 1) անհրաժեշտ է ծալրադույն շղթան (ներկա դեպքում նախադասությունը) տարրալուծել ենթաշղթաների, որոնք համընկնելի լինեն նախադասության բնորոշված Σ բազմության տարրերին, 2) յուրաքանչյուր անջատված ենթաշղթան ներառել ձախից բացվող և աջից փակվող փակագծերի մեջ։ Նշված եղանակով տարրալուծված շղթայի մեջ Σ բազմության տարրերին համընկնող հատվածները ներառնող փակագծերը անվանենք նույնանիշ փակագծեր և դրանց վերագրենք $a \in R$, որտեղ R -ը բնական թվերի բազմություն է։


Առաջին հայացքից թվում է, եթե նախադասության արտածման ծառը տրված է, ապա այդ նախադասության անմիջական բաղադրիչների համակարգի կառուցումը հեշտ գործ է։ Բանն այն է, որ մենք հեշտությամբ կարող ենք ներառել նույնանիշ փակագծերի մեջ ծալրա-

դու չես չղթալի ալն հատումները, որոնք համընկնելի են միայն Σ բաղ-
մության ծալրագույն տարրերին: Ոչ ծալրագույն տարրերի սահմանադա-
ման համար անհրաժեշտ է $\langle \Sigma, F \rangle$ քերականության օգնությամբ սերել տը-
րված նախադասության համընկնելի ծալրագույն չղթա: Այս աշխա-
տանքը, թեև չառ աշխատատար է, կատարելի է վերջավոր փուլերի ըն-
թացքում: Աշխատանքային քայլերի վերջավորությունը թույլ է տա-
լիս խնդրի լուծման համար կիրառել էլեկտրոնային հաշվողական մե-
քենաներ (Ս. Կուչու, 1962): Այսպես թե աշխատել, եթե արդեն ունենք
նախադասության արտածման ծառը, ապա նրա անմիջական բաղադրիչ-
ների համակարգը կարելի է ստանալ հետևյալ ալգորիթմի օգնությամբ:

1°. Նախադույն չղթալի արտածման ծառի հանդույցները, սկսած
արմատից, փոխմիարժեք համապատասխանության մեջ դնել ընական
թվերի բաղմության տարրերի հետ: Այլ կերպ ասած՝ սկսած արտած-
ման ծառի արմատից համարակալել նրա բոլոր հանդույցները:

Դա առանձնապես բարդ գործողություն է, գրաֆիկների վերաբեր-
յալ մասնագիտական գրականության մեջ ներկայացված է ծառերի
հանդույցների համարակալման պրոցեդուրան իր բոլոր մանրամասներով:
Համարակալման եղանակը մեզ բոլորովին չի հետաքրքրում. գլխավորն
այն է, որ արտածման ծառի հանդույցներն ստանան տարրեր համար-
ներ:

Իբրեւ օրինակ դիտարկենք the man hit the ball նախադասության
անմիջական բաղադրիչների համակարգի կառուցումը: Կատարելով ալ-
գորիթմի 1° փուլում պահանջվող գործողությունները կստանանք հե-
տևյալ պատկերը:



2°. Արտածման ծառի յուրաքանչյուր ծալրագույն հանդույցից
գնալ դեպի արմատ. նախադասության մեջ յուրաքանչյուր բառը ներ-
առել այնքան նույնանիշ փակագծերի մեջ, որքան հանդույցով

Համապատասխան ծալրագույն հանգույցը հեռացված է արտածման-
ծառի արմատից: Նույնանիշ փակագծերին վերագրել ծալրագույն հան-
գույց-արմատ ուղու վրա գտնվող համարները:

Կիրառելով նշված պահանջը մեր կողմից քննարկվող նախադասութ-
յան նկատմամբ կստանանք հետևյալ արդյունքը՝

(((((the))))(((((man))))(((((hit))))(((((the))))))(((ball))))))

1 4 10 2 1 5 11 2 1 6 11 3 1 7 13 8 3 1 7 14 9 3
2 10 4 1 2 11 5 1 3 11 6 1 3 8 13 7 1 3 9 14 7 1

Ստացված արդյունքից պարզ երևում է, որ նույնանիշ փակագծե-
րի քանակը ավելի շատ է, քան անհրաժեշտ է, և հիմնականը՝ բացակա-
յում են այն նույնանիշ փակագծերը, որոնք ներառելու են բառախմբեր
կամ բառակապակցություններ: Այդ նշանակում է, որ ստացված արդ-
յունքը անհրաժեշտ է վերամշակել, որպեսզի նախ կրճատվի կրկնվող
նույնանիշ փակագծերի քանակը (մինչև մեկի), իսկ այնուհետև, ըս-
տացվեն նոր նույնանիշ փակագծեր, որոնք կրնդ դրկեն ավելի մեծ,
քան բառերն են, լեզվաչան միավորներ: Այնչափ է, որ ծալրագույն
շղթայի այդպիսի հատումները համընկնելի են արտածման ծառի ոչ
ծալրագույն հանգույցներին:

3⁰. Ուսլրագույն շղթան հատույթավորող փակագծերից հեռացնել
այն կից փակագծերը. (կից անվաննք փակվող է բացվող փակագծե-
րը), որոնք ստացել են միեւնույն կարգային համարը:

Այդորիթմի այս փուլից հետո ծալրագույն արտածման շղթայի վը-
րա կառանձնացվեն փակագծեր, որոնք կներառեն <Σ, F> համակարգի
ոչ ծալրագույն տարրերին համընկնելի հատույթներ: Այսպես, եթե նըշ-
ված գործողությունը կիրառենք նախորդ փուլում ստացված արդյուն-
քի նկատմամբ, ապա կստանանք հետևյալը՝

(((((the)))((man)))((hit))((the)))((ball))))

1 4 10 5 11 2 6 12 7 13 8 14 9 3
2 10 4 11 5 3 12 6 8 13 9 14 7 1

Այժմ մեզ մնում է ստացված արդյունքից հեռացնել մեկից ավե-
լի նույնանիշ փակագծերը:

4⁰. Եթե ծալրագույն շղթայի որեէ հատույթ ներառված է մեկից
ավելի նույնանիշ փակագծերի մեջ, ջնջել, թողնելով միայն մեկը:

Մեր կողմից քննարկվող օրինակում ստացվել է անպես, որ ծալ-
րագույն շղթայի բոլոր ծալրագույն տարրերը ներառված են երկուս-

կան նույնանիշ փակագծերի մեջ, Հետեաբար ալգորիթմի չորրորդ կետի պահանջը բավարարելու դեպքում մեկական փակագծեր կհեռացվեն:

((((the))((man)))((hit))((the))((ball))))

1 4 10 5 11 2 6 12 7 13 8 14 9 3
2 10 4 11 5 3 12 6 8 13 9 14 7 1



((the)(man))((hit))((the)(ball)))

1 4 4 5 5 3 6 8 8 9 9 3
2 2 6 7 7 1

Այսպիսով, ստացված վերջնական արդյունքում ներկայացված է նախադասության անմիջական բաղադրիչների համակարգը: Այն լիովին համապատասխանում է նախադասության անմիջական բաղադրիչների համակարգի վերեւում տրված բնորոշումներին: Այսպես՝ բոլոր ծայրագույն տարրերը (նախադասության կաղմի մեջ մտնող բառերը) առանձնացված են նույնանիշ փակագծերով (the -4-4, mem -5-5, hit -6-6, the -8-8, ball -9-9), ծայրագույն շղթայի այն հատույթները, որոնք համընկնելի են <Σ, F> համակարգի ոչ ծայրագույն տարրերին, նույնպես առնված են նույնանիշ փակագծերի մեջ (NP 2-2, NP 7-7, VP 3-3), և վերջապես ամբողջ նախադասությունն առնված է 1-1 նույնանիշ փակագծերի մեջ:

Վերջին գործողությունը, որ կկիրառենք, օժանդակ գործողություն է և ունի լուր տեխնիկական նշանակություն: Բանն այն է, որ ծայրագույն շղթան հատույթավորող փակագծերի համալրները կարող են չկազմել բնական թվերի հաջորդականություն: Դրա համար բնական թվերի բազմությունից անհրաժեշտ է վերցնել 1, 2, 3, ..., հաջորդական թվերը և ծայրագույն շղթայում գնալով ձախից աջ դուրանք վերագրել բոլոր բացվող փակագծերին, իսկ այնուհետև, օգտվելով նույնանիշ փակագծերի հատկություններից վերահամարակալել բոլոր փակվող փակագծերը:

Այսպես՝

((the)(man))((hit))((the)(ball)))

1 4 4 5 5 3 7 9 9 3
2 2 6 6 8 8 7 1



↓

1

(the) (man) (hit) (the) (ball)

1	1	1	1	1	1	1	1	1	1
2	2	2	2	3	3	3	3	3	3
4	4	5	5	6	6	7	7	7	7
10	10	11	11	12	12	8	8	9	9
						13	13	14	14



(the) (man) (hit) (the) (ball)

1	4	5	2	3	6	7	8	9	1
2	10	11	5	6	12	8	13	14	3
4			11	12		13			7
10									9
									14



(the) (man) (hit) (the) (ball)

1	4	5	2	3	6	7	8	9	1
2			5	6		8			3
4									7
									9



(((the) (man)) (hit) (the) (ball)))

124	4	5	5	2	3	6	6	7	8	8	9	9731
-----	---	---	---	---	---	---	---	---	---	---	---	------

ընկնող նախադասություն, կատարվում է բերականության ճշգրտում, բանի որ տվյալ նախադասությունը արված բերականությամբ նկարագրելի է: Իհա, կե, հարավոր է, որ ինչ նախադասության համար կազմվի մեկից ավելի համընկնող նախադասություններ: Այդ կնշանակի, որ նախադասությունը արված բերականության օգնությամբ կունենա նույն բանի վերլուծություն:

Կործնականում կիրառվող բոլոր անմիջական բաղադրիչների բերականությամբ, նախադասության շարահյուսական վերլուծության համար նախատեսված համակարգերի հիմքը կազմում է այդ բերականության դասակարգումը: Եվ վերջինի մեջ նույնանիշ փակագծերի բացակայությունը խիստ դժվարացնում է նման բերականությունների կիրառումը: Այդ նկատառումով հարկ ենք համարում ներկայացնել անմիջական բաղադրիչների բերականության ձևաչափված տարբերակը, որը հարմար է կիրառել նախադասությունների շարահյուսական վերլուծության նպատակներով: Ձևափոխությունները հիմնականում ունեն հետևյալ տեսք՝ նախ, Σ բազմություն մեջ ներառում ենք I ոչ ծայրագույն տարր, որը համարվում է լեզվական միավորի սերման կյակտալին տարր: Այն իր համարմեքը չունի բնական լեզվում և կախված $\langle \Sigma, F \rangle$ բերականության նպատակից, հատուկ արտածման կանոնի օգնությամբ, այն փոխակերպվում է տվյալ միավորի: Այսպես օրինակ, եթե $\langle \Sigma, F \rangle$ բերականությունը նախատեսված է նախադասության շարահյուսական վերլուծության համար, ապա F բազմության մեջ նախատեսված կլինի I $\rightarrow$ Sentence արտածման կանոնը, որը I ոչ ծայրագույն միավորը վեր է ածում Sentence ոչ ծայրագույն միավորի: $\langle \Sigma, F \rangle$ բերականության հետագա կիրառությունը կատարվում է այնպես, ինչպես ներկայացվեց վերևում:

Այնուհետև, արտածման կանոններում ջնջում ենք + նշանը և սրբաքից աջ գրված արտահայտություններում յուրաքանչյուր ոչ ծայրագույն տարրի ներառում ենք նույնանիշ փակագծերի մեջ:

Նշված ձևափոխություններից հետո անմիջական բաղադրիչների համակարգը կունենա հետևյալ տեսք՝

$$\Sigma = \left\{ \begin{array}{l} I, \\ \text{Sentence,} \\ \text{VP, NP, Verb, T,} \\ \text{man, ball, hit, the} \end{array} \right\}, F = \left\{ \begin{array}{l} I \rightarrow (\text{Sentence}), \\ \text{Sentence} \rightarrow (\text{NP}) (\text{VP}), \\ \text{NP} \rightarrow (\text{T}) (\text{N}), \\ \text{VP} \rightarrow (\text{Verb}) (\text{NP}), \\ \text{N} \rightarrow \text{man, N} \rightarrow \text{ball,} \\ \text{Verb} \rightarrow \text{hit, T} \rightarrow \text{the} \end{array} \right\}$$

Այժմ, եթե ցանկանում ենք ստանալ նախագա ության անմիջական բաղադրիչների համակարգը, անհրաժեշտ է $I \rightarrow (\text{Sentence})$ կյակտալին

կանոնից, իսկ այնուհետև արտածման շղթայի ոչ ծալրագույն տարրերին համապատասխան F բազմությունից բնորոշ ու կիրառելի այն արտածման կանոնները, որոնք կրկրեն քննվող նախադասությանը համընկնող նախադասության արտածմանը:

Այսպես, եթե ձևափոխված $\langle \Sigma, F \rangle$ համակարգը կիրառենք the man hit the ball նախադասության անմիջական բաղադրիչների համակարգը կազմելու համար, ապա կստանանք հետևյալ պատկերը (տես աղյուսակը)։

Աղյուսակ 3

Արտածման կանոնը

Ստացված արդյունքը

1	$I \rightarrow (\text{Sentence})$	
2	$\text{Sentence} \rightarrow (\text{NP})(\text{VP})$	$((\text{NP})(\text{VP}))$
3	$\text{NP} \rightarrow (\text{T})(\text{N})$	$(((\text{T})(\text{N}))(\text{VP}))$
4	$\text{VP} \rightarrow (\text{verb})(\text{NP})$	$(((\text{T})(\text{N}))((\text{verb})(\text{NP})))$
5	$\text{T} \rightarrow \text{the}$	$(((\text{the})(\text{N}))((\text{verb})(\text{NP}))))$
6	$\text{N} \rightarrow \text{man}$	$(((\text{the})(\text{man}))((\text{verb})(\text{NP})))$
7	$\text{verb} \rightarrow \text{hit}$	$(((\text{the})(\text{man}))((\text{hit})(\text{NP})))$
8	$\text{NP} \rightarrow (\text{T})(\text{N})$	$(((\text{the})(\text{man}))((\text{hit})((\text{T})(\text{N}))))$
9	$\text{T} \rightarrow \text{the}$	$(((\text{the})(\text{man}))((\text{hit})((\text{the})(\text{N}))))$
10	$\text{N} \rightarrow \text{ball}$	$(((\text{the})(\text{man}))((\text{hit})((\text{the})(\text{ball}))))$

Ստացված արդյունքը նախորդի հետ համեմատելու համար մեզ մնում է ծալրագույն արտածման շղթայի մեջ, ձախից սկսած, յուրաքանչյուր նույնանիշ փակագիծ համապատասխանության մեջ դնենք R բազմության (R-ը բնական թվերի բազմությունն է) տարրերի հետ՝
 $(((\text{the})(\text{man}))((\text{hit})((\text{the})(\text{ball}))))$

1 2 3 3 4 4 2 5 6 6 7 8 8 9 9 7 5 1

Այն հայտորեն երևում է, որ երկու տարրեր այդորիթմներով ստացված արդյունքները լիովին համընկնում են:

Քննենք $\langle \Sigma, F \rangle$ համակարգի կիրառման հետ կապված մի հարց էս: Վերևում նշվեց, որ Σ բազմությունը միավորում է ոչ ծալրա-

զույն և ծայրագույն տարրեր, որոնցից ոչ ծայրագույնները տաճարային ևն, իսկ ծայրագույնները՝ ոչ: Այդ նշանակումն է որ Շրագմության ցանկացած տարր ունի բաղկացվածություն կամ ոչ բաղկացվածություն հատկանիշ, տվյալ դեպքում ոչ ծայրագույն տարրերը ունեն բաղկացվածություն, իսկ ծայրագույն տարրերը՝ ոչ բաղկացվածություն հատկանիշ: Միեւնույն ժամանակ, քանի որ արտածման կանոնները կիրառվում են Շրագմության տարրերի նկատմամբ այնպես, որ ստացված արդյունքը նույնպես պատկանում է Շրագմությանը, ապա Շրագմության տարրերը, բացի եղակետային I տարրից, կունենան նաև պարունակման հատկանիշ, այսինքն՝ պարունակվում են այս կամ այն տարրի, ավելի ճշգրիտ՝ ոչ ծայրագույն տարրի մեջ: Եթե ընդունենք, որ Շրագմության թե՛ ծայրագույն և թե՛ ոչ ծայրագույն տարրերը զուրկ են հաշվական հատկանիշից, այսինքն՝ ունեն ոչ հաշվական հատկանիշ, ապա գոյաբանական կարգերի: ըստ Գ. Բ. Ջահուկյանի դասակարգման (Գ. Ջահուկյան, 1974, էջ 25), այդ տարրերը պետք է դասակարգվեն կախում և կազմի (որակի) կարգերով: «Գոյաբանական այս կարգերը (քանակ, կազմ (որակ), կարգ, կախում, չափ, տեղ, ձև և այլն՝ Բ. Ու.) հավասարապես կիրառելի են ոչ միայն բովանդակություն, այլև արտահայտություն պլանների նկատմամբ, որովհետև արտահայտության պլանը ոչ այլ ինչ է, եթե ոչ իրական աշխարհի մի մասնակի դրսևորումը» (Գ. Ջահուկյան, 1974, էջ 27):

Տեղին է նկատել, որ պրոֆ. Գ. Բ. Ջահուկյանի այս պնդումից կարելի է բխեցնել մեզ համար շատ կարևոր մի դրույթ, որը կենսակերպնք հետեյալ կերպ. լեզվական յուրաքանչյուր երեույթ անհրաժեշտ է քննել լեզվի այն մակարդակում, որտեղ այդ երեույթը տեղի ունի: Մասնավորապես, եթե նպատակամղվում ենք քննել նախագասություն մեջ առանձին բառաձևերի միջև եղած կապը, ապա իբրեւ քննություն այն օբյեկտ կարող ենք բնութել բառային մակարդակը, իսկ եթե ցանկանում ենք քննել բառակապակցությունների միջև եղած կապը, ապա այդ քննությունը անհրաժեշտ է կատարել այն մակարդակում, որտեղ բառակապակցությունները հանդես գան իբրեւ ծայրագույն տարրեր:

Կախում գոյաբանական կարգը, ինչպես նշվեց վերեւում, բնորոշվում է ոչ բաղկացված հատկանիշով, մինչդեռ բառային մակարդակում բառակապակցությունները կունենան բաղկացվածության հատկանիշ: Նույն բանը հավասարապես վերաբերում է նաև հարադիր բայերին:

Իթե ծայրագույն արտածման շղթայի կազմող տարրերին վերագրվում է կախումնայնության կարգ, ապա, բնական է, որ արտածման կանոններում ծայրագույն և ոչ ծայրագույն տարրերը նույնպես

գտնվելին կախումնային հարաբերություն մեջ: Այդ հարաբերությունը բացահայտելու նպատակով դիտարկենք համակարգը F բաղադրության յուրաքանչյուր տարր ընդհանուր ձևով ունի $P \rightarrow Q$ տեսք, որտեղ P -ն ոչ-ծայրագույն տարր է, Q -ն կամ մեկ ծայրագույն կամ ոչ-ծայրագույն տարր է, կամ երկու տարրերի համակցություն, որոնք P -ի անմիջական բաղադրիչներն են:

Պարզության համար ընդունենք, որ Q -ն հանդիսանում է Q_1 և Q_2 տարրերի համակցություն: Այդ Q_1 և Q_2 բաղադրիչները, համաձայն գոյարանական կարգերի դրսևորման, պետք է գտնվեն միմյանցից որոշ կարգի կախման մեջ: Այդ նշանակում է, որ արտածման ծառի ցանկացած մակարդակում այդ բաղադրիչները հանդես են գալիս փոխադարձ պայմանավորված ձևով: Կարող ենք պնդել և հակառակը՝ երկու միավոր կազմում են մեկ այլ միավորի անմիջական բաղադրիչները, եթե նրանց հանդես գալիս արտածման շղթայում փոխպայմանավորված է: Հեղեաբար, Q_2 -ի հանդես գալիս ֆունկցիա է Q_1 -ի հանդես գալուց, և, հակադարձաբար, Q_1 -ի հանդես գալիս գտնվում է որոշ կարգի ֆունկցիոնալ կախման մեջ Q_2 -ի հանդես գալուց:

Սա համահունչ է $\langle \Sigma, F \rangle$ անմիջական բաղադրիչների քերականությանը սերած ծայրագույն շղթայի $Q_2 \in \Sigma$ տարրերի միջև կապը, որով պայմանավորվում է միմյանցից կախված հանդես գալիս, անվանենք շարակարգային ֆունկցիա:

Եթե խոսքը վերաբերում է նախադասության մեջ բառերի փոխկապվածությանը, ապա առաջին հայացքից թվում է, թե մեր կողմից տրված շարակարգային ֆունկցիայի սահմանումը նույնանում է Լ. Ս. Բարխուդարովի կողմից տրված շարահյուսական ֆունկցիայի սահմանման հետ:

Միամանակակից անդերևն լեզվի պարզ նախադասության կառուցվածքը, աշխատության մեջ Լ. Ս. Բարխուդարովը գրում է. «Բառերի կամ բառախմբերի միջև շարահյուսական ֆունկցիա անվանենք այն անմիջական շարահյուսական կապը (ընդգծվում է Նախադասության մեջ, (Լ. Բարխուդարով, 1966, էջ 32): Իսկապես, եթե մեր կողմից տրված սահմանման մեջ Q_1 և Q_2 բաղադրիչները կոչենք բառեր կամ բառախմբեր, շարակարգային որոշիչը փոխարինենք շարահյուսական որոշչով, ապա թվում է, թե այդ երկու սահմանումները նույնն են: Սակայն երեւելի ավելի խոր քննությունը ցույց է տալիս, որ այդ նույնացումը թվացող է, իսկ իրականում մենք գործ ունենք ընդհանուր և մասնալի սահմանումների հետ: Լ. Ս. Բարխուդարովը անմիջական շարահյուսական կապի տակ հասկանում է անմիջական բաղադրիչների միջև եղած շարահյուսական կապը: Այդ կապակ-

գ ու թյ ա մբ ն ա գ ր ու մ է . , , անմիջական շարաՀյուսական կապ անմիջական-
 վում է շարաՀյուսական կապը երկու ա յ ն պիսի բառերի կամ բառախում-
 բերի միջև (կամ բառի ու բառախմբերի միջև), որոնք անդամատնելիս
 ըստ անմիջական բաղադրիչների, անդամատման որոշակի մակարդա-
 կում հանդիսանում են ավելի խոշոր բաղադրիչի անմիջական ըստադ-
 րիչները, (1 . Բ ա ռ խ ու դ ա ռ ո վ , 1966, էջ 31): Հետևաբար, անմիջական
 շարաՀյուսական կապը դա շարաՀյուսական ֆունկցիա է: Միաժամանակ
 աշխատության նույն տեղում բերած օրինակը մասնակիորեն է համապա-
 տասխանում տրված սահմանումներին: Այսպես, , , Այն բառերի ու բառա-
 խմբերի վերաբերյալ, - գրում է Լ . Ս . Բարխուդարովը, - որոնք ներառվում
 են նախադասության մեջ այս կամ այն շարաՀյուսական կապի շնորհիվ, կա-
 ռող ենք ասել, որ դրանք օգտագործվում են այս կամ այն շարաՀյու-
 սական ֆունկցիայով, (1 . Ս . Բ ա ռ խ ու դ ա ռ ո վ , 1966, էջ 33): Օրի-
 նակ, , , Խնթական ներառվում է նախադասության մեջ ստորոգյալի հետ
 շարաՀյուսական կապի շնորհիվ, և, հակադրաբար, ստորոգյալը ներ-
 առվում է նախադասության մեջ Լնթակալի հետ շարաՀյուսական կա-
 պի շնորհիվ: Հենց այդ պատճառով մենք ասում ենք, Gohn came տի-
 պի նախադասության մեջ Gohn բառը օգտագործված է որոշակի շա-
 րաՀյուսական ֆունկցիայով (Լնթակալի) came բառի նկատմամբ, իսկ
 came բառը օգտագործված է որոշակի շարաՀյուսական ֆունկցիայով
 (ստորոգյալի) Gohn բառի նկատմամբ, (1 . Բ ա ռ խ ու դ ա ռ ո վ , 1966,
 էջ 32-33):

Պարզենք մի հարց: Արդյո՞ք միշտ է նախադասության մեջ Լնթա-
 կալի ու ստորոգյալի հանդես գալը փոխադամանավորված: Իսկապես,
 Լ . Ս . Բարխուդարովի կողմից բերած Gohn came նախադասության
 մեջ ստորոգյալի հանդես գալը, ինչպես նշում է Հեղինակը, պայմա-
 նավորված է Լնթակալի հանդես գալով, և հակառակը, Լնթակալի հան-
 դես գալը պայմանավորված է նրանով, որ նախադասության մեջ հան-
 դես է գալու ստորոգյալը: Համաձայն տրված սահմանումների, ստորոգ-
 յալը (Լնթական) հանդիսանում է Լնթակալի (ստորոգյալի) շարաՀյուս-
 սական ֆունկցիան ըստ Լ . Ս . Բարխուդարովի սահմանման, և շարա-
 կարգային ֆունկցիան՝ ըստ մեր սահմանման: Իսկապես մասնակի դեպ-
 քում, երբ նախադասության մեջ ներառված Լնթակալական ու ստորոգ-
 յալական բառախմբերը դրսևորված են մեկական բառերով, երկու սահ-
 մանումները նույնանում են:

Փորձենք մի փոքր բարդացնել տրված նախադասությունը: Օրինակ,
 վերցնենք մեր կողմից դիտարկված The man hit the ball նախադասու-
 թյունը և պարզենք հետևյալ հարցը՝ ինչո՞վ է պայմանավորված man
 Լնթակալի և hit ստորոգյալի հանդես գալը:

Վերեւում մենք հանգամանորեն դիտարկեցինք The man hit the ball նախադասութեան սերման ընթացքը, և man ու hit բառերը սերման ոչ մի մակարդակում ավելի մեծ միավորի անմիջական բաղադրիչներ չեն: Հետեւաբար 1. Ս. Բարխուդարովի նշած շարահյուսական կապը man ու hit բառերի միջև վերանում է, և man ու hit բառերը դադարում են մեկը մյուսի շարահյուսական ֆունկցիան լինելուց: Բայց, այնուամենայնիւ, ցանկացած նախադասութեան մեջ ենթակայի ու ստորոգյալի միջև դոյություն ունի որոշակի կապ: Եւ չենք այդ կապը մեր կողմից սահմանած շարակարգային կապն է: Այն մասնակի դեպքերում, երբ նախադասութեանը բաղկացած է զուտ ենթակայից ու ստորոգյալից, շարակարգային կապը դառնում է շարահյուսական կապ:

Այս երեւոյթի բացատրութեանը պարզ է Գ. Բ. Ջահուկյանը գրում է, որ նախադասութեան համար ստորոգման առկայութեանը պարտադիր է (Գ. Ջահուկյան, 1974, էջ 343): Այդ նշանակում է, որ նախադասութեան կազմութեան համար ենթական անհրաժեշտ է, որին ստորոգման միջոցով վերադրվելու է հատկանիշ: Երբ ենթական ու ստորոգյալը նախադասութեան մեջ հանդէս են գալիս որպէս բառակապակցութեանների գերադասանդամներ, ապա ենթակային ստորոգմամբ հատկանիշի վերագրումը կատարվում է ոչ թէ ուղղակի այլ այդ բառակապակցութեանների միջև եղած շարահյուսական կապի միջոցով, որը և ենթակայի, և ստորոգյալի միջև վերափոխվում է շարակարգային կապի: Այսինքն՝ ենթակայի ու ստորոգյալի միջև շարահյուսական կապ դոյություն ունի այնքանով, որքանով դոյություն ունի շարահյուսական կապ անվանական ու բայական բառակապակցութեանների միջև: Մասնավոր դեպքերում ենթակայի ու ստորոգյալի միջև շարակարգային կապը դառնում է շարահյուսական կապ:

Հետեւաբար, միշտ էլ, որ նախադասութեան հարադրված անդամներին միջև դոյություն ունի անմիջական շարակարգային, այսինքն՝ շարահյուսական կապ: Այդ պատճառաւանդում է նրանով, որ միշտ էլ, որ նախադասութեան հարադրված անդամներ որոշ մակարդակում հանդիսանում են մեկ այլ միավորի անմիջական բաղադրիչներ: Եւ կախված այդ բառերի մակարդակային հռաւորութեանից կփոխվի շարակարգային կապը՝ առաջին կարգի, երկրորդ կարգի և այլն: Այս աշխատանքում մենք չենք անդամաւորում կարգի շարակարգային կապի վրա: Սա համաճիւղ է: Արտածման որեւէ փուլում անմիջական բաղադրիչների միջև եղած շարակարգային կապը անվանենք առաջին կարգի շարակարգային կամ շարահյուսական կապ:

Բառերի կամ բառախմբերի այն ֆունկցիան, որը պայմանավորված է շարահյուսական կապով անվանենք շարահյուսական ֆունկցիա (կամ առաջին շարակարգային ֆունկցիա):

Այսինքն՝ նախադասութեան մեջ բառերը կամ բառախմբերը կստանձնեն որեւէ շարահլուսական ֆունկցիա, եթէ գոյութիւն ունենալ բառեր ու բառախմբեր, որոնց հետ հաստատուած է շարահլուսական կապը:

Մեր կողմից սահմանած շարահլուսական ֆունկցիայի պաշտօնարար հետադաշում մեզ թույլ կտա խոսքի մեջ պարզել այս կամ այն բառի բառախմբերի բառիմաստային արժեքը: Այսպէս օրինակ, «սուբստանցի հասկացութեանը, որը լեզվում արտահայտուի է գոյականով, հակադրվում է «հատկանիշ», տրամաբանական կարգը, որը լեզվում զբաղվորում են ալիպիսի խոսքի մասերով, ինչպիսիք են ածականը և բայը, («ИЗЫКОВАЯ НОМИНАЦИЯ», չէջ 39): Ի դեպ, «այդ խոսքի մասերում միահլուսվում են երկու բնութի կարգեր՝ ածականներում՝ հատկանիշ և որակ, բայերում՝ գործողութիւն և վիճակ, իրրի սուբստանցի պրիկիկատային հատկանիշ, իսկ մակբայական դերբայներում և մակբայներում (որոնք արտահայտում են «ժամանակ», ու «տարածութիւն»), այսպէս կոչված հատկանիշի հատկանիշ, («ИЗЫКОВАЯ НОМИНАЦИЯ», չէջ 52): Այստեղից բխում է, որ գոյականի առաջին կարգի շարակարգային ֆունկցիան կլինի ածականը կամ բայը: Ավելի լայն իմաստով՝ սուբստանցի հասկացութեանը արտահայտող բառակապակցութեան առաջին կարգի շարակարգային ֆունկցիան խոսքի մեջ կզբաղեցնի բառակապակցութեամբ, որի մեջ գերադաս անդամի դերը կկատարի ածականը կամ բայը:

Այնուհետեւ, բայի կամ բայական գերադաս անդամով բառակապակցութեան շարահլուսական ֆունկցիան (այսուհետեւ՝ առաջին կապի շարակարգային ֆունկցիայի փոխարեն կօգտագործենք շարահլուսական ֆունկցիա հասկացութեանը) խոսքի մեջ կզբաղեցնի մակբայով կամ մակբայական գերադաս անդամով բառակապակցութեամբ: Այստեղից կարող ենք անել մեզ համար շատ կարեւոր եզրակացութիւն. խոսքի մեջ ալիքի լեզվական միավորը, որը գրեւորվում է որպէս մակբայի կամ մակբայական գերադաս անդամով բառակապակցութեան շարահլուսական ֆունկցիա, ունի հառկանիշ տրամաբանական կարգ: Այդ հատուկ է ածականներին կամ բայերին, կամ ածականական կամ բայական գերադաս անդամով բառակապակցութեանը, քանի որ վերջիններս պահպանում են դերադաս անդամի առանձնահատկութիւնները:

<Σ, F> համակարգի քննութիւնը շարունակենք բոտ Գ. Բ. Չահուկյանի «Общее и армянское языкознание», աշխատութեան մեջ տրված գոյական կարգերի (Գ. Չահուկյան, 1979): Հիշեցման կարգով նշենք, որ <Σ, F> համակարգը բաղկացած է ծալրագույն ու ոչ-ծալրագույն տարրերի Σ և արտածման կանոնների F վերջավոր բաղմութիւններից: Նախագույն տարրերը համապատասխանութեան մեջ են գրվում նախադասութեան առանձին բառերին, իսկ ոչ ծալրագույն տարրերը՝ բա-

ռախմբերին կամ բառակապակցութիւններին: Ոչ ծայրագույն տարրերի մեջ առանձնացված է ԼլաԿետային I տարրը, որը համապատասխանութեան մեջ է դրվում ամբողջ նախադասութեանը:

Քանի որ թե՛ ծայրագույն և թե՛ ոչ ծայրագույն տարրերը կարող են հանդես գալ իրրե լեզվակա միավորների նշան-փոխարինողներ, ապա այդ տարրերին կարող ենք վերագրել նշանայնութեան հատկանիշ: Ոյրեմն՝ առաջին պայմանն այն է, որ <Σ, F> համակարգի Σ բազմութեան տարրերը օժտված են նշանայնութեան հատկանիշով:

Անշուշտ առօրյա լուծման հանդիպում ենք օբյեկտներին, որոնք կարող են պարունակել այլ օբյեկտներ, կամ պարունակել մեկ այլ օբյեկտում՝ իրրե բաղադրիչ. Պայմանավորվենք այդ կարգի օբյեկտներին վերագրել պարունակութեան հատկանիշ: Այսինքն՝ պարունակութեան հատկանիշով օժտված օբյեկտները կամ պարունակվում են այլ օբյեկտներում կամ իրենք են պարունակում օբյեկտներ: Այս հակեցակետով Σ բազմութեան տարրերը օժտված կլինեն նաև պարունակութեան հատկանիշով՝ դրանցից ելաԿետային I տարրը միայն պարունակում է, ծայրագույն տարրերը՝ միայն պարունակվում, իսկ ոչ ծայրագույն տարրերը՝ թե՛ պարունակում, և թե՛ պարունակվում: Հետեաբար, Σ բազմութեան բոլոր տարրերն ունեն նյութակա մարմնի կարգ:

Առաջին հայացքից թվում է, թե Σ բազմութեան տարրերին նյութական մարմնի կարգ վերագրելիս զրկվում են նշանայնութեան հատկանիշից, մինչդեռ վերջում այդ բազմութեան տարրերին վերագրել էինք նշանայնութեան հատկանիշ: Բանն այն է, որ գոյարանական կարգերը զուգաձե են նշանայնութեան հատկանիշի նկատմամբ, այլ կերպ ասած՝ ամբողջ համակարգը կրկնվում է նշանայնութեան հատկանիշի նկատմամբ և յուրաքանչյուր հակադրութեան բնութագրվում է նաև լիանցիոն որոշչով (նշանային կարգ, նշանային կախում և այլն): Այդ նկատառումով մեր այն բոլոր դատողութիւնները, որոնք կվերաբերեն ոչ նշանայնութեան հատկանիշով օբյեկտներին, իրավացի կլինի նաև նշանայնութեան հատկանիշով օժտված օբյեկտների համար:

Նյութական մարմին կարգը ըստ բաղկացականութեան հատկանիշի երկատկու գեղջում կատանանք երկու եզրային կարգ՝ կառուցվածք և տարր, որոնք առանձնանում են բաղկացականութեան հատկանիշ ունենալու կամ չունենալու պայմանով: Σ բազմութեան ոչ ծայրագույն տարրերը իրենցից ներկայացնում են կառուցվածքներ, հետեաբար օժտված են բաղկացականութեան հատկանիշով: Դրանց հակառակ ծայրագույն տարրերը օժտված կլինեն ոչ բաղկացականութեան հատկանիշով: Այնպիսի ճիշտ կլինեք ասել (վերեւում արված վերապահութեամբ) ոչ ծայրագույն տարրերը բնորոշվում են նշանային կառուցվածքի իսկ ծայրագույն տարրերը՝ նշանային տարրի կարգերով:

Σ բազմութեան թե՛ ոչ ծայրագույն, և թե՛ ծայրագույն տարրերի բնութիւնն այնպիսին է, որ նրանց մոտ բացակայում է հաշվականութե-

յան հատկանիշը, ավելի ստույգ՝ նրանք սխալմամբ են ոչ հաշվական -
թյան հատկանշով: Այդ դեպքում ոչ ծալրադույն տարրերը ստանում
են կսզվի (որակի) կարգ, իսկ ծալրադույն տարրերը՝ կսխման կարգ:
Ուրեմն՝ կառուցվածքին, ալսինքն բառախմբերին կամ բառակապակցու-
թյուններին բնորոշ է կազմը (որակը), իսկ բառերին՝ կախումը:

Եթե նախադասությունը վերլուծվենք բառ բառակապակցությունների,
ալսինքն վերջինները դիտենք որպես ծալրադույն լեզվական միավոր-
ներ, ապա նրանք կստանան կախման կարգ: Այդ նշանակում է, որ բա-
ռակապակցությունը պահանջում ծալրադույն տարր, հնարավորութուն
է ստանում կախման մեջ դնել մեկ այլ բառակապակցություն կամ կախ-
ման մեջ լինել մեկ այլ բառակապակցությունից: Իսկ երբ բառակապակցու-
թյունը բնութագրվում է նաև կառուցվածքի կարգով, ապա բառերն են
ստանում տարրի կարգ, և կախյալության երեւոյթը հանդես է գալիս
արդեն բառերի միջև, և մի բառը կախման մեջ է դրվում այլ բառերից:

Այս երեւոյթը կարելի է մեկնաբանել լեզվի գինամիկայով, երբ հա-
յնգակտը կամ վերլուծության մակարդակը փոխելիս անմիջապես առ-
կա օբյեկտներն ու երեւոյթներն ստանում են նոր պնահատկաններ,
որոնք, ցավոք, ճիշտ չբնութագրվելով թյունիմացության պատճառ են
հանդիսանում: Հետեւաբար, յուրաքանչյուր օբյեկտ կամ երեւոյթ նկարա-
դրելիս նախապես պետք է ճիշտ բնութիւ հաշվարկման համակարգն ու
վերլուծության մակարդակը, ալսապես մակարդակների չփոխումը կհան-
դեցնի սխալ արդյունքի:

Վիճակայնության հատկանշի առումով Σ բաղմության տարրերը
չկարող են: Թե՛ բառերին և թե՛ բառախմբերին, որպես ուսումնասիրու-
թյան օբյեկտ, բնորոշ չէ ժամանակի, տեւողության և այլն կարգերը:

Այսպիսով, անմիջական բաղադրիչների փերականության մեջ ներա-
ռած ոչ ծալրադույն և ծալրադույն տարրերը բնութագրվում են երեք հատ-
կանիշով՝ բաղադրականության, պարունակության և հաշվականության,
որոնցից առաջինը որոշվում է այդ հատկանշի առկայությամբ կամ բա-
ցակայությամբ, երկրորդը առկայությամբ, իսկ վերջինը՝ բացակայությամբ:

Գոյարանական և գործառական կարգերի փոխհարաբերությունը կա-
րելի է արտահայտել $((R) \cap (R)) \cap ((R) \cap (R)) \Rightarrow (Sb \Rightarrow Ad \Rightarrow Adv)$ կամ,
որ նույնն է $((R) \cap (R)) \cap ((R) \cap (R)) \Rightarrow (M \Rightarrow m \Rightarrow m_1)$ բանաձևերով, որտեղ
 Sb -ն նշանակում է գոյական (յայն առումով), Ad -ն ածական (յայն
առումով), Adv -ը՝ մակբայ (յայն առումով), M -ը՝ հատկանշվող / գո-
յական / , m -ը՝ հատկանիշ, m_1 -ը՝ հատկանիշի հատկանիշ:

Այս կապակցությամբ հարկավոր է տարբերել գործառական կարգեր՝
գոյական, որոշիչ (ածական՝ այս բառի յայն առումով) և մակորոշիչ
մակբայ՝ (այս բառի յայն առումով): Այս երեք կարգերը միմյանցից
տարբերվում են լեզվական կախմամբ, ուստի և կարող ենք տարբերել
կախունակ և կախյալ բառեր, ալսինքն՝ հիմք բնդուենել կախունակութ-
յուն և կախյալության հատկանիշները (տե՛ս աղյուսակը):

Հատկանիշներ	Կարգեր		
	անական/ որոշիչ/	զույգական	մակբայ/ մակորոշիչ/
Կախունական թյուն	+	+	-
Կախյալ թյուն	-	-	+

Եթե աղյուսակում բերված պայմանները կիրառենք անմիջական բաղադրիչների փոխանցման թյուն նկատմամբ, ապա անմիջական կերպով պահանջները կարող են լինել որոշիչ, մասնավորապես, նրանց կրկնակի թյունը, երբ Σ բաղադրյալ տարրերը գիտարկում ենք արտածման բնթագրում և արտածման կանոնների սահմաններում: Ընդհանուր առմամբ, արտածման կանոնների սլաքից աջակողմյան միավորների միջև կարող են հաստատվել կախունական թյուն հարաբերություն, որը հանդիսանում է ստորագաստման և ոչ. կախունական թյուն, որը հանդիսանում է համադաստման:

Նկարագրենք ալի կերպով դեպքերը: Ենթադրենք արտածման ծառի որևէ մակարդակում P և Q արտահայտությունները հանդիսանում են անմիջական բաղադրիչներ (նշանակենք P և Q բաղադրիչներ): Այդ նշանակում է, որ տվյալ մակարդակում P և Q բաղադրիչները փոխադարձաբար կարող են հանդիսանալ նաև իրեն շարահյուսական ֆունկցիաներ՝ $P(\cdot)$ և $Q(\cdot)$: Այլ կերպ ասած՝ P արտահայտության հանդես գալիս պայմանավորված է Q -ով և, հակադարձաբար, Q -ի հանդես գալիս պայմանավորված է P -ով: Միաժամանակ P և Q արտահայտությունների համակցությունը (նշանակենք PQ) արտածման նախորդ փուլում է հանդիսանում էր մի ինչ-որ R արտահայտության անմիջական բաղադրիչը, որը որոշվում է $PQ(R)$ շարահյուսական ֆունկցիայով: Ըստ շարակարգային ֆունկցիայի սահմանման P, Q և R արտահայտությունները կունենան համապատասխանաբար $P(R)$, $Q(R)$, $R(P, Q)$ շարակարգային ֆունկցիաներ:

Կարող ենք պնդել հետևյալը՝ 1) ծալրադույն չդիմադրի P և Q արտահայտությունների միջև հաստատվում է ոչ-կախունական հարաբերություն, եթե $R(R)$ և $Q(R)$ շարակարգային ֆունկցիան համարվել է $R(P, Q)$ շարահյուսական ֆունկցիային, 2) ծալրադույն չդիմադրի P և Q արտահայտությունների միջև հաստատվում է կախունական հարաբերություն, եթե $R(P, Q)$ շարահյուսական ֆունկցիան համարվել է $P(R)$ կամ $Q(R)$ շարակարգային ֆունկցիաներից որևէ մեկին:

Կախունական թյուն հարաբերություն դեպքում այն բաղադրիչը, որի շարակարգային ֆունկցիան մի կրորդ բաղադրիչի նկատմամբ համարվել է, քանի որ այդ բաղադրիչի նկատմամբ կախունակ և կախյալ բաղադրիչների համակցության շարահյուսական ֆունկցիային, սովորաբար ան-


վանվում է գերադաս կամ միջուկ: „Բաւերի կապակցութիւնը,– դր-
րում է Ն. Ա. Պառնասյանը,– կատարվում է երկու եղանակով՝ համա-
դասութեամբ և ստորագասութեամբ: Համադասական կապակցութեամբ
միանում են շարահարկային համասարարքեր, իրար նկատմամբ կախ-
ման մեջ չգտնվող բառերը՝ ինչպէս Արամը, Աշոտը և Կարենը եղբայր-
ներ են: Ստորագասական կապակցութեան ժամանակ կապակցվող բառե-
րից մեկը շարահարկային գերադաս է, թելադրում է կապվող բառի ո-
րոշակի ձև՝ պայմանավորված տվյալ լեզվում բառերի կապակցելիութ-
յան յուրահատկութիւններով և օրինաչափութիւններով, (Ս. Աբրա-
համյան, 1976, էջ 7): Այդ նկատառումով միջուկի նկատմամբ կա-
րող ենք սահմանել երկու գործողութիւն:

Սահմանում. Դիցուք ունենք R_0 արտահայտութիւն, որի համար
որոշված է $R(Q)$ շարահարկային ֆունկցիան. եթե $\langle \Sigma, F \rangle$ անմիջական
բաղադրիչների քերականութիւնից R -ի նկատմամբ կիրառենք $R \rightarrow R_1 R_0$
(կամ $R \rightarrow R_0 R_1$) արտածման կանոնն այնպէս, որ $R(Q) \equiv R_0(Q)$, ապա տե-
ղի շահի միջուկի ընդարձակում:

Այլ կերպ ասած՝ երկու արտահայտութիւնների միջև կստեղծվի
ստորագասական հարաբերութիւն, երբ նրանց համակցութիւնը կարող
ենք ստանալ մեկի, որպէս միջուկի, ընդարձակումից: Հիմնավորենք մեր
կողմից արված սահմանումը Գ. Բ. Չահուկյանի „ժամանակակից հայե-
րենի տեսութեան հիմունքները, աշխատութեան մեջ բերած կադապար-
ներից մեկով: Ժամանակակից հայերենում գոյականական բառակապակց-
ութիւնը արտածվում է բոտ $(d \rightarrow (a \rightarrow (b \rightarrow (A))))$ կադապարային բանա-
ձևի, որտեղ A -ն դրսեւորվում է գոյականով, որը բառակապակցութեան
գերադաս անդամն է, b -ն համապատասխանում է ածական որոշչին,
 a -ն՝ թվական որոշչին, իսկ d -ն գերանվանական որոշչին (Գ. Չահուկ-
յան, 1974, էջ 294), եթե ցանկանանք սերել $\langle \Sigma, F \rangle$ համակարգի օգ-
նութեամբ ժամանակակից հայերենի գոյականական բառակապակցութիւն-
ներ, ապա Σ և F բաղմութիւնները հարկավոր է ընտրել հետեւյալ կերպ՝

$$\Sigma = \left\langle \begin{array}{c} I, \\ NP \\ a, b, d, \\ A \end{array} \right\rangle, \quad F = \left\langle \begin{array}{c} I \rightarrow (NP), \\ NP \rightarrow b(NP), \\ NP \rightarrow a(NP), \\ NP \rightarrow d(NP), \\ NP \rightarrow A \end{array} \right\rangle$$

Գոյականական բառակապակցութեան լրիվ արտածման դեպքում կունե-
նանք հետեւյալ արտածման ծառը (նշենք, որ a, b, d միավորները նույն-
պէս, որպէս միջուկներ, կարող են ընդարձակվել):



փաստորեն նվազագույն զոյականական բառակապակցությունը հա-
մադատասխանում է $NP \rightarrow A$ կադապարային բանաձևին, որն ստացվում
է $I \rightarrow (NP)$, $NP \rightarrow A$ կանոնների կիրառումով: Լրիվ անդամներով դո-
լականական բառակապակցությունը կստացվի ստորե բերված
արտածման կանոնների կիրառումով:

արտածման կանոնը

$I \rightarrow (NP)$

$NP \rightarrow b(NP)$

$NP \rightarrow a(NP)$

$NP \rightarrow d(NP)$

$NP \rightarrow A$

կադապարային բանաձևը

(NP)

$(b(NP))$

$(a(b(NP)))$

$(d(a(b(NP))))$

$(d(a(b(A))))$

Բարդ բառակապակցությունների կազմման վերաբերյալ Վ.Վ.Վի-
նոգրադովը գրում է. «Բարդ բառակապակցությունները բնդհանուր
առմամբ հանդիսանում են պարզ բառակապակցության բնդարձակման
արդյունք: Ի դեպ, յուրաքանչյուր նոր բառ կամ բառակապակցութ-
յուն, որը միանում է պարզ բառակապակցությանը, պետք է ամբողջա-
նով լինի հիմնային, գերադաս բառին, այլ ամբողջ բառային կոմպլեքսին,
օրինակ՝ հսկանապալա թեյաման հին հսկանապալա թեյաման և այլն:
Սակայն կա նաև բարդ բառակապակցությունների կազմման այլ եղա-
նակ, երբ գերադաս անդամին միանում է նաև ոչ թե առանձին բառ, այլ
մի ամբողջ բառակապակցություն, (Վ. Վ. Վինոգրադով, 1975, էջ
239):

Հետագայում, ելնելով կոնկրետ խնդրից, միջուկի բնդարձակման
նպատակով չենք օգտագործի անմիջական բաղադրիչների քերականու-
թյան դասական ներկայացումը, քանի որ, ինչպես տեսանք, այդ քե-
րականության աշխատանքը մշտապես սկսվում է ելակետային տարրից,
մինչդեռ միջուկի բնդարձակումն ունի տեղային բնույթ, և յուրաքանչ-
յուր անդամ կարող ենք բնդարձակել նույնանիշ փակագծերի մեջ առ-
նրված արտահայտությունը:

Մեր կողմից սահմանվող երկրորդ գործողութիւնը միջուկի ճեղքումն է:

Սահմանում.- Դիցուք ունենք R_0 արտահայտութիւն, որի համար որոշված է $R_0(Q)$ շարահյուսական ֆունկցիան: Եթե $\langle \Sigma, F \rangle$ անմիջական բաղադրիչների քերականութիւնից R_0 -ի նկատմամբ կիրառենք $R \rightarrow R_1 R_0$ (կամ $R \rightarrow R_0 R_1$) արտածման կանոնն ալիպես, որ $R(Q) \neq R_1(Q) \equiv R_0(Q)$, ապա տեղի կունենա միջուկի ճեղքում:

Միջուկի ճեղքման գործողութիւնը մեզ թույլ կտա ստանալ տվյալ բառակապակցութեանը (կամ բառին) համադաս հարաբերութեամբ բառակապակցութիւն կամ բառ:

Միջուկի ընդարձակման ու ճեղքման գործողութիւններին հակառակ գործողութիւններ կլինեն բառակապակցութիւնների սեղմման ու միավորման գործողութիւնները, երբ առաջին դեպքում բառակապակցութիւնը սեղմվում է մինչեւ միջուկ (մինչեւ գերադաս անդամ), իսկ երկրորդ դեպքում՝ համադաս հարաբերութեամբ բառակապակցութիւնն իշր (կամ բառերը) միավորվում են մեկ բառակապակցութեան մեջ, կամ երկու՝ բառակապակցութիւնների փոխարեն հանդես է գալիս մի բառակապակցութիւնը: Եւ քանի որ միջուկի ընդարձակման, ճեղքման, բառակապակցութիւնների սեղմման ու միավորման գործողութիւններին հետ կապված հարցերը կարելի է թեստել կարգադրի քերականութեան խնդիրներից, և գլխավորը, այդ գործողութիւնները նկարագրելի են $\langle \Sigma, F \rangle$ համակարգի օգնութեամբ, ապա այստեղ կսահմանափակվենք այսքանով, և կփորձենք կիրառել վերեւում տրված կաղապարները յամանակից հայերենի բայական բառակապակցութիւնների ուսումնասիրման ու նկարագրման նպատակով:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻԶՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Շարահյուսական կառույցների չարքում բայական միջուկով կառույցներին, հիրավի, տրվում է ամենակարեւոր տեղը Նույնը, առանց վերապահության, կարելի է պնդել ժամանակակից հայերենի վերաբերյալ: Դա հիմնականում պայմանավորված է նշանով, որ բայական կառույցները դրսևորվելով բայական բառակապակցություններով, իրենց կառուցվածքով և արտահայտած նախաբերությունների բնույթով խիստ բազմազան են: Բային կարող են ստորադասվել գոյականները, ածականները, մակդասները, դերանունները, (Ս. Աբրահամյան, 1976, էջ 86):

Նախապես նշենք, որ բայական բառակապակցություն հասկացությունները աշխատանքում մենք օգտագործելու ենք լայն առումով: Այդ նշանակում է, որ ինքն բայական բառակապակցությունը դիտենք լայն առումով՝ ներառելով ոչ միայն բայի խնդրադրությամբ պայմանավորված խնդիրները, այլև բայի արժույթով պայմանավորված բուն (գործող) ենթական և ստորոգելին (ստորոգելիա՛յսն վերադիրը՝ ստորոգյալի անվանական մասը), ապա նախադասության օբյեկտիվ պլանը հանդես կգա հենց որպես բայական բառակապակցություն՝ ստորոգմամբ կամ առանց դրա, և նախադասությունը կլինի բայական բառակապակցություն՝ լրացված յուրորդումով, (Գ. Ջահուկյան, 1974, էջ 333): Այլ կերպ ասած՝ մեր ղևտումնասիրության հայեցակետը անփոփոխական է ստորոգման նկատմամբ, հիմք ընդունելով, որ բայական բառակապակցությունը լնորոշվում է բայական ա՛յն չարգերի ծալ՛սլմամբ, որ հանդես են գալիս բայահիմքերի միջոցով՝ անկախ ստորոգումից: Ուրեմն՝ ընդհանուր առմամբ նախադասությունն էլ կարելի է դասել բայական բառակապակցությունների շարքը, թեև նախադասության քննությունը մեր նպատակը չէ: Մեր քննության առարկան նախադասության ա՛յն հատվածն է, որտեղ բացակայում է ենթակայական խումբը: Նման անդամատում կարող ենք անել, քանի որ ժամանակակից լեզվաբանությունը նախադասության անդամատումը կատարում է աստիճանաբար՝

սկսելով ամելի մեծ հատվածներից և սրանց հետագա բաժանմամբ
դնայով դեպի ամելի՝ փոքր հատվածներ, (Գ. ՋաՀուկյան, 1974, էջ 353):


Նախադասության անդամատման առաջին փուլում մենք կստանանք
անվանական և բայական բառախմբեր կամ բառակապակցություններ,
որոնցից վերջիններս նույնացվում են առանձին տրված բայական
բառակապակցությունների հետ: Այսպես թե աշխպես, մեր կողմից դի-
տարկյոյ բառակապակցությունների միջուկը բայն է, որը մի գեպքում
հանդես կգա դիմավոր, իսկ մեկ այլ գեպքում անգեմ ձևերով:

Վերադառնալով բայի բնորոշմանը, նախադասության անդամների
փոխհարաբերությունը քննելիս, — դրում է Գ. Ջ. ՋաՀուկյանը, — հարկավոր
է տարբերել առնվազն երկու մակարդակ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ կամ
հայորդային և հայորդակցային: Առաջին գեպքում բայ — ստորոգյալը
հանդես է գալիս որպես առարկաների հարաբերության գրեհորում, և
քանի որ առարկաները տվյալ նախադասության մեջ հանդես են գալիս
հենց տվյալ հարաբերությամբ, ուստի և բայ — ստորոգյալը գաղնում է
յուրատեսակ կենտրոն: Այդ կենտրոնը, ընկալանաբար, գոյություն ու-
նի միայն առարկաների մեջ և նրանց միջոցով: Երկրորդ գեպքում որ-
պես նախադասության կենտրոն հանդես է գալիս այսպես կոչված են-
թական՝ մտքի այն առարկան, որը խոսողի ուշադրության կենտրոնում
է, և որին վերադրվում է որեւէ հատկանիշ (այն առումով) իրեւ. ստո-
րոգյալ, (Գ. ՋաՀուկյան, 1974, էջ 333): Ուրեմն՝ նախադասության
սերման մի մակարդակում, ենթակայական և ստորոգելիական խմբերը
հանդիսանում են անմիջապես բաղադրիչներ, բնորոշելով համարժեք շա-
րահյուսական ֆունկցիաներ:

Մի կողմից բայական խումբը (լինելով ստորոգելիական խումբ) հան-
դիսանում է ենթակայի (կամ ենթակայական խմբի) շարահյուսական
ֆունկցիան, քանի որ՝, բայը չոր բայիմաստով արտացոլում է իրականու-
թյան մեջ գոյություն ունեցող առարկաների շարժումը, փոփոխությունը,
Վերջիններս հանդես են գալիս որպես առաջինի (առարկայի) հատկա-
նիշ: Ուրեմն՝ բային որպես խոսքի՝ մասի հատուկ է հատկանիշ արտա-
հայտելը, (Ս. Աբրահամյան, 1974, էջ 235—236): Իսկ մյուս կող-
մից բայը (կամ բայական բառախումբը) կհանդիսանա մակրայի շարա-
հյուսական ֆունկցիա, որովհետեւ, «մակրայի տարբերությունը հատ-
կանիշ նշանակող խոսքի մասերի, որոնք առարկայի հատկանիշի նմաստ
ունեն, ցույց է տալիս հատկանիշի հատկանիշ: Դա նշանակում է, որ
մակրայները կարող են դրվել այն խոսքի մասերի վրա, որոնք առարկա-
յի հատկանիշի նմաստ ունեն: Մակրայի ամենատարածված կիրառութ-
յունը գործույթ-թյան հատկանիշ ցույց տալն է, հետեւաբար և բայի վր-
ա դրվելը, (Ս. Աբրահամյան, 1974, էջ 436):

Ստացվում է, որ բայական բառակապակցությունը միաժամանակ
կարող է հանդիսանալ և ենթակայական խմբի և մակրայի շարահյուս-

սական ֆունկցիա: նկատի առնելով այն, որ ժամանակակից հայերենում թե՛ ենթակայական խումբը, թե՛ մակբայը բայական բառակապակցության նկատմամբ զերդանցապես գրավում են առաջագաս գիրքը, այլ կերպ ասած՝ նախադասության ձախակողմյան հատվածներ են, ապա նշված սլավոնյան կարող է բավարարվել, եթե ենթակայական խումբը, մայրաբայը և բայը սերվում են հետեւյալ սխեմայով՝



Հետեւաբար, եթե խուֆի մեջ արդեն հանդես է եկել մակբայը (կամ մակբայ գերադաս անդամով բառախումբը), ապա նրա շարունակական ֆունկցիայի գերում կարող է հանդես գալ ածականը (կամ աականական գերադաս անդամով բառախումբը) կա՛ր լա՛յ (կամ բայական գերադաս անդամով բառախումբը): Հակառակ դեպքում՝ բայի շարունակական ֆունկցիա կարող է ծառայել մակբայը, դրայանը, ածականը:

Դիտարկենք այդ դեպքերը առանձին-առանձին:

Սկզբում քննենք զուտ մակբայական ստորադասություն բայական բառակապակցությունները: Գ.Բ. Ջահուկյանը, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, աշխատության մեջ տվել է զուտ մակբայական լրացմամբ բայական բառակապակցության կաղապարախն բանաձևը (Գ.Բ. Ջահուկյան, 1974, էջ 448):

$$(a + (b + (c + (d + (e + (v)))))) ,$$

որտեղ

v-ն բայ-միջուկն է,

a-ն՝ ժամանակի մակբայը,

b-ն՝ տեղի մակբայը,

c-ն՝ չափի և քանակի մակբայը,

d-ն՝ պատճառանպատակային մակբայը,

e-ն՝ ձևի (որակական մակբայը):

Հիմք ընդունելով զուտ մակբայական լրացմամբ բայական բառակապակցության բերած կաղապարախն բանաձևը, ընտրենք ՀՇ, F7 համակարգ, որի օգնությամբ կարողանանք նկարագրել զուտ մակբայական ստորադասության իրական բայական բառակապակցությունները: Դրա համար

Հարկավոր է Σ բազմություն մեջ ներառել A, B, C, D, E, V, VP
 Լնթարազմություններ, որտեղ A, B, C, D, E ծայրագույն տարրե-
 րի Լնթարազմություններ Լն՝ ներառած Համապատասխանաբար ժամ-
 նակի, տեղի, չափ ու բանակի, պատճառանշատակալին, ձկի մակրալներ,
 Եթե V-ով նշանակենք ժամանակակից Հայերենի բալերի բազմությունը,
 ապա որտեղ ման կանոնների բազմության բաղկացած կլինի Հետեւյալ
 տարրերից՝

$$F = \{ VP \rightarrow (A)(VP), \quad VP \rightarrow (B)(VP), \quad VP \rightarrow (C)(VP), \\ VP \rightarrow (D)(VP), \quad VP \rightarrow (E)(VP), \quad VP \rightarrow (V) \}$$

Այսպիսով՝ կտանանք $\langle \Sigma, F \rangle$ անմիջական բաղադրիչների բերականու-
 թյան Հետեւյալ տարրերակր՝

$$\Sigma = \left\{ \begin{array}{l} I, \quad VP, \\ A, \quad B, \quad C, \\ D, \quad E, \quad V \end{array} \right\}, \quad F = \left\{ \begin{array}{ll} I \rightarrow (VP), & VP \rightarrow V \\ VP \rightarrow (A)(VP), & A \rightarrow a, \\ VP \rightarrow (B)(VP), & B \rightarrow b, \\ VP \rightarrow (C)(VP), & C \rightarrow c, \\ VP \rightarrow (D)(VP), & D \rightarrow d, \\ VP \rightarrow (E)(VP), & E \rightarrow e \end{array} \right\}$$

Փորձենք վերջինս ազտադորձել զուտ մակրալական ստորադասու-
 թյան բաղկան բառակազմակերպչունների ձեւալին նկարագրության
 Համար՝ նշենք, որ բերականությունն ընտրված է ալոպեա, որ մակրա-
 լական բառախմբերը սերման վերջում վերածվում են առանձին վերջ-
 բաժնի մակրալների, մինչդեռ, ինչպես կտեսնենք ստորեւ, ժամանակակից
 Հայերենում Հանդիպում ենք նաեւ, հակառակ՝ մակրալը որպես միջուկ,
 ընդարձակման գեղերի:

Անմիջական բաղադրիչների բերականության առաջարկված տարրե-
 րակի մեջ իրեն Լյակետային տարր I -ն դրսևորվում է բալական բա-
 ռակազմակերպչուն (I $\rightarrow$ (VP)), որը թույլ է տալիս սերելու 32 տիպի
 բառակազմակերպչուններ: Դրանցից մեկում բալը հանդես է գալիս
 առանձին վերջրած, հինգում՝ մեկ մակրալի հետ զուգորդված, երկու
 մակրալի հետ՝ տասում, երեք մակրալի հետ՝ նույնպես տասում, չորս
 մակրալի հետ՝ հինգում եւ վերջապես, հինգ մակրալի հետ՝ մեկ բառա-
 կազմակերպչուն մեջ: Վերջին բալական բառակազմակերպչուն ալտաժամ
 պատկերը բերված է Հետեւյալ աղյուսակում:

որտեղ ման

արտաժաման արդյունքը

$$\begin{array}{l} \text{կանոնը} \\ I \rightarrow (VP) \\ VP \rightarrow (A)(VP) \\ A \rightarrow a \end{array}$$

$$\begin{array}{l} VP \\ ((A)(VP)) \\ ((a)(VP)) \end{array}$$

VP $\rightarrow$ (B)(VP)	((a)((B)(VP)))
B $\rightarrow$ b	((a)((b)(VP)))
VP $\rightarrow$ (C)(VP)	((a)((b)((C)(VP))))
C $\rightarrow$ c	((a)((b)((c)(VP))))
VP $\rightarrow$ (D)(VP)	((a)((b)((c)((D)(VP)))))
D $\rightarrow$ d	((a)((b)((c)((d)(VP)))))
VP $\rightarrow$ (E)(VP)	((a)((b)((c)((d)((E)(VP)))))
E $\rightarrow$ e	((a)((b)((c)((d)((e)(VP)))))
VP $\rightarrow$ v	((a)((b)((c)((d)((e)(v)))))

Աղյուսակում տվել ենք զուտ մակրայական ստորադասությամբ ամենարնդարձակ բայական բառակապակցության սերման ընթացքը: Ակրն-հայտ է, որ նույն ձևով կարող ենք ստանալ մնացած 31 տիպի բայական բառակապակցությունները:

Դիտարկենք մեր կողմից արտածած ամենարնդարձակ բայական բառակապակցությունը:

Նախ նշանակենք նույնանիշ փակագծերը՝

$$VP \Rightarrow ((a)((b)((c)((d)((e)(v)))))$$

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14

Զուտ մակրայական ստորադասությամբ ամենարնդարձակ բայական բառակապակցության մեջ ժամանակի մակրայ (a - ն) հանդիսանում է իր անմիջական բաղադրիչը կազմող bcdev բառակապակցության շարահյուսական ֆունկցիան: Այն կարող է հանդիսանալ շարահյուսական ֆունկցիա ինչպես նաև 14 այն բայական բառակապակցությունների, որտեղ կարող են հանդես գալ տեղի, չափի և քանակի, պատճառանպատակային, ձևի (որակական) մակրայները (bv, cv, dv, ev, bcv, bdv, bev, cdv, cev, dev, bcdv, bcev, bdev, cdev, bcdev):

Նույն դատողությամբ կարող ենք պնդել, որ տեղի մակրայ 7 բայական բառակապակցությունների շարահյուսական ֆունկցիա է (cv, dv, ev, edv, cev, dev, cdev), չափի ու քանակի մակրայ՝ երեք (elv, ev, dev), պատճառանպատակային մակրայ՝ մեկ (ev): Զեմի (որակական) մակրայ կարող է դառնալ միայն բայ-միջուկի շարահյուսական ֆունկցիան: Սխեմայից ակնբախորեն հետևում է, որ բայ-միջուկի շարահյուսական ֆունկցիա չէ դերում կարող են հանդես գալ նաև մնացած բոլոր մակրայները:

Կոնկրետ օրինակներով ցուցադրենք վերելում ստացված կաղապարի դրսևորումը ժամանակակից հայերենում: Դրա համար իբրեւ A բաղմության տարր ընտրենք հերոս, B բաղմության տարր՝ դրսում, C - բաղմության տարր՝ հաճախ, D բաղմության տարր՝ ամոթ ու, E բաղմության տարր՝ հաճախ:

թյան տարր՝ կուղեկուղ մակրայները և իրրե V բաղմունքի մասերը՝ քայլում էր բայի: Պարզ է, որ ընտրված լատերը կկազմեն <Σ, F> համակարգի ծայրագույն տարրերը (մակրայների նմուշները և ամբողջ բառակապակցությունը լուրջ լինելու և առնված Գ. Բ. Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսություն»-ի հիմունքները, աշխատությունը):

Ընտրած նմուշների դեպքում <Σ, F> անմիջական բաղադրիչների բերականությունը կունենա հետևյալ տեսքը.


$$\Sigma = \left\{ \begin{array}{l} I, VP, \\ \text{հերու, դրսուլ,} \\ \text{հաճախ, ամոթու,} \\ \text{կուղեկուղ,} \\ \text{քայլում էր} \end{array} \right\}, F = \left\{ \begin{array}{l} I \rightarrow (VP), \quad VP \rightarrow V, \\ VP \rightarrow (A)(VP), \quad A \rightarrow a, \\ VP \rightarrow (B)(VP), \quad B \rightarrow b, \\ VP \rightarrow (C)(VP), \quad C \rightarrow c, \\ VP \rightarrow (D)(VP), \quad D \rightarrow d, \\ VP \rightarrow (E)(VP), \quad E \rightarrow e \\ a \rightarrow \text{հերու, } b \rightarrow \text{դրսուլ,} \\ c \rightarrow \text{հաճախ, } d \rightarrow \text{ամոթու,} \\ e \rightarrow \text{կուղեկուղ, } v \rightarrow \text{քայլում էր} \end{array} \right\}$$

Դժվար չէ գուցե տալ, որ <Σ, F> համակարգի օգնությամբ կարող ենք սերել մեկ միբաղադրիչ՝ $VP \rightarrow \text{քայլում էր}$ ($I \rightarrow (VP)$, $VP \rightarrow V$, $V \rightarrow \text{քայլում էր}$), հինգ երկբաղադրիչ՝ $VP \rightarrow \text{հերու քայլում էր}$ ($I \rightarrow (VP)$, $VP \rightarrow (A)(VP)$, $A \rightarrow a$, $VP \rightarrow v$, $a \rightarrow \text{հերու}$, $V \rightarrow \text{քայլում էր}$) և այլն, տասն յոթբաղադրիչ՝ $VP \rightarrow \text{հերու դրսուլ քայլում էր}$ ($I \rightarrow (VP)$, $VP \rightarrow (A)(VP)$, $VP \rightarrow (B)(VP)$, $A \rightarrow a$, $B \rightarrow b$, $VP \rightarrow V$, $a \rightarrow \text{հերու}$, $b \rightarrow \text{դրսուլ}$, $V \rightarrow \text{քայլում էր}$) և այլն, տասն բառաբաղադրիչ՝ $VP \rightarrow \text{հերու դրսուլ հաճախ քայլում էր}$ ($I \rightarrow (VP)$, $VP \rightarrow (A)(VP)$, $VP \rightarrow (B)(VP)$, $VP \rightarrow (C)(VP)$, $A \rightarrow a$, $B \rightarrow b$, $C \rightarrow c$, $VP \rightarrow V$, $a \rightarrow \text{հերու}$, $b \rightarrow \text{դրսուլ}$, $c \rightarrow \text{հաճախ}$, $V \rightarrow \text{քայլում էր}$) և այլն, հինգ հինգբաղադրիչ՝ $VP \rightarrow \text{հերու դրսուլ հաճախ ամոթու կուղեկուղ քայլում էր}$ ($I \rightarrow (VP)$, $VP \rightarrow (A)(VP)$, $VP \rightarrow (B)(VP)$, $VP \rightarrow (C)(VP)$, $A \rightarrow a$, $B \rightarrow b$, $C \rightarrow c$, $D \rightarrow d$, $VP \rightarrow v$, $a \rightarrow \text{հերու}$, $b \rightarrow \text{դրսուլ}$, $c \rightarrow \text{հաճախ}$, $d \rightarrow \text{ամոթու}$, $v \rightarrow \text{քայլում էր}$) և այլն, և վերջապես, մեկ վեցբաղադրիչ՝ $VP \rightarrow \text{հերու դրսուլ հաճախ ամոթու կուղեկուղ քայլում էր}$ ($I \rightarrow (VP)$, $VP \rightarrow (A)(VP)$, $VP \rightarrow (B)(VP)$, $VP \rightarrow (C)(VP)$, $VP \rightarrow (D)(VP)$, $VP \rightarrow (E)(VP)$, $A \rightarrow a$, $B \rightarrow b$, $C \rightarrow c$, $D \rightarrow d$, $E \rightarrow e$, $VP \rightarrow v$, $a \rightarrow \text{հերու}$, $b \rightarrow \text{դրսուլ}$, $c \rightarrow \text{հաճախ}$, $d \rightarrow \text{ամոթու}$, $e \rightarrow \text{կուղեկուղ}$, $v \rightarrow \text{քայլում էր}$ բայական բառակապակցությունները:

Ինչո՞ւ էն առանձնահատուկ զուտ մակրայական ստորադասությունը բայական բառակապակցությունները:

Այդ հարցին պատասխանելու համար պատկերենք զուտ մակրայական

ստորադասութիւնի ամենաընդհանուր բաղադրական բառակազմութեան սերման ընթացքը:



Հերու դրսում հաճախ ամոթու կուգեկուզ քայլում էր Գծապատկերից անխափան Երեւում է, որ զուտ մակրայական ստորադասութիւնի բաղադրական լատինականացութեան սերման դեպքում <Σ, F> համակարգը վերածվում է գեպի այժմյան դիւրագիտութեան A-քերականութեան (автоматная грамматика), Հակադարձաբար, եթէ սերումը սկսենք միջուկի ընդարձակումից, ապա պրոցեսը կլինի ձախընթաց: Երկու մեկնարանութիւնն էլ անփոփոխակ են այն փաստի նկատմամբ, որ սերման ցանկացած փուլում մակրայի հանդիսանում է բաղադրական բառակազմութեան շարահիշուական ֆունկցիան: Ըստ բերած կողմնադրի, ժամանակակից հայերէնում միայն ձեռի (ոչ սկական) մակրայն առանց վերապահութեան կարող է դառնալ միջուկ-բաղի շարահիշուական ֆունկցիան, և ոչ այլևին: Մնացած մակրայները միայն առանձին դեպքերում կարող են լինել միջուկ-բաղի անմիջական բաղադրիչը և, հետեւաբար, նրա շարահիշուական ֆունկցիան:

Զուտ մակրայական ստորադասութիւնի բաղադրական բառակազմութեան օրինակով պարզ երեւում է շարակարգային և շարահիշուական ֆունկցիաների տարբերութիւնը: Այս բառակազմութեան մեծ քայլում էր միջուկ-բաղի ընդդիմում է կուգեկուզ, ամոթու, հաճախ, դրսում, հերու: Համապատասխանաբար առաջին, երկրորդ, երրորդ և հինգերորդ կարգի շարակարգային ֆունկցիաներով, որոնցից միայն առաջինին կարող ենք անմիջապէս շարահիշուական ֆունկցիան հանդէս տալ: Երկրորդին մակրայի բացակայութիւնը հանդէս տալու է սրանցից ձախ տեղադրւած մակրայների շարակարգային ֆունկցիայի կազմի իջեցման: Այսպէս օրինակ, եթէ նշված բառակազմութիւնից արտաքսենք կուգեկուզ մակրայը, ապա ամոթու մակրայը կդառնա շարահիշուական ֆունկցիա, հաճախ մակրայը՝ երկրորդ կարգի շարակարգային ֆունկցիա և այլն: Այնպէս որ, կախված այլ մակրայների ներկայութիւնից կամ բացակայութիւնից, կարող է փոխվել միևնույն բաղադրական ֆունկցիան ազդեցութիւնը: Այլ կերպ ասած՝ եթէ մակրայ-բաղի հարաբերութիւնը վերադրենք որեւէ արժեք, ապա այն անփոփոխ չէ, այլ կարող է փոփոխվել կախված բառակազմութեան մեջ ներառված մակրայների թվից: Այս երեւութի նույնպէս կարելի է մեկնարանել լեզվի գինամիջմով՝ միևնույն լեզվական միավորը

տարրեր լեզվական իրողութ յունեներում կարող է ունենալ տարրեր ֆունկցիոնալ արժեքներ: Այս փաստը նախադասութ յան անդամների կադաստրով բնարկելիս լեզվի դինամիզմը չի երեւում: Այսպես, «Մակ-րայր հատկանիշ գույք տվող խոսքի մաս է», - դրում է Վ.Ա. Քոսյանը, - և իրրե ալգպիսին հիմնականում հանդես է դալիս բալի լրացման դե-րում, իհարկե կատարելով նաե ածականի լրացման պաշտոն: Բոլոր մակրայրն էլ բալի լրացում դառնալիս արտահայտում են յորա-դալական հարաբերութ յունենը, (Վ. Քոսյան, 1975, էջ 442): Մակրա-յր որպես ածականի լրացում կքննարկենք ավելի ուշ: Այստեղ դիտար-կենք մակրալի բալական լրացման պաշտոնը: «Մակրալի ամենատարած-ված կիրառութ յունը դործողութ յան հատկանիշ գույք տալն է, հետեա-պես և բալի վրա դրվելը, (Ս.Ս. Բրահամյան, 1974, էջ 436): Այո, մակ-րայր դրվում է բալի վրա, դառնալով նրա շարահյուսական ֆունկցի-ան: Ըստ վերեւում արված պնդման, երբ խոսքի մեջ մակրալին հա-ջորդում է բալ, ապա մակրալի շարակարգալին ֆունկցիան վերա-փոխվում է շարահյուսական ֆունկցիալի և մակրայր բնորոշումը է բալ-միջուկը՝ դառնալով նրա լրացումը: Այդ դեպքում բալը և մակ-րայր աշտածման որեէ մակարդակում անմիջական բաղադրիչներ են:

Իսկ ինչպե՞ս վարվել ալն դեպքերում, երբ մակրալն ու բալը խոս-քի մեջ անջատված են մեկ ալլ բառով (կամ բառերով) ալնպես, որ մակրայր արտածման որեէ մակարդակում ոչ թե բալի, ալլ ալդ բա-լով որոշված բառակապակցութ յան անմիջական բաղադրիչն է: Համա-ձայն նախադասութ յան անդամների քերականութ յան, ալգպիսի դեպ-քերում մակրայր մնում է իրրե բալի լրացում: Ըստ մեր կողմից ար-ված դատողութ յունենրի՝ ալն դեպքում, երբ մակրալն ու բալը ան-ջատված են մեկ կամ ավելի բառերով (որոնք բալի ստորագառ տան-դամներն են), մակրայր դառնում է ալդ բալական բառակապակցութ յան շարահյուսական ֆունկցիա, իսկ բալի հետ նրա հարաբերութ յունը որոշ-վում է երկրորդ և ավելի բարձր կարգի շարակարգալին ֆունկցիանե-րով: Ժամանակակից հայերենում ալս փաստի դրսեորումը ուշադրութ յան է արժանացել «Ժամանակակից հայոց լեզու», եռահատոր ալխատութ յան մեջ: «Ժամանակակից հայերենում նախադասութ յան մեջ դործածված բալի շարադասութ յան փոխիսումը, - դրում է Ս.Պ.Ս. Բրահամյանը, - երբեմն առաջացնում է նույն բառի պաշտոնի փոխոյւթ յունը, (Ս. Ս. Բրահամյան, 1976, էջ 414): Եթե շարադասութ յան փոփոխու-թ յունը ընդունենք լալն առումով, ապա բալի մակրալական լրացում-ների թիվն ավելացնելիս, երբ նոր մակրայր դրվում է բալին հարա-դիշ, փոփոխվում է նախադասութ յան մեջ նախկինում ներառված մակ-րայրների պաշտոնը: Քանի որ, վերջի վերջո, բալական բառակապակցու-թ յունը արտահայտում է դործողութ յան կամ եղելութ յան իմաստ, ապա կարող ենք անել հետե լալ պնդումը:

այն բայական բառակապակցությունը, որը հանդիսանում է մակրայի շարահյուսական փունկցիա, խոսքի մեջ կատարում է բայական հարաբերության պաշտոն:

Մեկնաբաններ մեր կողմից արված դատողությունը.

Ենթադրենք, ընդհանուր առմամբ, ունենք որեւէ խոսքի մաս $<$ բայական բառակապակցություն: Քանի որ խոսքի մեջ հանդիս է հիմնական մի մակրայ, որի շարահյուսական ֆունկցիա՝ լինի այդ բայական բառակապակցությունը, վերջինս կարելի է վերլուծել երկակի՝

ա) կարելի է որոշել բայի և ստորադաս բաղադրիչների միջև խոսքի դրային կամ պարագայական հարաբերություններ,

բ) կարելի է ընդունել, որ այդ կապակցությունը խոսքի մեջ դրսևավորում է մեկ լեկսա:

Այն դեպքերում, երբ խոսքի մեջ առկա է մակրայ, որի շարահյուսական ֆունկցիան հանդիսանում է բայական բառակապակցությունը, վերջինս դրսևորում է մեկ լեկսա, ստանձնում մեկ շարահյուսական միավորի պաշտոն և, ըստ մեր սահմանման, ստանում բայական արժեք.

Փորձարկենք մեր կողմից արված պնդումը կոնկրետ օրինակների նկատմամբ. վերջիններս զուտ մակրայական լրացմամբ բայական բառակապակցություններ: Որպես նախնադրյալ օրինակ դիտարկենք կուղեկցությամբ բայում էր բայական բառակապակցությունը $<\Sigma, \bar{F}>$ անմիջական բաղադրիչների քերականություն մեր կողմից մշակված տարբերակի օգնությամբ այն կարող ենք սերվել հետևյալ կերպ.

$$VP = ((e)(v))(I \rightarrow (VP), VP \rightarrow ((E)(VP)), E \rightarrow e, VP \rightarrow v,$$

$$e \rightarrow \text{կուղեկցող, } v \rightarrow \text{բայում էր})$$

Եթե այս բառակապակցությունը վերլուծենք նախադասության անդամների կադավրի օգնությամբ, ապա շարունակում էր բայը կլինի ստորոգյալ (կախունակ բառ), իսկ կուղեկցող մակրայը՝ ձևի պարագայ որովհետև, այս (մակրայ $<$ բայ, ՌՖԼ) բառակապակցություններն աշտահայտում են միայն պարագայական հարաբերություններ, այն է՝ ժամանակի, տեղի, ձևի, չափի հարաբերություններ, (Ս.Աբրահամյան, 1976, էջ 111): Տվյալ բառակապակցության մեջ կուղեկցող մակրայը ձևի պարագա է:

Նույն բառակապակցությունը մեկնաբաններ անմիջական բաղադրիչների քերականությամբ տեսնեցին: Բառակապակցությունն արտածման նկարագրություններից պարզ երևում է, որ արտածման նշանակող փուլում E -ն և VP -ն անմիջական բաղադրիչներ են: Եվ քանի որ E և VP բաղադրիչներից հետագայում ստանում ենք համապատասխանաբար կուղեկցող և քայլում էր ինվորները, ապա նրանք նույնպես անմիջական բաղադրիչներ են, որոնցից կուղեկցող բաղադրիչը մակրայ է: Հետևաբար, քայլում էր բաղադրիչը աշտահայտելու է դուր-

ծողութք յան կամ եղելութք յան իմաստ (տվյալ դեպքում այն բայ է):
 Հենվելով ծայրագույն միավորների գոյարանական վերլուծութք յան
 վրա, գտնում ենք, որ մակբայր կախյալ բաղադրիչ է, իսկ գործո-
 ղութք յան կամ եղելութք յան իմաստ արտահայտող բաղադրիչը՝ այսինքն
 բայը՝ կախունակ: Ինչպես տեսանք, այսպիսի պարզ իրողութք լուծնեում
 նախադասութք յան անդամների քերականութք յան և անմիջական բաղադրիչ-
 ների քերականութք յան օգնութք յամբ կատարված վերլուծութք յան ար-
 դյունքները համընկնում են:

Փորձենք ընդարձակել երկեսային բառակապակցութլուներ, օրինակ,
 ամոթու կուզեկուզ քայլում էր: Այս բառակապակցութլուների ար-
 տածման ընթացքը հետևյալն է՝ $I = (VP)$, $VP = ((D)(VP))$,

$VP = ((d)(VP))$,

$VP = (d)((E)(VP))$,

$VP = ((d)((e)(VP)))$, $VP = ((d)((e)(v)))$, և վերջապես
 $VP =$ ամոթու կուզեկուզ քայլում էր: Նախ սերված բայ կան
 բառակապակցութլուներ նկարագրենք նախադասութլուների անդամների քե-
 րականութլուների օգնութլումբ: Այստեղ քայլում էր բայը կլինի ստո-
 ղող յայ, իսկ ամոթու և կուզեկուզ մակբայները՝ համապատասխա-
 նաբար պատճառանպատակային և ձեռն պարագաներ, լրացնելով ստո-
 ղող յային, քանի որ, ըստ այս քերականութլուների, լրացում կարող է ստա-
 նալ միայն նախադասութլուների անդամը, ապա ամոթու մակբայը պետք
 է լրացնի քայլում էր բային, իբրեւ ստորոգյալի, յիշամանակակից
 հայրց լեզու, աշխատութլուների մեջ պարզորեն նշված է, որ պատճառի
 պարագան գուց է տալիս գործողութլուների կատարման պատճառը:
 (Ս. Արբաշամյան, 1976, էջ 260):

Հարց է ծագում, թե մեր կողմից բերած օրինակի մեջ ո՞ր լեզվա-
 կան միավորն է դրսևորում գործողութլուներ: Ըստ նախադասութլուների
 անդամների կադապարի, իհարկե, գործողութլուներ դրսևորում է ստո-
 ղող յայը, որն իր հերթին արտահայտված է բայով: Այսպիսով, քայ-
 լում էր բայը տրված բառակապակցութլուների մեջ կուեննա նրկու հա-
 վասարադոր լրացումներ: Սակայն, ըստ էութլուների, նրանք հավասարա-
 զոր չեն, թեկուզ այն պարզ պատճառով, որ դրանց տեղափոխմամբ
 ստացված բառակապակցութլուներ ընդունելի չէ ժամանակակից հայե-
 րենի համար*, կուզեկուզ ամոթու քայլում էր: Դա նախատվում
 է պրոֆ. Գ. Բ. Ջահուկյանի կողմից տրված զուտ մակբայական լրաց-
 մամբ բայական բառակապակցութլուների կադապարի օգնութլումբ (տե՛ս
 վերևում):

Համեմատաբար ընդարձակ նկարագրութլուներ ենք ստանում, երբ
 ամոթու կուզեկուզ քայլում էր բառակապակցութլուներ վեր-
 լուծում ենք անմիջական բաղադրիչների քերականութլուների օգնութլումբ:


Սկսենք բայական բառակապակցութլուների սերման սկզբնական փուլից:
 Այս փուլում ամոթու մակբայը հանդիսանում է մի բայական բա...

ռակապակցութեան (որը Հաջորդ փուլում դրսեւորւում է կուղեկուգ քայլում էր բառակապակցութեամբ) շարահանգսական ֆունկցիա ե հետեւաբար, բնորոշում է ալդ բառակապակցութեանը՝ դառնալով նրա լրացումը: Հաջորդ փուլում, ինչպիս նշեցինք, ստանում ենք կուղեկուգ քայլում էր բառակապակցութեանը, որի մեջ կուղեկուգ մակրայր լրացում է քայլում էր բային, իրեւ նրա շարահանգսական ֆունկցիա:

Այսպիսով՝ ամոթում մակրայր լրացում է ոչ թե քայլում էր բային, այլ ամբողջ կուղեկուգ քայլում էր բառակապակցութեանը: Իսկ վերջինս, Համաձայն բայական Հարադրութեան՝ մեր կողմից տրված սահմանման, ստանում է Հարադրութեան արժեք: Եւ իսկապէս, այն Հարցին թե (նա) ամոթու ի՞նչ էր անում, կհետեւի ոչ թե քայլում էր, այլ կուղեկուգ քայլում էր պատասխանը: Հետեւաբար ամոթում մակրայր կուղեկուգ քայլում էր բայական բառակապակցութեան լրացումն է՝ պատճառի պարագան, քանի որ ալդ երկու միավորները մեկ այլ ամբողջ ընդարձակ միավորի անմիջական բաղադրիչներն են: Ամոթում կուղեկուգ քայլում էր բառակապակցութեան այլ ընդարձակումների գեպքում, օրինակ (նա) հաճախ ամոթում կուղեկուգ քայլում էր, բայի նախադասութեան անդամների կադապարի ամոթում մակրայր մնում է քայլում էր բայի պատճառի պարագան: Նման ընդարձակման գեպքում ամբանում է սոսկ մի նոր՝ չափ ու քանակի, պարագա: Այլ բան է ստացվում, երբ հաճախ ամոթում կուղեկուգ քայլում էր բառակապակցութեանը նկարագրում ենք անմիջական բաղադրիչների քերականութեամբ: Նախ՝ հաճախ մակրայր ներդրութեամբ ենթակայի գործողութեանը դրսեւորվում է արդեն ամոթում կուղեկուգ քայլում էր բայական բառակապակցութեամբ, եւ, երկրորդ՝ վերջինս ստանում է Հարադրութեան արժեք, քանի որ կազմում է հաճախ մակրայր շարահանգսական ֆունկցիան: Ամոթում կուղեկուգ քայլում էր բառակապակցութեանը կապակցի իր Հարադրական արժեքը, եթե նրան բնորոշենք մեկ այլ մակրայր, իրեւ շարահանգսական ֆունկցիա: Այսպիսով, հերում ամոթում կուղեկուգ քայլում էր բառակապակցութեանը արտահայտում է այն իմաստը, որ անցյալ տեսչա նրա կատարած գործողութեանը ամոթում կուղեկուգ քայլելն էր, որն ստանում է մեկ լեկսայրի նշանակութեան:

Այսպիսով՝ Հաստատվում է այն փաստը, որ Հարադրութեանը դասվում է դինամիկ երեւոյթների թվին ե այն բացահայտելու համար անհրաժեշտ է ընտրել Համապատասխան Հաշվարկման համակարգ՝ «դիտակետ», այլապէս Հարադրութեանը կարող է դիտարկվել որպէս սովորական շարահանգսական կառուցվածք: Այսպէս օրինակ, (նա) հե-

րու դրսում հաճախ ամոթու կուզեկուզ քայլում էր բա-
յական բառակապակցության մեջ կարելի է առանձնացնել չորս բա-
յական հարադրություն:



Իթե դիտակետ ենք բնորում սերման առաջին մակարդակը, այս դժբա-
սում հաճախ ամոթու կուզեկուզ քայլում էր բառակապակ-
ցությունը ստանում է հարադրության արժեք, քանի որ նրա շարա-
Հյուսական ֆունկցիան հերու մակբայն է: Բալական է բառակապակ-
ցությունը սեղմել այնպես, որ արտաքսվի հերու մակբայր, ապա
այն կունենա երկու վերլուծություն, ա) դրսում մակբայր և հա-
ճախ ամոթու կուզեկուզ քայլում էր բառակապակցությունը
կկապվեն պարագայական կապով և մեկը կհանդիսանա մյուսի շարա-
Հյուսական ֆունկցիան, և բ) հաճախ ամոթու կուզեկուզ քայ-
լում էր բառակապակցությունը կստանա հարադրության արժեք, քա-
նի որ այն կարող ենք բնորոշել դրսում կամ հերու մակբայնեով՝
իբրե շարահյուսական ֆունկցիա: Նույն բանը կարելի է պնդել II, III
և IV մակարդակների վերաբերյալ: Իթե երկրորդ մակարդակի նկատ-
մամբ հաճախ ամոթու կուզեկուզ քայլում էր բառակապակ-
ցությունը ստանում է բայական հարադրության արժեք, ապա եր-
րորդ մակարդակի նկատմամբ այդ հարադրությունը ըստ հաճախ
մակբայի քայքայվում է և ստանում ենք բառակապակցություն պա-
րագայական հարաբերությամբ, որը գոյություն ունի մակբայի (հա-
ճախ) և բառակապակցության (ամոթու կուզեկուզ քայլում էր)
միավորների միջև:

Զուտ մակբայական ստորադասությամբ բայական բառակապակցու-
թյունները անմիջական բաղադրիչների քերականությամբ նկարագրե-
լիս հանգում ենք մի եզրակացության, որն արտահայտվում է ուղիղ
և հակադարձ հետեյալ դատողություններով:

Ուղիղ դատողություն. եթե ունենք մակբայ և բայ (կամ
մակբայական ստորադասությամբ բայական բառակապակցություն),
որոնք կապված են պարագայական հարաբերությամբ, ապա այդ բա-
ռախմբին՝ իբրե շարահյուսական ֆունկցիա, մակբայ ավելացնելիս
մակբայ < բայ բառախումբը (կամ մակբայական ստորադասությամբ


բայական բառակապակցությունը) կստանա հարադրության արժեք:

Հակադարձ դատողությունը. եթե ունենք մակրայական ստորադասությամբ բայական բառակապակցություն, որի շարահյուսական ֆունկցիան մակրայ է, ապա վերջինս բառախմբից հեռացնելիս բայական հարադրական արժեքը անցնում է երկրորդ պլան, իր տեղը զիջելով պարագայական հարաբերություններին:

Վերջացնելով զուտ մակրայական ստորադասությամբ բայական բառակապակցությունների քննությունը, դիտարկենք ևս երկու դեպք, որոնց նկատմամբ արված եզրակացությունը կօգտագործենք անվանում < բայ բառակապակցությունները հետազոտելիս:

Դիցուք ունենք (նա) դրսում քայլում էր ամոթու բայական բառակապակցությունը: Նախադասության անդամների կադապարով նկարադրելիս կունենա մեկ մեկնաբանություն՝ քայլում էր - ստորոգյալ, ամոթու - պատճառի պարագա և դրսում - տեղի պարագա:

Անմիջական բաղադրիչների քերականության օգնությամբ վերլուծելիս (նա) դրսում քայլում էր ամոթու բառակապակցությունը կունենա երկու մեկնաբանություն:



Առաջին մեկնաբանությամբ քայլում էր բայի լրացումը ամոթում մակրային է, իսկ դրսում մակրայը լրացնում է ամբողջ քայլում էր ամոթում բառակապակցությանը: Բառակապակցության մեկնաբանությունը հետևյալն է. «(նա) դրսում (և ոչ թե մի այլ տեղ) քայլում էր ամոթում, այսինքն՝ ամոթից քայլելու գործողությունը կատարվում է դրսում: Երկրորդ մեկնաբանությամբ քայլում էր բայի լրացումը դրսում մակրային է, իսկ ամոթում մակրայը լրացնում է դրսում քայլում էր բառակապակցությանը. «(նա) դրսում քայլում էր ամոթում (և ոչ թե մեկ այլ պատճառից), դրսում քայլելու պատճառը ամոթի դեպքումն է: (նա) դրսում քայլում էր ամոթում բառակապակցության մեջ երկու իմաստների առկայությունը պատճառարանվում է առանձին արտածման սխեմաներով:

Երկրորդ դեպքը հետևյալն է: Ինթադրենք ունենք երկու բայական բառակապակցություններ՝ ա) (նա) դրսում քայլում էր և

բ)(նա) կուզ եկուզ քա յլու մ էր: Նախադասութեան անդամներն
կաղսպարը Հնարավորութիւնն չի տալիս բացահայտելու այս երկու բա-
ռակապակցութիւնների կառուցվածքային առանձնահատկութիւնները:
Այլ կերպ ասած՝ նախադասութեան անդամներն կաղսպարի բացատրողա-
կուն ուժը բաւարար չէ բացահայտելու կառուցվածքային տարբերու-
թիւններն զրոսում քա յլու մ էր և կուզ եկուզ քա յլու մ էր բա-
ռակապակցութիւնների միջե: Բաւական է նախադասութեան անդամնե-
րի կաղսպարը փոխարինել անմիջական բաղադրիչներին կաղսպարով, ան-
միջական ի հայտ են դալիս այդ երկու բառակապակցութիւնների ինչ-
պէս կառուցվածքային նույնութիւնները, այնպէս էլ տարբերութիւն-
ները: Դրանք նույնանում են նրանով, որ ա)երկուսում էլ՝ բայի և մակ-
բայի միջե գոյութիւնն ունի կախումնայնութիւնն, որտեղ կախումնակ
տարրը բայն է, իսկ կախյալը՝ մակբայը, բ)երկու բառակապակցութեան
համար կարելի է ընտրել մակբայ՝ իրեւ շարահյուսական ֆունկցիա, օրի-
նակ՝ երկու դրոսում քա յլու մ էր, երկու մոթու քա յլու մ էր
Բերած բայական բառակապակցութիւնները տարբերվում են նրանով,
որ առաջինի հետ կարելի է կատարել միջուկի ընդարձակման դործողու-
թիւնն, իսկ երկրորդի հետ՝ ոչ: Օրինակ, (նա) դրոսում քա յլու մ էր
բառակապակցութեանից կարելի է ստանալ (նա) դրոսում հաճախ քայ-
լում էր բառակապակցութեանը, իսկ (նա) կուզ եկուզ քա յլու մ
էր բառակապակցութեանից չի կարելի ստանալ * (նա) կուզ եկուզ հա-
ճախ քա յլու մ էր կապակցութիւն: Այստեղից կարող ենք եզրակաց-
նել, որ կուզ եկուզ քա յլու մ էր բառակապակցութեան հարադրային
արժեքը ավելի մեծ է դրոսում քա յլու մ էր բառակապակցութեան
հարադրային արժեքից: Այլ կերպ ասած՝ կուզ եկուզ քա յլու մ էր
բառակապակցութեանը ավելի հեշտութեամբ է վերածվում բայական
հարադրութեան, քան դրոսում քա յլու մ էր բառակապակցութեանը:
Այդ բացատրվում է նրանով, որ վերջինիս հարադրական արժեքը փոքր
է, որը պատճառ է դառնում հարադրութեան հեշտ քայքայմանը:

Սրանով ավարտենք դուտ մակբայական ստորադասութեամբ բայական
բառակապակցութեանների քննութիւնը և անցնենք բուն հարադրական
երեւութիւնների նկարագրութեանը:

* * *

Վերեւում մենք նշեցինք, որ ժամանակակից հայերենում NV կառույ-
ցը օժտված է բացառիկ մեծ դինամիզմով, որը Հնարավորութիւնն է
տալիս հեշտութեամբ կազմել հարադրական կազմութիւններ: Մակրա-
յական լրացմամբ բայական հարադրութիւնների վերաբերյալ արված
ուղիղ և հակադարձ դատողութիւնները N<V կառուցվածքների նկատ-
մամբ փորձարկելու համար ընտրենք անմիջական բաղադրիչների բերա-
կանութեան մի տարբերակ:

$$\Sigma = \left\{ \begin{array}{l} I, VP, NP, \\ N, V, AP, \\ A, D, DP \end{array} \right\}, F = \left\{ \begin{array}{l} I \rightarrow (VP), VP \rightarrow (NP)(VP), NP \rightarrow \\ \rightarrow (NP)(VP), NP \rightarrow (DP)(A), AP \rightarrow A, \\ DP \rightarrow D, NP \rightarrow N, VP \rightarrow (DP)(VP), \\ DP \rightarrow (AP)(DP), VP \rightarrow V \end{array} \right\}$$

որտեղ I – ն ներառված է իրրե կյակետային ոչ-ծալրադույն տարր (բառակապակցություն) ,

NP – ն՝ անվանական բառակապակցություն,

N – ն՝ անվանական բառ,

AP – ն՝ անվանական որոշչային բառակապակցություն,

VP – ն՝ բայական բառակապակցություն,

V – ն՝ բայական բառ,

A – ն՝ անվան որոշիչ բառ,

DP – ն՝ բայական որոշչային բառակապակցություն,

D – ն՝ բայական որոշիչ բառ:

Շարադրանքը չծանրաբեռնելու և ավելորդ կրկնություններից խուսափելու նպատակով չենք քննարկի ալիպիսի բառակապակցություններ, որոնք սկզբունքային նոր խնդիրներ առաջ չեն քաշում, մասնավորապես այն դեպքերը, երբ բառակապակցությունների շարահյուսական ֆունկցիան լիովին համընկնում է միջուկի շարահյուսական ֆունկցիային:

Մենք չենք քննարկի նաև $NP \rightarrow DP$ արտածման կանոնի կիրառմամբ ստացված բառակապակցությունները, որովհետեւ մակրայ $<$ զոյական կառուցում քի բառակապակցություններ, ինչպես օրինակ՝ շտապ կառուցում,՝ արտաքուստ հանգստություն, ցայահանք նամակ և այլն, ժամանակակից հայերենում հազվադեպ են: Դրանց առկայությունը պայմանավորված է երկու գործոններով՝ 1) գերադաս անդամի բայական կամ ածականական ծագմամբ, 2) զոյականին լրացնող և մակրայ ստորադաս անդամ ունեցող գերբայի գեղջումով: Մակրայ ստորադաս անդամը, ի տարբերություն բայական և ածականական հարաբերակից բառակապակցությունների, զոյական բառակապակցություններում ձևը է բերում ածականական արժեք, այդ իսկ պատճառով նախադասության մեջ կատարելով առանձին անդամի պաշտոն, հանդես է գալիս որպես որոշիչ (Ս.Աբրահամյան, 1976, էջ 72–73):

Բայական հարադրության վերաբերյալ մեր կողմից տրված սահմանումը հիմնավորելու համար պապագուցենք հետևյալ պնդումը. խոսքի արտահայտության պլանում NV կառույցը դրսևորելիս N և V բաղադրիչների միջև հաստատվում է հարադրական հարաբերություններ, եթե անվան ստորադասությամբ բայական բառակապակցության սերելիս անհրաժեշտորեն առաջ է գալիս արտածման կանոնների

VP $\rightarrow$ (DP)(VP), VP $\rightarrow$ (NP)(VP) Հաջորդականություններ

Արդեն մի քանի անգամ նշել ենք, որ իրականության մեջ տեղի ունեցող գործողությունների և եղելությունների լեզվական անվանացումը կատարվում է բայ խոսքի մասի օգնությամբ փորձարարական եղանակով կարող ենք որոշել առանձին ֆիզիկական մեծություններ, որոնք գաղափար են տալիս այդ գործողությունների քանակական և որակական կազմի վերաբերյալ։ Այդ դեպքում խոսքի արտահայտության պլանում առաջ են գալիս բայական որոշիչ բառեր՝ արտահայտված մակրայիներով կամ մակրայական բառակապակցություններով, որոնք ընդունում են բայ կամ բայական կապակցություն իրեն շարահյուսական ֆունկցիայի Հետևաբար, որպեսզի NV կառույցը խոսքում դրսևորվելիս ստանա միայն հարադրական պոեմ, անհրաժեշտ է, որ նրա շարահյուսական ֆունկցիան հանդիսանա բայական որոշիչ բառ կամ բառակապակցություն և ակադեմիկ է, երբ բացակայում է բայական որոշիչը, հարադրական կապի կողքին N և V բաղադրիչների միջև առաջ կգան խնդրային կամ պարագայական հարաբերություններ։ Այլ կերպ ասած՝ N և V բաղադրիչների միջև գոյություն հարադրական հարաբերություն ստեղծելու համար արտածման համակարգում պետք է տեղ գտնի VP $\rightarrow$ (DP)(VP) արտածման կանոնը։ Այնուհետև եթե խոսքը գնում է գոյականի ստորագասությունով հարադրական կազմություններին, ապա արտածման հաջորդությունում օգտվելու ենք VP $\rightarrow$ (NP)(VP) արտածման կանոնից։ Որքան մեծ ստացվում է, որ NV կառույցին գոյություն հարադրական հատկանիշներ վերագրելու համար հարկավոր է հաջորդաբար կիրառել VP $\rightarrow$ (DP)(VP) և VP $\rightarrow$ (NP)(VP) կանոնները։ Այս դեպքում կխոսենք անվանարայական հարադրության մասին յայն առումով։ Իսկ եթե այնուհետև կիրառենք DP $\rightarrow$ D, NP $\rightarrow$ N արտածման կանոնները, ապա կարող ենք խոսել հաղադրության մասին նեղ առումով։

Այժմ փորձարկենք մեր կողմից տրված գատողությունները ժամանակակից հայերենի խոսքային համատեքստերի նկատմամբ։ Դրա համար լրացնենք $\langle \Sigma, F \rangle$ համակարգը դրոշ, շարժեցին, վայրէջք, կատարեց, կարմիր, կրկին, երեկ, բարձր, չափաչանց ծայրագույն տարրերով և N $\rightarrow$ դրոշ, N $\rightarrow$ վայրէջք, V $\rightarrow$ շարժեցին, V $\rightarrow$ կատարեց, A $\rightarrow$ կարմիր, A $\rightarrow$ բարձր, D $\rightarrow$ կրկին, D $\rightarrow$ երեկ արտածման կանոններով։ Հարկ է նշել, որ մեր քննության ընթացքում անհրաժեշտ կլինի ներմուծել նաև այլ ծայրագույն տարրեր և արտածման կանոններ։ Շարադրանքը չբարդացնելու նպատակով լրացումները կանենք առանց հատուկ նշումների։ Ասենք նաև այն, որ ամեն մի դեպք նկարագրելիս գրանցման սկզբում մենք կնկարկայանք տվյալ բառակապակցությունը, իսկ առանձին աղյուսակով՝ կիրառված արտածման կանոնները և ստացված արդյունքը։

Քննարկենք բոլոր դեպքերը առանձին-առանձին։

1) VP = NV, (նրանք) դրոշ շարժեցին, (ինքնաթիռը)	վայրէջք կատարեց
կիրառված արտածման կանոնը	ստացված արդյունքը
1	2
$I \rightarrow (VP)$	(VP)
$VP \rightarrow (NP)(VP)$	$((NP)(VP))$
$NP \rightarrow N$	$((N)(VP))$
$VP \rightarrow V$	$((N)(V))$
$N \rightarrow \text{դրոշ}$	$((\text{դրոշ})(V))$
$V \rightarrow \text{շարժեցին}$	$((\text{դրոշ})(\text{շարժեցին}))$
$N \rightarrow \text{վայրէջք}$	$((\text{վայրէջք})(V))$
$V \rightarrow \text{կատարեց}$	$((\text{վայրէջք})(\text{կատարեց}))$

Բայական բառակապակցության $VP = N$ արտածումը լայն տարածում ունի ժամանակակից հայերենում և ըստ նախադասության անդամների կադպարի, N և V բաղադրիչների միջև առկա է խնդրային կամ պարագայական հարաբերություն: Մյուս կողմից վայրէջք կատարեց բայական բառակապակցությունը հարադիր բայ է: Ստացվում է, որ NV կառույցն ունի երկակի դրսևորում, 1) որպես սովորական շարահյուսական կառուցվածք՝ խնդրային կամ պարագայական հարաբերությամբ և 2) հարադիր բայ: NV կառույցի ալյսպիսի դինամիզմը լիովին նկարագրվում է անմիջական բաղադրիչների քերականությամբ: Բանն այն է, որ NV կառույցը հեշտությամբ վերածվում է մակբայի շարահյուսական ֆունկցիայի և դրսևորվում է հարադրական արժեքով: Այն դեպքում, երբ մակբայը բացակայում է, ապա հավասարապես կարող են հանդես գալ NV կառույցի երկու դրսևորումները: Ալյսպես օրինակ, եթե դիտարկենք նվեր տալ բառակապակցությունը, ապա կարող ենք պնդել, որ 1) նվեր և տալ բաղադրիչների միջև գոյություն ունի խնդրային հարաբերություն, քանի որ նվեր գոյականը հանդես է գալիս իբրև տալ բայի խնդրավոր օբյեկտ, կամ ըստ անմիջական բաղադրիչների քերականությամբ, առաջինը երկրորդի (կամ հակառակը) շարահյուսական ֆունկցիան է և նրանց միջև կա կախումայնություն, և 2) նվեր տալ բառակապակցությունը հարադիր բայ է, քանի որ կան համատեքստեր, որտեղ նվեր տալ կապակցությունը կարելի է հեշտությամբ փոխարինել նվիրել բայով:

Ի՞նչն է նվեր տալ բառակապակցությամբ մեկնաբանության երկակիու-

թյունը ակնհայտ է, ապա մեր հետագա քննությունն համար ընտրենք այնպիսի բաղական բառակապակցություններ, օրինակ (նա) դրոշ շարժվեց, որոնց մեկնարանություն միակությունը, իբրև խնդրային կամ պարագայական կապով շարահյուսական կապակցություն, առաջին հայացքից կասկած չի հարուցում: Որպեսզի ցույց տանք, որ այդ կարգի բաղական բառակապակցությունները նույնպես ստանում են հարադրություն հատկանիշներ, անհրաժեշտություն դնքում մենք կգուգադրենք անվիճելի հարադիր բայերի հետ (վերցնենք, օրինակ, լաց լինելի հարադիր բայը):

2) VP=ANV, (նա) կարմիր դրոշ շարժեց,

(ինքնաթիռը) փափուկ վայրէջք կատարեց

1

2

I → (VP)

(VP)

VP → (NP)(VP)

((NP)(VP))

NP → (AP)(NP)

((AP)(NP)(VP))

AP → A

((A)(NP)(VP))

NP → N

((A)(N)(VP))

VP → V

((A)(N)(V))

A → կարմիր

((կարմիր(N))(V))

A → փափուկ

((փափուկ(N))(V))

N → դրոշ

((կարմիր(դրոշ))(V))

N → վայրէջք

((փափուկ(վայրէջք))(V))

V → շարժեց

((կարմիր(դրոշ))(շարժեց))


V → կատարեց

((փափուկ(վայրէջք))(կատարեց))

ի տարբերություն նախորդ արտածման, VP=ANV բառակապակցության մեջ ավելի են ուժեղացված խնդրային կամ պարագայական հարաբերությունները զոյականի ու բայի միջև, թեև այդ հարաբերությունները ստեղծված են ոչ թե ուղղակիորեն, այլ բայի և անվանական բառակապակցությունների միջոցով: Բայի շարահյուսական ֆունկցիան ոչ թե գոյականն է, այլ անվանական բառակապակցությունը, որի միջուկը գոյականն է: Այսպիսով՝ նախ AN բառակապակցությունը վերադրվում են միջուկ-գոյականի հատկանիշներ, որոնք թույլ են տալիս ստեղծել խնդրային կամ պարագայական հարաբերություններ AN բառակապակցության ու բայի միջև, իսկ այնուհետև, քանի որ գոյական-միջուկի


չարակարգային ֆունկցիան համարվեք է AN բառակապակցութ-
թյան շարաշյուսական ֆունկցիային, գոյականը ստանձնում է խնդրի
կամ պարագայի ֆունկցիա:

Բերենք կոնկրետ օրինակ. $VP = ANV$ արտածմանը համապատասխա-
նում է կարմիր գրոշ շարժեց բառակապակցությունը, որի ար-
տածման ծառը տրված է ներքևում:



Արտածման ծառի վրա պարզ երևում է, որ գրոշ և շարժեց
միավորները անմիջական շարաշյուսական կապ չունեն: Այն ստեղծե-
լու համար անհրաժեշտ է սեղմել AN բառակապակցությունը: Այդ
գործողությունը կհանգեցնի նախորդ դեպքին (գրոշ շարժեց):
Ըստ նախադասութային անդամների կադայարի, գրոշ գոյականը շար-
ժեց բայի խնդիրն է, իսկ կարմիր ածականը՝ գրոշ գոյականի լրացումը:
Ըստ անմիջական բաղադրիչների կադայարի գրոշ գոյականի լրացումը
կարմիր ածականն է, որովհետև ածական գոյական ծայրագույն միավոր-
ների դեպքում կախյալ բաղադրիչը ածականն է, իսկ կախունակը՝ գոյականը:
Սակայն շարժեց բայի խնդիրը կարմիր գրոշ բառակապակցությունն
է քանի որ վերջինս է հանդիսանում բայի շարաշյուսական ֆունկցիան: Դր-
ոշ գոյականը այնքանով է խնդիր, որքանով այն կազմում է AN բառա-
կապակցության միջուկը և անհրաժեշտության դեպքում կարող է իր վրա
վերցնել NV բառակապակցության շարաշյուսական ֆունկցիաները:

Խնդրային կամ պարագայական կապի ուժեղացման երևույթը լավ
երևում է երկրորդ օրինակում (ինքնաթիռը) փափուկ վայրէջք
կատարեց:



Եթե վայրէջք կատարեց բառակապակցութիւնը հարադիր բայ է, ապա փափուկ վայրէջք կատարեց բառակապակցութեան մեջ հարադիրային հատկութիւնները համարյա բացակայում են, քանի որ վայրէջք գոյականը որոշակիութեամբ հատկանիշ է ստացել և բնորոշվում է ոչ թե վայրէջք ընդհանրապես, այլ իբրեւ փափուկ վայրէջք: Փափուկ որոշիչը թույլ է տալիս գոյականին հեշտութեամբ առկայացվելու՝ (ինքնաթիւ) փափուկ վայրէջքը կատարեց Իսկ այս երեւոյթը մասնագիտական դրականութեան մեջ բնորոշված է որպէս հարադրութեան քայքայում (Ա. Աբրահամյան, 1962, էջ 172):

3. $VP = NDV$, դրոշ կրկին շարժեցին

1

2

$I \rightarrow (VP)$

(VP)

$VP \rightarrow (NP)(VP)$

$((NP)(VP))$

$VP \rightarrow (DP)(VP)$

$((NP)((DP)(VP)))$

$NP \rightarrow N$

$((N)((DP)(VP)))$

$DP \rightarrow D$

$((N)((D)(VP)))$

$VP \rightarrow V$

$((N)((D)(V)))$

$N \rightarrow$ դրոշ

$((դրոշ)((D)(V)))$


$D \rightarrow$ կրկին

$((դրոշ)((կրկին)(V)))$

$V \rightarrow$ շարժեցին

$((դրոշ)((կրկին)(շարժեցին)))$

Հեշտութեամբ կարող ենք պնդել, որ $VP = NDV$ արտածման ընթացքում գոյականի և բայի միջեւ հարադրական հարաբերութիւններ չեն առաջանում: Դրա համար բավարար է թեկուզ այն փաստը, որ մակրայի շարահլուսական ֆունկցիան ոչ թե ամբողջ NV դրսեւորումն է, այլ միայն բայական բաղադրիչը (տես արտածման ծառը):



Առանձնահատուկ դեպքերում, երբ $DV \rightarrow V$, կարելի է խոսել հարադիրային հարաբերութիւնների վերաբերյալ գոյականի և DV բառա-

կապակցութիւն միջև, օրինակ երևկ հոդ կրկին բաժանեցին →
 → երևկ հոդ կրկնաբաժանեցին:

4. VP = ANDV, կարմիր դրոշներ կրկին շարժեցին

1	2
I → (VP)	(VP)
VP → (NP)(VP)	((NP)(VP))
NP → (AP)(NP)	(((AP)(NP))(VP))
VP → (DP)(VP)	(((AP)(NP))((DP)(VP)))
AP → A	(((A)(NP))((DP)(VP)))
NP → N	(((A)(N))((DP)(VP)))
DP → D	(((A)(N))((D)(VP)))
VP → V	(((A)(N))((D)(V)))
A → կարմիր	(((կարմիր)(N))((D)(V)))
N → դրոշներ	(((կարմիր)(դրոշներ)((D)(V)))
D → կրկին	(((կարմիր)(դրոշներ)((կրկին)(V)))
V → շարժեցին	(((կարմիր)(դրոշներ)((կրկին)(շարժեցին)))


Այս արտածումը ամբողջովին կրկնում է նախորդը, միայն այն տարբերութիւնով, որ գոյականը իբրև կախունակ բաղադրիչ ստացել է որոշիչ (կարմիր): Ըստ նախադասութեան անդամների կաղապարի, դրոշներ գոյականը շարժեցին բայի խնդիրն է, որոնցից (գոյական, բայ) ամեն մեկն ունի իր լրացումը: Ըստ անմիջական բաղադրիչների քերականութեան, դրոշներ և շարժեցին բառերի կապը անմիջական չէ: Նրանց կապը շարակարգային է: Շարահյուսական կապ գոյութիւնն ունի անմիջական (կարմիր դրոշներ) և բայական (կրկին շարժեցին) բառակապակցութիւնների միջև: Ի՞նչ քանի որ անմիջական բառակապակցութեան միջուկը դրոշներ գոյականն է, իսկ բայական բառակապակցութեան միջուկը՝ շարժեցին բայը, ապա կախումնային հարաբերութիւնն անցնում է նաև դրոշներ և շարժեցին բառերին:

5. VP = DNV, կրկին դրոշ շարժեց, կրկին վարէջք կատարեց

1	2
I → (VP)	(NP)
VP → (DP)(VP)	((DP)(VP))

$VP \rightarrow (NP)(VP)$	$((DP)((NP)(VP)))$
$VP \rightarrow V$	$((DP)((NP)(V)))$
$NP \rightarrow N$	$((DP)((N)(V)))$
$DP \rightarrow D$	$((D)((N)(V)))$
$V \rightarrow \text{շարժեց}$	$((D)((N)(\text{շարժեց})))$
$V \rightarrow \text{կատարեց}$	$((D)((N)(\text{կատարեց})))$
$N \rightarrow \text{դրոշ}$	$((D)((\text{դրոշ})(\text{շարժեց})))$
$N \rightarrow \text{վալրէջք}$	$((D)((\text{վալրէջք})(\text{կատարեց})))$
$D \rightarrow \text{կրկին}$	$(\text{կրկին})((\text{դրոշ})(\text{շարժեց}))$
	$(\text{կրկին})((\text{վալրէջք})(\text{կատարեց}))$

Որպես նմուշ բերենք կրկին դրոշ շարժեց բառակապակցության արտածման ծառը:



Արտածման ծառից պարզ երևում է, որ կրկին մակբայր ամբողջ $N' < V$ կառուցվածքի շարահյուսական ֆունկցիան է: Այդ նշանակում է, որ դրոշ շարժեց բայական բառակապակցությունն ստանում է հարադրության արժեք և դրսևորում է մեկ լեկսալ Այս նույն կադպարով է սերվում լաց լինել բառակապակցությունը, որը մասնագիտական դրականության մեջ դիտարկվում է որպես հարադիր բայ:

Ըստ դասական ներկայացման կրկին դրոշ շարժեց բառակապակցության մեջ կրկին և դրոշ բառերը շարժեց բայի լրացումներն են՝ առաջինը պարագա, իսկ երկրորդը խնդիր: Ավելի մանրամասն նկարագրել հնարավոր չէ:

Ըստ անմիջական բաղադրիչների քերականությունից, կրկին դրոշ շարժեց բառակապակցության համար ստանում ենք ավելի ընդար-

ձակ նկարագրությունն, Նախ, ինչպես նշեցինք, կրկին մակրայի շարահյուսական ֆունկցիան դրոշ շարժեց բառակապակցությունն է, բայտ որի դառնում է նրա լրացումը: Այստեղ վերլուծությունը երկակի է: Քանի որ կրկին է դրոշ շարժեց միավորները արտածման առաջին մակարդակում հանդես են գալիս ծայրագույն միավորների դերում և, միաժամանակ, մակրայի ունի կախյալության հատկանիշ, ապա կրկին մակրայի լրացնելու է դրոշ շարժեց բառակապակցությունը: Մյուս կողմից դրոշ շարժեց բառակապակցության մեջ շարժեց բայի կախունակ բաղադրիչն է, որի պատճառով նրա շարակարգային ֆունկցիան կրկին մակրայի նկատմամբ համընկնում է դրոշ շարժեց բառակապակցության շարահյուսական ֆունկցիայի հետ, ապա կրկին մակրայի լրացնում է նաև շարժեց բային: Այս մեկնաբանությամբ դասական և անմիջական բաղադրիչների քերականությամբ դասական նկարագրությունները համընկնում են:

Անմիջական բաղադրիչների քերականությամբ տրվում է կրկին դրոշ շարժեց բառակապակցության մի մեկնաբանություն ևս, որտեղ դրոշ շարժեց բառակապակցությունը դիտվում է իբրև հարագիր բայի ինչու: Նախ արտածման տեսակետից ոչ մի տարբերություն չկա կրկին լաց եղավ (լինել) և կրկին դրոշ շարժեց բառակապակցությունների միջև, երբ առաջինը դիտվում է որպես հարագիր բայ, իսկ երկրորդը՝ ոչ:

Աշխատենք պարզել երեւույթը:

Ոչ մի իմաստային վերլուծություն չի կարող ժխտել այն, որ առաջին բառակապակցության մեջ կրկին անգամ խլած գործողությունը լաց լինելն է, իսկ երկրորդ բառակապակցության մեջ՝ դրոշ շարժելը: Ո՛րեւմե, ի՞նչ դրոշ շարժեց բառակապակցության մեջ արտահայտված գործողությունը շարժելն է, ապա կրկին դրոշ շարժեց բառակապակցության մեջ արտահայտված գործողությունը դրոշ շարժելն է: Այս լաց եղավ և դրոշ շարժեց բառակապակցությունների նմանությունն է, որի շնորհիվ վերջինս հասնում է հարագրության արժեքի:

Մյուս կողմից դրոշ շարժեց բառակապակցությունն ունի դրոշ կրկին շարժեց ընդարձակում (տես երրորդ արտածումը), այսինքն $VP \rightarrow NPVP$ արտածումից հետո կիրառելի են $VP \rightarrow (DP)(VP)$, $DP \rightarrow D$, $VP \rightarrow V$ արտածման կանոնները: Դրանք կիրառելի չեն լաց եղավ բառակապակցության արտածման դեպքում: $VP \rightarrow (NP)(VP)$ կանոնից հետո թմ դրոշ շարժեց և թե՛ լաց եղավ բառակապակցությունների արտածման համար կիրառվում են $VP \rightarrow V$, $NP \rightarrow N$ արտածման կանոնները: Այս պատճառով լաց եղավ բառակապակցությունն ունի մի արտածում, որը և հարագիր բայի արտածումն է: Նշենք, որ ժամանակակից հայերենի բոլոր հարագիր բայերը սերվում են այս կադա-

պարով, օրինակ, (նա) կրկին լաց եղավ, կրկին դուրս եկավ, երեկ դուրս եկավ, երեկ վալրէջք կատարեց և այլն:

Բայական բառակապակցության արտածման այս տարբերակը հանգեցնում է մի դատողության, որ եթե նախադասության մեջ որեէ դիրքում գտնվում է մակբայ, ապա նրա շարահյուսական ֆունկցիայի դերում կարող է հանդես գալ այդ մակբայից դեպի աջ մինչև բայ ընկած հատվածը: Եթե այս թեզը հաստատվի տեքստերի լայն զանգվածի փորձարկմամբ, ապա կստանանք մի եղանակ՝ նախադասության մեջ բայական բառակապակցությունները սահմանադատելու համար:

Այստեղ հարկ է նշել մի փաստ ևս: Ժամանակակից հայերենում, թեև սակավ է հանդիպում, հնարավոր է գոյականի, իրոք միջուկ, ընդարձակումը մակբայով: Այդ պատճառով $VP = DNV$ կառույցը ժամանակակից հայերենում կունենա իր երկրորդ դրսևորումը՝ ինչպես, (նա) ցպտահանջ նամակ ստացավ: Նման դեպքի մենք կհանդիպենք նաև հայորդ արտածման ժամանակ: Այստեղ արտասովոր բան չկա եթե նկատի ունենանք այն, որ մեզ հայտնի է $VP = (AN)V$ արտածումը Տարբերությունն այն է, որ գոյականը ածականով ընդարձակվելու փոխարեն ընդարձակվել է գոյականով: Այդ պայմանավորվում է երկու դրոժոնով՝ 1) գերադաս անդամի (միջուկի) բայական կամ ածականական ծագմամբ, երբ գոյականական բառակապակցությունը կրկնում է հարաբերակից գոյականի կամ բառակապակցության կառուցվածքը (չտապ կառուցել-չտապ կառուցում եայլն), 2) գոյականին լրացնող մակբայ ստորադաս անդամ ունեցող դերբայի զինչումով (ցպահանջ նամակ եայլն) (Ս. Աբրահամյան, 1976, էջ 72-73):

6. $VP = DNDV$, երեկ դրոշներ կրկին շարժեցին

1

2

$I \rightarrow (VP)$	(VP)
$VP \rightarrow (DP)(VP)$	$((DP)(VP))$
$VP \rightarrow (NP)(VP)$	$((DP)((NP)(VP)))$
$VP \rightarrow (DP)(VP)$	$((DP)((NP)((DP)(VP)))$
$DP \rightarrow D$	$((D)((NP)((DP)(VP)))$
$NP \rightarrow N$	$((D)((N)((DP)(VP)))$
$VP \rightarrow V$	$((D)((N)((DP)(V)))$
$DP \rightarrow D$	$((D)((N)((D)(V)))$
$((երեկ)((դրոշներ)((կրկին)(շարժեցին)))$	

Եթե դիտենք առաջին մակբայի շարահյուսական ֆունկցիան, ապա կստանանք $VP = NDV$ արտածումը, որը քննարկեցինք վերևում (3-րդ

արտածում), եթե $VP \equiv NDV$ արտածումը հիմնականում դրսևորում էր որպես սովորական շարահյուսական կառուցվածք, ապա այստեղ ($VP \equiv DNDV$ արտածման դեպքում) NDV բաղադրիչը ստանում է հարադրության արժեք: Այսպես, արտածման III փուլից հետո ($((DP)((NP)((DP)(VP))))$) կիրառվող արտածման կանոնները չեն ընդարձակում արդյունքը եւ հետեւաբար, երեկ է դրոշներ կրկին շարժեցին միավորները մնում են անմիջական բաղադրիչներ: Այդ նշանակում է, որ երեկվա ընթացքում կատարած գործողությունը դրոշներ կրկին շարժելն է: Իհարկե, այս արտածման մեջ կարելի է նկատել նաեւ երեկ կրկին դրոշներ շարժեցին բառակապակցության այն իմաստը, երբ կրկին մակրայի շարահյուսական ֆունկցիան դրոշներ շարժեցին բառակապակցությունն էլիսկ երեկ մակրային՝ կրկին դրոշներ շարժեցին բառակապակցությունը: Սակայն նման արտածումների մեկնարանությունը այստեղ չենք զբաղվի, քանի որ դուռ մակրայական ստորադասությունը բառակապակցությունների քննությունը կատարված է վերեւում:

Ճիշտ է, բայական բառակապակցության բաղադրիչների քանակի ավելացումով հարադրական հարաբերությունները թուլանում են (սահնառժեղ հարադրական կապով օժտված է $N \leq V$ կառուցվածքի սակայն տվյալ բառակապակցության արտածման երրորդ փուլում իբրեւ ծայրագույն տարրեր հանդես են գալիս DP և $NPDPVP$ բաղադրիչները, որոնցից DP կախյալ է, հետեւաբար, $NPDPVP$ բաղադրիչը կլինի կախունակ բաղադրիչ և DP -ն ընդունում է $NPDPVP$ -ն, իսկ վերջինս ունի բայական հատկանիշներ: Ուրեմն՝ $NPDPVP$ դրսևորում է մեկ լեկսա, թեւ հենց $NPDPVP$ բաղադրիչի ներսում գործում են այլ՝ խնդրային և պարագայական հարաբերություններ: Անհրաժեշտություն ենք համարում կրկնել, որ հարադրական հարաբերությունները տվյալ կառույցի բաղադրիչների միջև նկատելի է միայն արտակառույցային, չդիտակետից, Հարադրական հարաբերությունը դիտվում է այդ կառույցի, իբրեւ մի շարահյուսական միավորի, կապը նախադասության կազմի մեջ մտնող այլ միավորների հետ: Եթե ցանկանում ենք նկարագրել NDV բառակապակցությունը, ապա իբրեւ ելակետ պետք է ընտրել այն մակարդակը, որտեղ այդ բառակապակցությունը սերվում է որպես մի միավոր: Բառակապակցության հետագա տարրալուծումը, իհարկե, ի հայտ կբերի նոր հարաբերություններ արդեն սերման ստորին մակարդակի բաղադրիչների միջև:

Այստեղ նույնպես հնարավոր է $(DN)(DV)$ արտածումը, որը ներկայացվեց վերեւում:

7. $VP \equiv DANV$ ծայրագույն շղթան ժամանակակից հայերենում սերվում է երկու տարբերակով՝

ա) եթե սերման առաջին փուլում ստանանք DP և VP , այնուհետեւ

DP-ից՝ D, իսկ VP-ից՝ ANV, ապա կստանանք երկրորդ արտածումը՝ VP ANV, իբրեւ մակրայի շարահյուսական ֆունկցիա՝ ((D)(ANV)):
VP (D)(ANV), (նա) երեկ կարմիր դրոշ շարժեց:

1	2
I → (VP)	(VP)
VP → (DP)(VP)	((DP)(VP))
VP → (NP)(VP)	((DP)((NP)(VP)))
NP → (AP)(NP)	((DP)((AP)(NP)(VP)))
DP → D	((D)((AP)(NP)(VP)))
NP → N	((D)((AP)(N)(VP)))
AP → A	((D)((A)(N)(VP)))
VP → V	((D)((A)(N)(V)))
V → շարժեց	((D)((A)(N)(շարժեց)))
N → դրոշ	((D)((A)(դրոշ)(շարժեց)))
A → կարմիր	((D)((կարմիր)(դրոշ)(շարժեց)))
D → երեկ	((երեկ)((կարմիր)(դրոշ)(շարժեց)))

Մենք հիմք ունենք պնդելու, որ DANV կառույցի փոաջին դրսևորման մեջ առկա են հարադրական հարաբերություններ, քանի որ DANV կառույցը կարելի է ստանալ DNV կառույցից (դոյականր ածականով ընդարձակմամբ): Իսկ DNV կառույցը դրսևորվում է բայական հարադրությամբ:


բ) սերման երկրորդ տարբերակում հաշվի է առնվում այն հանգամանքը, որ ժամանակակից հայերենում ածականը նույնպես կարող է ընդարձակվել ընդունելով մակբայը իբրեւ ստորադաս անդամ (Ս. Աբրահամյան, 1976, էջ 81-82, Վ. Քոսյան, 1975, էջ 185-189):

VP = (DA)(NV), (նա) չափազանց բարձր դրոշը շարժեց

1	2
I → (VP)	(VP)
VP → (NP)(VP)	((NP)(VP))
NP → (AP)(NP)	((AP)(NP)(VP))
VP → V	((AP)(NP)(V))

NP → V	((((AP)(N)(V)))
AP → (DP)(AP)	(((((DP)(AP))(N))(V)))
DP → D	(((((D)(AP))(N))(V)))
AP → A	(((((D)(A))(N))(V)))
V → շարժեց	(((((D)(A))(N))(շարժեց))
N → դրոշմ	(((((D)(A))(դրոշմ))(շարժեց))
A → բարձր	(((((D)(բարձր))(դրոշմ))(շարժեց))
D → չափազանց	(((((չափազանց)(բարձր))(դրոշմ))(շարժեց))

Համեմատութիւն համար ստորեւ բերում ենք $D < A < N < V$
արտածման ծառերը:





Գծապատկերից պարզ երևում է, որ երկրորդ արտածման (բ դեպք) առաջին փուլում անմիջական բաղադրիչներ են NP և VP միավորները, որոնցից վերջինն անմիջապես վերածվում է բայի Հետեւաբար, NP բաղադրիչը հանդիսանում է բայի շարահյուսական ֆունկցիան և գտնվում է կախյալ վիճակում՝ դառնալով խնդիր: Այնուհետև այդ խնդրական հատկանիշները վերագրվում են դրոշմ գոյականին, քանի որ վերջինս NP բաղադրիչի միջուկն է: Միջուկից կախյալ վիճակում է գտնվում AP անվանական որոշիչ բառակապակցութիւնը (որի միջուկը բարձր ածականն է), իսկ վերջինս լրացվում է չափազանց մակբայով: Այս է չափազանց բարձր դրոշմ շարժեց բառակապակցութիւն անմիջական բաղադրիչների քերականութիւն օգնութիւն բերկրորդ արտածման նկարագրութիւնը, որը լիովին համընկնում է նրա դասական նկարագրութիւն հետ:

8. VP ≡ DANDV

Այս կառույցը ժամանակակից հայերենում նույնպես ունի երկու դրսեւորում (տե՛ս նախորդ արտածումը): Անհարկի կրկնութիւնից խուսափելու նպատակով բավարարվենք միայն արտածման ծառերը ներ-

կայացնելով: Տրված ծառերից պարզ երևում է, որ ութերորդ արտածումը չորրորդ և յոթերորդ արտածումների ընդհանրագումն է:



Սրանով ավարտում ենք ժամանակակից Հայերենում A, N, D, V բաղադրիչներով կառույցների կոնկրետ դրսևորումների հետ կապված հարցերի քննարկումը: Այն թույլ է տալիս անելու հետևյալ եզրակացությունը:

NV կառույցները ժամանակակից Հայերենում դրսևորվում են մեծ գինամիզմով, որի մի եզրը ազատ բառակապակցություններն են, իսկ մյուս եզրը հարադրական կազմութունները: Այդ նշանակում է, որ այն միջոցները, որոնք հանգեցնում են այս կամ այն դրսևորման, կարելի է դիտել որպես մի պրոցես, որն ըստ էության կառավարելի է: Հակառակ դեպքում մենք խոսքում կհանդիպենք ոչ կանոնավոր դեպքերի, մինչդեռ ամեն անգամ առկա է շատ որոշակի դրսևորում: Մեզ թվում է, որ այդ պրոցեսի կառավարումը տեղի է ունենում լեզվի

բոլոր մակարդակներում:

Այսպես, ժամանակակից Հայերենում ունենք NV կառույցի դրսև-
վորման դեպքեր, որտեղ այդ պրոցեսի կառավարումը կատարվում է
N և V բաղադրիչների շարակարգային հատկանիշներով: Ժամանակա-
կից Հայերենի հարադիր բայերը ունեն բաղադրիչների կայուն հաջոր-
դում: Բաղադրիչների հաջորդման կայունության հատկանիշ է վերա-
դրում Մ. Ա. Կումախովը վերլուծական կառույցներին (Մ. Կումա-
խով, էջ 278): Ընդհանուր առմամբ խոսքում կարող է հանդիպել դժա-
շին դասավորությամբ հարադիր միավորների հաջորդման ընդունված
կարգի խախտման երկու դեպք՝

1) գոյականը և բայը խոսքում կարող են հաջորդել հակառակ կար-
գով,

2) գոյականի և բայի միջև կարող է հանդես գալ որևէ բառ.

Ժամանակակից Հայերենում բայական հարադիրների մոտ բացառված
են բայադրիչների հաջորդման կայուն կարգի խախտման թե՛ առա-
ջին և թե՛ երկրորդ դեպքերը: Ինչու:

Ըստ հայ քերականագիտական դրականության, «որակատյան հարա-
բերությունն արտահայտող գոյականի ուղղական» հայցական հոլով +
+ դերբայ կառուցվածքի բառակապակցությունների հիման վրա ժա-
մանակակից Հայերենում առաջացել են բազմաթիվ կայուն բառակապակ-
ցություններ, որոնցից շատերը վերածվել են հարադրությունների:
Օրինակներ՝ գյուխ տալ, ձևոք բերել, հայացք նետել, գյուխ բերել և
այլն, (Ս. Արրահամյան, 1976, էջ 89): Այլ կերպ ասած՝ ուղղա-
կան» հայցական հոլով < դերբայ բառակապակցության մեջ գոյու-
թյուն ունի բաղադրիչների հաջորդման կայուն կարգ: Կարգի խախ-
տումը կամ բերում է այլ իմաստների, ինչպես՝ գյուխ բերել և բե-
րել գյուխ (թեև առաջին բառակապակցությունը երկրորդ բառակապակ-
ցության իմաստով էլ կարելի է ընկալել), կամ բառերի կապակցություն,
որը ժամանակակից Հայերենում չի հանդիպում, ինչպես՝ նետել հա-
յացք:

Հարցը դիտենք արժույթայնության տեսանկյունից: Արժույթի մի դր-
սև ոլորտը, - գրում է Գ. Բ. Ջահուկյանը, - ենթակառուցվածքն է.
ենթակա ստացող բայերը լեզվականորեն անդիմաստահմանափակ են, են-
թակա չստացողները՝ դիմադասականափակ (զործածվում են միայն եր-
րորդ դեմքով, որը տվյալ դեպքում չի հակադրվում առաջին և երկ-
րորդ դեմքերին): Այս բայերը հայտնի են միադեմ (միադեմի) անու-
նով և փառաբան զոր արժույթի են կամ արժեքագուրկ, եթե նկատի
չառնենք ոչ պարտադիր պարագառությունը, Հայերենում բուն մի-
ադեմ բայերը մեծ թիվ չեն կազմում՝ ամպել, անձրեւել, երե-
կոյանալ, լուսանալ, ձյունել (ձնել), մթնել, ցրտել: Ուրիշ
լեզուների միադեմ բայերի փոխարեն հայերենում հանդես են գալիս

անել, գալ, դնել և այլն բառերով կազմող դարձվածքային գու-
ղորդումները՝ ցուրտ անել, շոգ անել, ձյուն դնել, անձրե-
գալ և այլն (Գ. Բ. Ջահուկյան, 1974, էջ 468):

Ինչո՞ւմ է նման կապակցությունների կառուցվածքի կալուցու-
թյունը:



Վերևում ասվեց, որ ժամանակակից Հայերենում կան բայեր, որոնք
բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչ Հանդիսանալով կառուցում են հան-
գուցիի դեր, կրելով միայն քերականական բեռնվածություն: Իմաս-
տային բեռնվածությունը կրում է հարադրվող շոյակներ: Դրանով
այդ երկու միավորները իմաստով դառնում են ամբողջական, որը
հանդեհնում է կառուցվածքային ամբողջականություն: Կառուցվածքի
խախտումը հանդեհնում է իմաստի փոփոխման, իսկ առանձին դեպ-
քերում՝ իմաստազրկման: Վերջին երեւոյթը հանդիպում է այն բա-
յական հարադրությունների մոտ, որոնք գրականության մեջ առանձ-
նացված են իբրեւ հարադիր բայեր: Այդ բայերը չեն կանխանք
կալուն հարադիր բայեր, իսկ երեւոյթը՝ կալուն հարադրություն:

Քննենք հարադիր բայերի բաղադրիչների հաջորդման կարգի վե-
րաբերյալ պահանջը անմիջական բաղադրիչների քերականության տե-
սակետից:

Դիցուք ունենք NV կառույց: Դիտարկենք նրա բաղադրիչների հա-
ջորդման կալունությունը ժամանակակից Հայերենում: Քանի որ քն-
նում ենք NV կառույցին հարադրական հատկանիշների վերադրման
հարցը, ապա զանց կառնենք N բաղադրիչի ընդարձակման հարցը և
կրիտարկենք NV կառույցի հարաբերությունները մակրայի նկատմամբ:
Հետեւաբար, եթե ունենք երեք բաղադրիչ՝ D, N, V, ապա հնարավոր
է կազմել 6 կապակցություն՝ DNV, DVN, NDV, NVD, VDN, VND:
Առաջին դեպքը քննել ենք բայական բառակապակցությունների հինգ-
երորդ արտածման ժամանակ: Սա տիպիկ հարադրական կազմություն
է, որտեղ մակրայի շարահյուսական ֆունկցիան $N < V$ կառուցվածքին
է, օրինակ, (նա) երեկ լաց եղավ, (ինքնաթիռը) երեկ վայ-
րէջք կատարեց, (նա) երեկ գիրք տարավ և այլն: Այստեղ,
ինչպես երեւում է, պահանջված է բաղադրիչների հաջորդման կա-
նոնավոր կարգը:

$D < V < N$ դրսևորման դեպքում տեղի ունի N և V բաղադրիչների
հաջորդման կարգի խախտում: Հայերենի համար սովորական է խնդրի
ետադադիրքը, օրինակ, (նա) տարավ գիրք, (նա) գրեց շարա-
դրություն և այլն: Այսինքն՝ ժամանակակից Հայերենի համար
կիրառելի է $VP \rightarrow (VP)(NP)$ արտածման կանոնը: Տվյալ պարաբայում
 $D < V < N$ դրսևորումը կունենա երկու արտածում՝



ա) արտածման դեպքում երեկ մակրայը դառնում է տարավ բայի
շարահյուսական ֆունկցիան, որն, ի դեպ, մեզ թվում է ավելի հա-



վանական է, որով և կարելի է բացատրել հարադրական կազմության քայքայումը: Կայուն հարադրությունները, որտեղ պահանջվում է N և V բաղադրիչները կանոնավոր հաջորդում, DVN սխեմայով չեն արտածվում:

Բ) արտածման դեպքում VN կառույցը հարադրական կազմություն է: Հաջորդ՝ NDV սխեման այստեղ չենք դիտարկի, որովհետեւ այն քննել ենք երրորդ արտածման ժամանակ:

NVD սխեմայում N և V բաղադրիչների հաջորդման կարգի խախտում չկա, սակայն առաջին դեպքի համեմատ մալբայր ոչ թե նախորդում, այլ հաջորդում է NV կառույցին: Այս սխեման նույնպես կունենա երկու արտածում, որոնք ժամանակակից հայերենում համարյա չեն դրսևորվում:



Հաջորդ երկու սխեմաները՝ VDN և VND, ժամանակակից հայերենում չեն արտածվում:

Այսպիսով՝ վեց հնարավոր սխեմաներից ժամանակակից հայերենում դրսևորվում են երեքը՝ DNV, DVN և NDV, որոնցից հարադրական կազմության ելակետ է հանդիսանում միայն առաջին սխեման (DNV):

Գոյականի ու բայի միջև հարադրական հարաբերությունները քննելիս մենք անտեսեցինք ներկառույցային կապը՝ երբ N և V բաղա-

դրիչները կարող են ունենալ խնդրային կամ պարագայական հարաբերություններ, Հարադրական՝ իբրեւ արտականույցային, կապը հաստատում է այն դեպքերում, երբ NV կառույցը դառնում է մակրայի շարահյուսական ֆունկցիա, Մի օրինակով ցույց տանք այդ դինամիզմը:

Վերջիններ տանել լայր: Փորձենք իրականացնել նրա արժույթային հնարավորությունները: Առաջին բառակապակցությունը կաղմենք այսպես՝ (նա) սեղան տարավ: Միանգամայն պարզ է, որ սեղան ե տարավ բառերի միջև հաստատված է խնդրային հարաբերություն ե սեղան տարավ բառակապակցությունները շարահյուսորեն ազատ կապակցություն է: Վերջինիս ապացույցն այն է, որ այս բառակապակցությունը կարելի է ընդարձակել մի մակրայով, որը կհանդիսանա բայի շարահյուսական ֆունկցիան: Ահավասիկ՝ (նա) սեղան երեկ տարավ նմուշը, որտեղ մատնանշվում է այն փաստը, որ սեղանը երեկ է տարվել: Այժմ, եթե կաղմենք (նա) երեկ սեղան տարավ բառակապակցությունը, ապա երեկվա գործողությունը ոչ թե տանելը կլինի, այլ սեղան տանելը: Այս իմաստով սեղան տարավ բառակապակցությունը ստանում է հարադրության արժեք: Այլ կերպ ասած՝ NV կառույցի ներսում գործում է խնդրային հարաբերություն, իսկ այդ կառույցից դուրս՝ հարադրական:

Մենք կարող ենք ստանալ մի այլ բառակապակցություն, որտեղ առկա են ե խնդրային ե՝ պարագայական հարաբերություններ: օրինակ, դիտարկենք (նա) սեղան տուն տարավ բառակապակցությունը: Ընդարձակենք այս բառակապակցությունը երեկ մակրայով: Առաջին անգամ կունենանք (նա) սեղան տուն երեկ տարավ բառակապակցությունը, որտեղ մակրայի շարահյուսական ֆունկցիան տարավ բայն է: Այժմ, եթե երեկ մակրայը օգտագործենք սեղան գոյականից հետո, կստանանք՝ (նա) սեղան երեկ տուն տարավ բառակապակցությունը, որի մեջ երեկվա գործողությունը կլինի արդեն տուն տանելը: Տուն տարավ բառակապակցությունը կստանա հարադրության արժեք ե կունենա խնդիր (սեղան): Ի՞նչ վերջապես, եթե երեկ մակրայը գործածենք ամբողջ բառակապակցությունից առաջ, ապա կստանանք (նա) երեկ սեղան տուն տարավ բառակապակցությունը, որի մեջ սեղան տուն տարավ հատվածը կրստանա հարադրության հատկանիշ:

Ստորեւ բերենք նշված երեք արտածումները (էջ 93):

Վերջին արտածումների հետ կապված քննենք հարադիր բայերի, կամ, ավելի լայն առումով, հարադրական կաղմությունների ամբողջականության հարցը:


Մի կողմից դառնալով մակրայի շարահյուսական ֆունկցիան, բա-

$I \rightarrow (VP)$

$VP \rightarrow (NP)(VP), NP \rightarrow N$

$VP \rightarrow (NP)(VP), NP \rightarrow N,$

$VP \rightarrow (DP)(VP), DP \rightarrow D, VP \rightarrow V;$




$I \rightarrow (VP)$

$VP \rightarrow (NP)(VP), NP \rightarrow N,$

$VP \rightarrow (DP)(VP), DP \rightarrow D,$

$VP \rightarrow (NP)(VP), NP \rightarrow N, VP \rightarrow V;$




$I \rightarrow (VP),$

$VP \rightarrow (DP)(VP), DP \rightarrow D,$

$VP \rightarrow (NP)(VP), NP \rightarrow N,$

$VP \rightarrow (NP)(VP), NP \rightarrow N, VP \rightarrow V;$



յական բառակապակցութիւնները ստանում են հարադրական արժեք և չարահիշակական այլ միավորների հետ հարաբերվում են ամբողջական կառուցի ֆունկցիայով: Մյուս կողմից մասնագիտական դրականութեան մեջ արձանագրված է այն դասը, որ անվանական բաղադրիչի հոդաութիւնը քայքայում է կայուն հարադրութիւնը, ինչպես ձեռք մեկնեց $\rightarrow$ ձեռքը մեկնեց և այլն: Ո՞րն է հարադրութեան քայքայման մեխանիզմը:

Դիցուք ունենք (ինքնաթիռը) վայրէջք կատարեց բառակապակցութիւնը, որի մեջ առկա է NV կառուցի հարադրական դրսեորութիւն: Վայրէջք կատարեց բառակապակցութիւնը հեշտութեամբ դառնում է մակբայի չարահիշակական ֆունկցիա, որը բնորոշում է նրա ամբողջութիւնը: Նախադասութեան մեջ չարահիշակական այլ միավորների հետ հարաբերութեան մեջ է մտնում արդեն վայրէջք կատարեց բառակապակցութիւնը, իրեն չարահիշակական ուրույն, ամբողջական միավոր, օրինակ, ինքնաթիռը դաշտում

Երեկ վաղը է կատարել: Այս նախադասութեան առարկա-
 յական բովանդակութեանն այն է, որ ինքնաթիւոր դաշտում երեկ
 չվայրէջքել է, Եթե փորձենք ընդարձակել բայական բաղադրիչը, այս-
 պես, (ինքնաթիւոր) դաշտում վաղը է Երեկ կատարեց,
 ապա կփոփոխվի առարկայական բովանդակութեանը՝ ինքնաթիւոր դաշ-
 տում իր վայրէջքը երեկ է կատարել: Վաղը է գոյականի արտա-
 քրսումը մակրայի շարահյուսական Ֆունկցիայից հանգեցնում է հա-
 րադրական հարաբերութեան թույլացմանը, որը թույլ է տալիս ավելի
 հեշտութեամբ ընդարձակել գոյականը, օրինակ, ինքնաթիւոր սա-
 հուն վաղ է Երեկ կատարեց: Մենք կառոյ ենք արդեն առ-
 կայացնել գոյականը, որը կհանգեցնի, օրինակ, հետեւյալ նմուշի՝
 ինքնաթիւոր իր վերջին վաղ է Երեկ կատարեց: Վեր-
 ջին նախադասութեան մեջ բայական բառակազմը շարահյուս-
 է գալիս ադատ շարահյուսական կապակցութեան տեսքով: Այսպիսով
 NV կառույցի անվանական բաղադրիչի արտաքսումը մակրայի շարա-
 հյուսական ֆունկցիայից խզում է անխնայական և բայական բաղա-
 դրիչների միջև անմիջական կապը (նրանք արդեն անմիջական բա-
 դրիչներ չեն), որը հանգեցնում է հարաբերական հարաբերութեանն-
 ների վերացմանը: Ի՞նչ նախկինում այդ հարաբերութեանը խոչըն-
 դոտում էր անվանական բաղադրիչների, իրենք միջուկի, ընդարձակ-
 մանը, ապա հարաբերական հարաբերութեան վերացումից հետո անվա-
 նական բաղադրիչը կարելի է ընդարձակել տեղեր քանակի որոշիչ-
 ներով, մասնավորապես առկայացնել: Այսպիսով՝ գոյականի հոգա-
 ռութեանը ոչ թե պատճառ է հարաբերութեան քայքայման, այլ հարա-
 դրական հարաբերութեանների վերացման հետեանք:

Բայական հարաբերութեանների հետ կապված այս քննութեանը
 մեզ բավարար հիմք է տալիս անցնելու ժամանակակից հայերենի
 հարադիր բայերի վերլուծութեանը:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻԶՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Աշխատանքի այս հատվածում անմիջական բաղադրիչների քերականության օգնությամբ կնկարագրենք այն երեւոյթները, որոնք ի հայտ են գալիս ժամանակակից հայերենում NV կառույցի տարբեր, մասնավորապես հարադրական դրսեւորումների ժամանակ: Վերեւում նշեցինք, որ ժամանակակից հայերենում NV կառույցը դրսեւորվում է երկակի՝ 1) գոյականի և բայի միջև հաստատված խնդրային կամ պարագայական հարաբերությամբ, և 2) գոյականի բայի միջև հաստատված հարադրական հարաբերությամբ: Այն դեպքերում, երբ ունենք զուտ հարադրական հարաբերություններ, հանդես են գալիս կայուն հարադրություններ:

Փորձաշկման համար կրնտրենք հայ քերականագիտական գրականության մեջ նշված հարադրական կազմությունները և կաշխատենք աշխատանք լրիվ նկարագրությունը՝ օգտագործելով անմիջական բաղադրիչների կապարարը:

Վերցնենք երկու նմուշ Աւ. Մարգարյանի «Հայերենի հարադիր բայերը», աշխատությունից. 1) «քիչ է պատահել, որ պրիստովին, վարդապետին նվեր ենք տվել, իրենք էլ անխոս վերցրել են», 2) մի օր էլ հարեան գլուղում կշտացրել են ինձ ու մի գարե բոքոն նվեր տրվել», (Աւ. Մարգարյան, 1966, էջ 74-75): Ըստ Աւ. Մարգարյանի պնդման տալ բայն, օրինակ, ներգործական սեռի բայ է և այդպիսին պահանջում է ուղիղ խնդիր (վարպետին նվեր ենք տվել): Հարադիր բայերի մեջ, զրկվելով իր բուն նշանակությունից՝ հարադրի հետ կազմում է ոչ միայն ներգործական (առաջ տալ, նվեր տալ), այլև չեզոք սեռի (աչ տալ, լող տալ), ինչպես և բազմապատկան կերպի (թավալ-թավալ տալ) բայեր, որոնք արտահայտում են բոլորովին նոր նշանակություն՝ արմատապես տարբերվելով նույն տալ բայից (Աւ. Մարգարյան, 1966, էջ 75): Այստեղ Աւ. Մարգարյանը կանխակալ կերպով ընդունել է, որ նվեր տալ բառակապակցությունը

բացի սովորական չարահայտ սական ազատ կապակցությունից կարող է հանդես գալ կայուն կապակցության տեսքով՝ իբրև հարադիր բայ:

Նախ նշենք, որ տալ բայը կարելի է դասել այն բայերի շարքին, որոնք կառույցում կատարում են հանգույցի դեր, այսինքն NV կառույցի իմաստային բեռնվածությունը վերցնում է անվանական բայադրերից, իսկ բերականական բեռնվածությունը՝ բայականը: Այդ իսկ պատճառով նվեր տալ բառակապակցությունը լատինում է թե՛ իմաստային և թե՛ կառուցվածքային աբսոլյուտականություն, որոնք կայուն հարադրությունների հատկանիշներ են: Տալ բայի, իբրև հանգույցի, դերով է բացատրվում այն փաստը, որ հարադրվելով տարբեր բառերի հետ կարող է կազմել ներդրածական կամ չեզոք սեռի բայերին հարաբերակցող բայական բառակապակցություններ:

Այնուհետև, ըստ Գ. Բ. Ջահուկյանի դասակարգման (Գ. Ջահուկյան, 1974, էջ 484) տալ բայը եռարժույթ է և դրահորվում է «ենթակա + ուղիղ խնդիր + գիմալոր բայ + տրական հոլովով խնդիր», կամ «ենթակա + ուղիղ խնդիր + գիմալոր բայ + բացառական հոլով խնդիր», մասնակադարձերով:

Այժմ, ըստ նշված մասնակադարձների, փոխակերպենք Այ. Մաշ-դարյանի աշխատությունից փոխառնված նմուշները: Առաջին նմուշը՝ 'յունենա հետեյալ փոխակերպումը՝ «Մենք նվեր տվեցինք՝ օրդապետներին», որն ըստ հիմնական անդամների կվերլուծվի հետևյալ կերպ՝ մենք-ենթակա, տվեցինք - գիմալոր բայ (ստորոգյալ), նվեր - ուղիղ խնդիր, վարդապետին - տրական հոլովով ուղիղ խնդիր: Այստեղ նվեր տալ բառակապակցության մեջ առկա է խնդրային հարաբերությունը: Երկրորդ նմուշի համար, կոտանք հետեյալ փոխակերպումը՝ «ներանք բոքոն նվեր տվեցին ինձ»,

Զուգադրելով վերջին նմուշը, մասնակադարձի հետ կատարվի երկու վերլուծություն՝

1) նրանք նվեր տվեցին ինձ,

2) նրանք բոքոն տվեցին ինձ:

Պարզ երևում է, որ առաջին վերլուծությունից դուրս է մնացել լրոճոն, իսկ երկրորդ վերլուծությունից՝ նվեր բառը: Եթե փոխենք լրացնել դուրս մնացած բառերով, ապա, ըստ մասնակադարձի, կունենանք երեք տարբերակ (հարադրվող մասերը ընդգծված են)՝



ա) նրանք լրոճոն նվեր տվեցին ինձ, որտեղ ուղիղ խնդրի դեր կատարելու է լրոճոն նվեր կապակցությունը, բ) նրանք լրոճոն նվեր տրվեցին ինձ, որտեղ վերլուծական բայի դեր կատարելու է լրոճոն տրվեցին կապակցությունը, և գ) նրանք լրոճոն նվեր տվեցին ինձ, որտեղ վերլուծական բայի դեր կատարելու է նվեր տվեցին կապակցությունը: Երեք տարբերակից, ժամանակակից հայերենում բառակապակ-

գուծյունների սերժան կանոնների համաձայն, ընդունելի է վերջինը, որտեղ Գվեր տվեցին բառակապակցությունը ընդունելով տվեցին բայի շարահյուսական ֆունկցիաները, խնդրառում է բոլորն առը:

Հարցը քննարկենք անմիջական բաղադրիչների քերականության հայեցակետով: Դրա համար վերեւում դիտարկած նմուշը փոխակերպենք (նս) Գվեր տվեց բայական բառակապակցություն:

1) Ի՞նչ գտնում ենք, որ Գվեր տվեց բառակապակցությունը կարող է հանդես գալ իրրե բայական հարաբերություն, ապա համաձայն բայական հարաբերությունների մեր կողմից տրված սահմանման, կաշե- լի է սերել ծայրագույն շղթաներ, որտեղ Գվեր տվեց բառակապակցությունը կհանդիսանա մակբայի շարահյուսական ֆունկցիա, արևմտյան կրկին Գվեր տվեց, իսկույն Գվեր տվեց, նախ Գվեր տվեց, նախորդ Գվեր տվեց և այլն:

Նշված բոլոր օրինակները կունենան անմիջական բաղադրիչների միեւնույն արտածման ծառը



2) Ի՞նչ գտնենք, որ Գվեր տվեց բառակապակցության մեջ Գվեր գոյականը կարող է հանդես գալ տվեց բայի ուղիղ խնդրի պաշտոնում, ապա պետք է հնարավորություն ունենալ ճիշդել տվյալ բառակապակցությունը, մասնավորապես ընդարձակել տվեց բայը, օրինակ Գվեր արդեն տվեց, Գվեր նորից տվեց, Գվեր շատ տվեց, Գվեր իսկույն տվեց, Գվեր հազիվ տվեց և այլն:

Այս բոլոր օրինակներն էլ կունենան անմիջական բաղադրիչների միեւնույն արտածման ծառը (տես II ծառը):


Այսպիսով, Գվեր տվեց բայական բառակապակցությունը ժամանակակից հայերենում երկակի շրջանում ունի. 1) իրրե ազատ շարահյուսական կապակցություն, 2) իրրե բայական հարաբերություն. ճարտարական չափանիշը արտակառույցային է, որը ժամանակակից

Հայերենում դրսևորվում է մակբայով: Նախադասության մեջ վերջինիս բացակայությունը հանդեգնում է բառակապակցության: Երկինս ստույթյան:


Այլ Մարգարայանի, Հայերենի հարադիր բայերը, աշխատության մեջ, Նա վրեժ առավ թշնամիներից, (էջ 77) Վրեժ առավ բայական բառակապակցությունը դիտարկված է որպես հարադիր բայ: Անմիջական բաղադրիչների քերականության մասին արված ստուգումը հաստատում է այդ պնդումը: Վրեժ առավ բայական բառակապակցությունը հեշտության մասին հարազուսակա ֆունկցիա է դրսևորվում է D(NV) կապակցության մ, օրինակ ուշ վրեժ առավ, հերոս վրեժ առավ, առաջ վրեժ առավ և այլն:

Նույն աշխատության մեջ Այլ Մարգարայանը բերում է մեկ այլ նմուշ, որտեղ վրեժ առավ բառակապակցությունը դիտվում է իրեն սովորական շարահյուսական կապակցություն, օրինակ, Ես իր վրեժն առավ թշնամիներից: Պետք է ենթադրել, որ այստեղ հարադրության քաջքայման պատճառը հոգառումն է, որովհետեւ, ինչպես նշեցինք վերեւում, գերիշխում է այն կառուցվածք, թե հոգը առանձին դեպքերում քաջքայմ է հարադրական կապակցությունը:

Նախ երեւութը մեկնաբանենք դասական քերականության օգնությամբ: Հիմք ընդունելով Գ. Բ. Ջահուկյանի, ժամանակակից Հայերենի տեսությունը, հիմունքները, աշխատության մեջ տրված աշխատական բառակապակցության վերլուծական կաղապարները, կարող ենք պնդել, որ ժամանակակից Հայերենում, եթե դուրսանին նախորդում է (գոյականից դեպի ձգտող տեքստի) գերանուն, ապա վերջինս նրա որոշիչն է: Հետեւաբար, կառավարման կապը վրեժն գոյականից գնում է դեպի իր գերանունը: Մյուս կողմից, առնել բայը եռարժույթ է և իր արժույթային ունակությունները դրսևորում է, ենթակա + ուղիղ խնդիր + գիմավոր բայ + բացառական հոլովով խնդիր, մասնակաղապարով: Այդ նշանակում է, որ վրեժն գոյականը իրացնում է առնել բայի ուղիղ խնդրի արժույթը: Համապատասխանաբար, թշնամիներից գոյականը իրացնում է առնել բայի ուղիղ խնդրի արժույթը: Այսպիսով, Ես իր վրեժն առավ թշնամիներից նախադասության կառուցման ծառը կունենա հետեւյալ տեսքը:



Կախումների ճիշտ նույն ծառով կարելի է նկարագրել նաև նա վրեժ առավ ՔՇՆԱՄԻՆԵՐԻԿ նմուշը՝



Ստացվում է, որ նա վրեժ առավ ՔՇՆԱՄԻՆԵՐԻԿ նմուշի մեջ վրեժ առավ բառակապակցութունը երկիմաստ է։ Դասական քեռականութունը միջոցներ չունի մեկնաբանելու վրեժ առավ բառակապակցության հարադրային դրսևորումը։ Այն դուրս է բերվում զուտ կռահողական եղանակով։ Երկրորդ վերլուծության համար, երբ վրեժ առավ կապակցութունը դիտվում է իբրեւ ազատ շարահյուսական կապակցութուն, արժույթային մասնակապարները բավարար չիմք են տալիս։

Վրեժ առավ կապակցության հարադրային դրսևորումը վերեւում մենք մեկնաբանեցինք նաև անմիջական բացառիչների քերականության օգնությամբ։ Ինչ վերաբերում է իբրեւ ազատ շարահյուսական կապակցութուն դրսևորմանը, ապա կարող ենք պնդել հետեւյալը։ Եթե առավ բայը որպես միջուկ հնարավոր է ընդարձակել մակբայով, ապա վրեժ առավ բառակապակցութունը կկորցնի իր հարադրական հատկանիշները և կդառնա ազատ շարահյուսական կապակցութուն։ Փորձերը դրական արդյունք չեն տալիս։ Որոշ վերապահությամբ իբրեւ նմուշ կարելի է ընդունել վրեժ ևետո առավ բառակապակցութունը, երբ վրեժ առավ բառակապակցության մեջ մակբայը դարձել է ոչ թե բառակապակցության, այլ բայի շարահյուսական ֆունկցիա։ Բայց, այնուամենայնիվ, եթե ստիպված լինենք կազմելու հետեւյալ նմուշները՝ *վրեժ երեկ առավ, *վրեժ իսկույն առավ, վրեժ արդեն սոսալ, ապա երեկ առավ, իսկույն առավ, արդեն առավ բառակապակցութուններում կպահանջվեն օբյեկտի առկայացում, քանի որ կատարվող գործողությունը որոշակի բնույթ ունի։ Այդ նկատումով, մենք կարող ենք սերել նմուշներ, որտեղ սոսալ բայը բնորոշվում է մակբայով, իբրեւ շարահյուսական ֆունկցիա. այսպես՝


Նա իր վրեժը երեկ առավ,

(իսկույն առավ)

(արդեն առավ)

(հազիվ առավ) և այլն

Գծադրում բերված է նա իր վրեժն սոսալ նախադասության սերումն ըստ անմիջական բացառիչների քերականության։ Պարզ եղևվում է, որ վրեժ գոյականի և սոսալ բայի անմիջական կապը, որ



տեղի ունենալի վրեժն առավ բառակապակցության մեջ, վերացել է։ Այս-տեղ բայի շարահյուսական ֆունկցիան ոչ թե վրեժն գոյականն է, այլ իր վրեժն գոյականական բառակապակցությունը։ Վերջինիս միջոցով պահպանվում է կապի վրեժն և առավ բաղադրիչների միջև ֆանի որ, ինչպես երևում է արտածման ծառից, NP բաղադրիչը ներկատվել է առանձին (NP → (AP)(NP) արտածման կանոնով), ապա ոչինչ չի խանգարում, որ VP բաղադրիչը նույնպես առանձին երկատվի։ Օղակով նշանակված հանդույցի համար կիրառելով VP → (DP)(VP) արտածման կանոնը, կստանանք մալբաղական ստորաբաժանությամբ բաղադրանք, որը նշան է հարադրության քայքայման։

Դիտարկենք մի օրինակ էս։ Ալ. Մարգարյանը նույն աշխատության մեջ նշում է, որ աշխատանքի անել բառակապակցությունը լատինական հանդույցություն է, քանի որ աշխատանք բառը բայանուն է, իսկ այնպիսի գոյականները, որոնք կամ բայանուն են, կամ ինչ-որ չափով գործողության իմաստ են պարունակում իրենց մեջ դառնում են հարադրի (Ալ. Մարգարյան, 1966, էջ 107)։

Ըստ անմիջական բաղադրիչների քերականության, աշխատանք անել բառակապակցությունը նույնպես դիտվում է իբրեւ հարադրի բայ, քանի որ այդ բառակապակցության համար կարելի է բնութագրել համապատասխան մակբայներ, որոնք կհանդիսանան նրա շարահյուսական ֆունկցիան։ Օրինակ, նա աշխատանք արեց ելակետային նախադասության համար կարող ենք բնութագրել նմուշներ, երբ մակբայը հանդիսանում է աշխատանք արեց ամբողջ բայական բառակապակցության շարահյուսական ֆունկցիան՝


- (նա) ալսօր աշխատանք արեց,
 հերոս աշխատանք արեց,
 կրկին աշխատանք արեց,
 շատ աշխատանք արեց և այլն։

Սակայն, միուս կողմից, անել, բայը եռարժույթ է (իրացվում է ենթակա + ուղիղ խնդիր + համար) և, բնականաբար, կլինեն իրադրու-թյուններ, երբ գերիշխում է անել բայի խնդրային կապի և բառ-

կապակցութիւնը հանդէս է դալիս իբրեւ սովորական շարահիշատական կապակցութիւն: Անմիջական բաղադրիչների քերականության տերմիններով ասած՝ գոյութիւն կունենան խաբային իրադրութիւններ, որտեղ որոշիչը կարող է դառնալ աշխատանք անել բառակապակցության ստորագրասանդամի շարահիշատական ֆունկցիա: Օրինակ, վընարովի աշխատանք արեց, գիշերային աշխատանք արեց, հանրագում աշխատում արեց և այլն: Նույն բանը կարելի է անդէլ առարկութիւն անել, այցելութիւն անել, լավութիւն անել և բաղմամբով նման այլ հարադիր բայերի վերաբերյալ:

Այժմ անդրադառնանք նախաբանում բերած երկու նախադասութիւնների քննութեանը (1) մինչ լողացողը փորձ արեց ցատկել վեր՝ աչքերը մթնեցին և գլուխը պտտեց, 2) ուսուցիչը նախ պատմեց օգտագոյն երեւույթի մասին և այնուհետեւ փորձ արեց:

Ի՞նչ սահմանադատենք փորձ անել բառակապակցութիւնը, ապա փորձ դոյականը կիրացնի անել բայի օբյեկտային արժեւթիւր: Լէզ նշանակում է, որ փորձ և անել միավորների միջեւ կհաստատվի խնդրային հարաբերութիւն: Այս փաստը լիովին մեկնարանվում է անմիջական բաղադրիչների քերականութեամբ: Ցուցադրելու համար բավարար է նկարագրել մի իրադրութիւն, որտեղ փորձ բառը կհանդիսանա օբյեկտ, որի հետ կատարվելու է որեւէ գործողութիւն: Օրինակ, ուսուցիչը խոստացավ փորձ վաղը անել: Այս նախադասութեան արտածման ծառը բերված է ստորեւ, որից երեւում է, որ վաղը մակրայի շարահիշատական ֆունկցիան անել բային է, իսկ փորձ դոյականը՝ արդէն վաղը անել բառակապակցութեան շարահիշատական ֆունկցիան:





Այս հատվածում մենք ցանկանում ենք ցուցադրել ավելի հետաքրքիր մի երեւույթ՝ կապված փորձ անել բառակապակցութեան, այսինքն՝ NV կառույցի, վերեւում նշված իմաստով, դինամիզմի հետ:

Նախ, մինչ լողացողը փորձ արեց ցատկել վեր՝... նախադասութեան մեջ փորձ արեց բառակապակցութիւնը բայական հարադրութիւն է և մեկնարանվում է իբրեւ փորձեց: Ըստ բայական հարադրութիւնների դասական ներկայացման, երբ NV կառույցը փոխարինվում

է համարժեք բայով, ապա բայական հարադրութիւնն է: Նույն փա-
տը հաստատովում է նաեւ անմիջական բաղադրիչների քերականութեան
նկարագրութեամբ: Եթե փորձենք փորձ արեց բառակապակցութիւնը
դարձնել մակբայի շարահյուսական ֆունկցիա, ապա բերած նախադա-
սութիւնը անհրաժեշտ է փոխակերպել հետեւյալ կերպ. մինչ լողա-
ցողը (հագիվ) փորձ արեց ցատկել վեր՝ աչքերը մքենցից և գլուխը
պտտվեց: Ստացվեց այնպես, որ NV կառույցը փոխակերպվեց DNV կա-
ռույցի, որը հեշտութեամբ կարելի է հանդեցնել (D)(N)(V)) կա-
ռույցի: Այդ նշանակում է, որ տվյալ իրադրութեան մեջ փորձ ա-
րեց բառակապակցութիւնը դարձաւ մակբայի շարահյուսական ֆունկ-
ցիա և, հետեւաբար, հանդես եկավ որպէս հարադրութիւն:


Փորձենք քայքայել բայական հարադրութիւնը: Դրա համար, ինչ-
պէս բազմաթիվ անգամներ նշել ենք, անհրաժեշտ է ստեղծել մի
իրադրութիւն, որտեղ մակբայի շարահյուսական ֆունկցիա է դառ-
նում ոչ թե փորձ արեց բառակապակցութիւնը, այլ արեց բայը: Ժիշտ
է, այդ ստացվում է դժվարութեամբ, սակայն հետեւյալ նմուշները
լիովին ընդունելի են ժամանակակից հայերենի համար. մինչ լողա-
ցողը վեր ցատկելու փորձ արեց: Ցուցադրման համար բերենք այդ
նախադասութեան արտածման ծառերը՝



Առաջին արտածման ծառի վրա փորձ և արեց միավորները ան-
միջական բաղադրիչներ են, իսկ երկրորդ ծառի վրա՝ ոչ: Այդ նը-
շանակում է, որ առաջին արտածումով փորձ արեց բառակապակցու-

թյունը բալական հարադրությունն է, իսկ երկրորդ արտածման մեջ փորձ և արեց կապակցության մեջ առկա է խնդրային կապը: Այստեղ փորձ գոյականը վեր ցատկելու փորձ բառակապակցության միջուկն է: Իթև ալդ բառակապակցությունը սեղմենք մինչև միջուկ՝ մինչ լողացողը փորձ արեց, ապա փորձ և արեց բառերի միջև հարաբերության որոշակիությունը կվերանա և նախադասությունը կունենա երկու մեկնաբանություն: Այսպիսով, թեև երկու նախադասության մեջ էլ փորձ և արեց բառերը հաջորդում են միմյանց, սակայն նրանք արտածվում են տարբեր կանոնների հաջորդականությամբ և կատարում տարբեր ֆունկցիաներ: Այստեղ լավ երեաց NV կառուցվածքի դինամիկան՝ մի անգամ դրսևորվեց հարադրությամբ, իսկ մյուս անգամ՝ խնդրային կապով կապակցությամբ:


Վերջենք երկրորդ նմուշը. Ուսուցիչը նախ պատմեց օբսիդացման երեւոյթի մասին և այնուհետև փորձ արեց: Այս նախադասությունը բերված է իբրև փորձ արեց կապակցության խնդրային հարաբերությունների դրսևորման նմուշ: Ըստ է. Աղայանի, «Արդի հայերենի բառարանի», այնուհետև բառը մաշրայ է, որի իմաստներն են հետո, ապա: Ուրեմն նախադասության երկրորդ մասը կարող ենք փոխակերպել, ինչպես՝ ուսուցիչը հետո փորձ արեց: Ըստ նախադասության անդամների կադապարի պէնք բայը ստորոգյալ է, փորձ գոյականը՝ խնդիր, իսկ հետո մակբայը՝ պարագա: Դա ալդպես է, որովհետև մենք կարող ենք փորձ գոյականը բնորոշել ածականով՝ իբրև նրա շարահյուսական ֆունկցիա:



Սակայն այս դեպքը կարող ենք մեկնաբանել նաև այլ կերպ: Ուսուցիչը հետո փորձ արեց նախադասության մեջ հետո մակբայը պետք է լինի իրենից աջ մինչև բայը ներառյալ հատվածի շարահյուսական ֆունկցիան, և փորձ արեց բալական բառակապակցությունը դառնում է բալական հարադրություն: Ալդ նշանակում է, որ ուսուցիչը հետո փորձ արեց նախադասությունը կարող ենք փոխակերպել որպես ուսուցիչը հետո փորձեց կամ ավելի լրիվ՝ ուսուցիչը նախ պատմեց օբսիդացման

ման երեւոյթի մասին և այնուհետեւ փորձ արեց օբսիդացնել պը-
ղինձը: Փաստորեն նախադասութեան նախկին շարակարգը պահպան-
վեց և ախելացավ միայն օբսիդացնել պըղինձը բառակապակցութիւնը,
որը իրացրեց բայի խնդրային արժույթը: Դրա պատճառով փորձ բա-
ռը ազատվեց այդ կապից և նրան տվեց ներկառուցային կապ, որը
և փորձ արեց բառակապակցութիւնը վերածեց հարադրութեան:


Ստորեւ բերում ենք ուսուցիչը հետո փորձ արեց օբսիդացնել պը-
ղինձը հատվածի արտածման ծառը, որի վրա պարզ երեւում են այն
փոփոխութիւնները, որոնք նշվեցին վերեւում:




Ահա մի փորձ, որը հիմնավորեց $N < V$ կառուցվածքի դրսեւորման
գինամիկան, Այն սույն տվեց, որ այդ կապակցութեան հանդէս դալու
արժեքը (հարադրական, թե սովորական շարահյուսական) աշտակա-
ռուցային է, այսինքն՝ ոչ մի կառուցվածքային փոփոխութիւն չը-
կըրելով այն կարող է հանդէս դալ կամ մեկ, կամ մյուս աշտեքով:
Վերջինիս կառավարման գործոնը գտնվում է կառուցիցի դուրս: Հե-
տեւարար, հարադրութիւնը շարահյուսական երեւութ է՝ կախված
շարահյուսական միավորների այս կամ այն կարգի դրսեւորումից:
Միեւնոյն ժամանակ կապակցութիւնը (դոյական < բայ) կարող է
հանդէս գալ և իւրեւ հարադիր բայ և իբրեւ սովորական շարահյու-
սական կառուցվածք: Այդ նշանակում է նաեւ, որ հարադրական երե-
ւութների նկարագրութիւնը պետք է կատարվի լեզվի շարահյուսա-
կան մաշխութիւնում:

Այս խնդրի հետ կապված քննարկներ մի երկու հարց եւս:

Վերեւում տեսաք, որ եթե ունենք բայ-միջուկով $N < V$ բառակա-
պակցութիւն, ապա այն հնչողութեամբ կարող է վերածվել մակրայի
շարահյուսական ֆունկցիայի: Նմանօրինակ դատողութեամբ անվա-
նական բառակապակցութիւնը կարող ենք ներկայացնել A(NP) կառու-
ցով: Հետեւարար, խոսքի մեջ բայական բառակապակցութեան հատկա-



Վերջին ծառի կառուցման համար հիմք է ծառայում այն փաստը, որ ածականի կամ մակբայի համեմատության աստիճանը կարող է կազմվել որոշ ածականների միջոցով: Այդպիսի դեր են կատարել փոքր, անծայր, անսահման, բացարձակ և այլ ածականներ: Այսպես օրինակ, բացարձակ միաձայն, փոքր առաջ, անսովոր ալաք և այլն: Որպես նմուշ բերենք փոխոցում նա բայում էր անսովոր արագ նախադասության արտածումը՝



Այս երկու նմուշը բավարար է, որ անհրաժեշտության դեպքում վերլուծել ածականի և մակբայի ընդարձակման դեպքերը: Եթե ընդունենք, որ դրանցից յուրաքանչյուրը կարող է ընդարձակվել կամ ածականով կամ մակբայով, ապա իբրեք քննության առարկա կստանանք վեց դեպք (նրանց հետագա ընդարձակումը չենք դիտարկում): Ստորե բերում ենք վեց դեպքերը, համապատասխան նմուշներով.

ածական	A	գեղեցիկ,
ածական < ածական	AA	արտակարգ բարեկազմ,
մակբայ < ածական	DA	բավականին գեղեցիկ,
մակբայ	D	երեկ,
ածական < մակբայ	AD	անսովոր արագ,
մակբայ < մակբայ	DD	չափազանց արագ

Նշված դեպքերի վերաբերյալ, որպես ընդհանուր դիտողություն,

կարող ենք ասել հետեւյալը՝ ինչ խոսքի մասով էլ ընդարձակելու լինենք ածական-միջոցակր կամ մակբայ-միջոցակր, ստացված բառակապակցություններից առաջինը նախադասության մեջ կստանա ածականի շարահյուսական պաշտոն, իսկ երկրորդը՝ մակբայի Դա ենթում է այն դրույթից, որ միջոցակր և բառակապակցության շարահյուսական ֆունկցիաները համընկնում են և Այդ նկատումով անհրաժեշտություն չկա քննարկել ածականի ու մակբայի բոլոր հնարավոր ընդարձակումները, և կարող ենք բավարարվել մեկ աստիճանի ընդարձակումով:

Դիտարկենք այդ վեց դեպքերն առանձին-առանձին:

Առաջին երեք դեպքեր, ինչպես երևում է աղյուսակից, վերաբերում է ածականին: Առաջին դեպքում այն հանդես է գալիս իբրև ածական-միջոցակր, իսկ մնացած դեպքերում՝ համապատասխանաբար ածականի կամ մակբայի ստորադասությամբ ածականական բառակապակցություններով:

Եթե հաշվի առնենք այն, որ ածականի շարահյուսական ֆունկցիան այն դեր կարող են կատարել թե՛ մակբայը, և թե՛ գոյականը, իսկ մակբայի շարահյուսական ֆունկցիան բնորոշելիս ածականին տրվում է կախունակության հատկանիշ, ապա $AP \rightarrow A$ և $AP_1 \rightarrow DA$ դեպքերի վերաբերությունները համընկնում են:

Այսպես, 1) $AP = A, NP =$ գեղեցիկ տղամարդ

1	2
$I \rightarrow (NP)$	(NP)
$NP \rightarrow (AP)(NP)$	$((AP)(NP))$
$NP \rightarrow N$	$((AP)(N))$
$AP \rightarrow A$	$((A)(N))$
$N \rightarrow$ տղամարդ	$((A)(\text{տղամարդ}))$
$A \rightarrow$ գեղեցիկ	$((\text{գեղեցիկ})(\text{տղամարդ}))$

Բերած օրինակում ածականը գոյականի շարահյուսական ֆունկցիան է: Դրանք (ածականը և գոյականը) անվանական բառակապակցության անմիջական բաղադրիչներն են, որոնցից կախունակը գոյականն է, իսկ կախյալը՝ ածականը:

2) $AP = DA, NP =$ բավականին գեղեցիկ տղամարդ

1	2
$I \rightarrow (NP)$	(NP)
$NP \rightarrow (AP)(NP)$	$((AP)(NP))$

AP $\rightarrow$ (DP)(AP)	(((DP)(AP))(NP))
NP $\rightarrow$ N	(((DP)(AP))(N))
AP $\rightarrow$ A	(((DP)(A))(N))
DP $\rightarrow$ D	(((D)(A))(N))
N $\rightarrow$ տղամարդ.	(((D)(A))(տղամարդ))
A $\rightarrow$ գեղեցիկ	(((D)(գեղեցիկ))(տղամարդ))
D $\rightarrow$ բախմամբին	(((բախմամբին)(գեղեցիկ))(տղամարդ))

Այս օրինակում տղամարդ գոյականի շարահյուսական ֆունկցիան բավականին գեղեցիկ ածականական բառակապակցությունն է, իսկ գեղեցիկ ածականի շարահյուսական ֆունկցիան բավականին մակբայն է, Այստեղ նույնպես նկարագրությունը միակն է, քանի որ ժամանակակից հայերենում NP $\rightarrow$ (DP)(NP) արտածում համալս չի հանդիպում (կան առանձին դեպքեր, որոնք քննվել են վերևում):

3ա) AP = AA և ND = արտակարգ բարեկազմ տղամարդ.

1	2
I $\rightarrow$ (NP)	(NP)
NP $\rightarrow$ (AP)(NP)	((AP)(NP))
NP $\rightarrow$ (AP)(NP)	((AP)((AP)(NP)))
NP $\rightarrow$ N	((AP)((AP)(N)))
AP $\rightarrow$ A	((AP)((A)(N)))
AP $\rightarrow$ A	((A)((A)(N)))
N $\rightarrow$ տղամարդ.	((A)((A)(տղամարդ)))
A $\rightarrow$ բարեկազմ	((A)((բարեկազմ)(տղամարդ)))
A $\rightarrow$ արտակարգ.	((արտակարգ)((բարեկազմ)(տղամարդ)))

Վերջնական արդյունքի վերլուծությունը հոլմ է տալիս, որ արտակարգ ածականը բարեկազմ տղամարդ անմասնական բառակապակցության շարահյուսական ֆունկցիան է և բնորոշում է միայն այդ բառակապակցությունը և ոչ թե տղամարդ գոյականը: Վերջինիս շարահյուսական ֆունկցիան հանդիսանում է բարեկազմ ածականը:

Հայտնի է, որ ժամանակակից հայերենում ածականի համեմատության աստիճան կազմելու համար լրացման գերում կարող են հանդես գալ որակական աստիճանական երանգավորման իմաստ ունեցող մի շարք ածականներ, ինչպես՝ զարմանալի, արտասովոր, առասպելալից,

մշտական, ծայրահեղ և այլն (Վ. Քոսյան, 1975, էջ 189)։ Այդ պահանջում է անմիջական բաղադրիչների քերականության արտածման կանոնների բազմության մեջ ներառել AP → (AP)(AP) արտածման կանոնը, որը թույլ կտա կազմելու հետեւյալ նկարագրությունը՝

3բ) AP = AA, NP = արտակարգ բարեկազմ տղամարդ.

1	2
I → (NP)	(NP)
NP → (AP)(NP)	((AP)(NP))
AP → (AP)(AP)	((((AP)(AP))(NP)))
NP → N	((((AP)(AP))(N)))
AP → A	((((AP)(A))(N)))
AP → A	((((A)(A))(N)))
N → տղամարդ	((((A)(A))(տղամարդ))
A → բարեկազմ	((((A)(բարեկազմ)))(տղամարդ))
A → արտակարգ	((((արտակարգ)(բարեկազմ)))(տղամարդ))

Այս արտածման մեջ արդեն տղամարդ գոյականի շարահյուսական ֆունկցիան արտակարգ բարեկազմ ածականական բառակապակցության է, որի միջուկը բաղկացած ածականն է։ Վերջինիս շարահյուսական ֆունկցիան արտակարգ ածականն է, որն ունի կախյալության հատկանիշ։

Խնդիրը բոլորովին այլ լուծում է ստանում, երբ ածականի կամ ածականական բառակապակցության շարահյուսական ֆունկցիան դառնում է բայի։ Այդ կապակցությամբ Ն. Ա. Պառնասյանը գրում է՝ «Ժամանակակից հայերենում գործառում են նաև ածական + բայ կառուցվածքի բառակապակցությունները։ Որպես բայի լրացում հանդես են գալիս միայն որակական ածականները, որոնք այս կիրառությամբ ձևեր են բերում մակրայական արժեք և արտահայտում են պարագայական հարաբերություններ՝ լավ խոսել, վատ բնել, խաղաղ ճնշել և այլն։ Հաճախ որպես ստորադաս անդամ հանդես են գալիս ածականական բառակապակցությունները, ինչպես՝ Հափազաճ Գեղեցիկ հագնվել, անսպասելի լավ ելույթ ունենալ և այլն (Ս. Աբրահամյան, 1976, էջ 112)։

Հարցը քննենք անմիջական բաղադրիչների քերականության օգնությամբ։ Գլխավոր խնդիրն է փորձել որոշել ածականի կամ ածականական բառակապակցության շարահյուսական ֆունկցիան, երբ խոսքի մեջ առկա են AV, AAV, DAV դրսևորումները։

Առաջին դրսեւորումը ժամանակակից հայերենում տարածված չէ։ Ածականը, իբրեւ առարկայի հատկանիշ ցույց տվող խոսքի մաս, դուրս գալիս լրացում է լինում։ Սակայն որոշ ածականներ, մասնավորապես որակականները, կարող են դառնալ նաեւ բայի լրացում։ Ածականներ բայի լրացում դառնալով չի կորցնում իր խոսքի մասային արժեքը և չի վերածվում մակբայի, օրինակ՝ նա ուշադիր հետեւում էր, նա թեթեւ էր հագնվել և այլն (Վ. Գոսյան, 1975, էջ 452)։

AAV կառույցը ժամանակակից հայերենում կարող է դրսեւորվել երկու տարբերակով՝ (AA)V և A(AV)։ (Անհաշի կրկնություններից խոսնադեմը նպատակով արտածման ցանկերը կամ ծառերը չենք բերում)։

(A₁A₂)V վերլուծութայն դեպքում A₂ ածականը պետք է լինի որակական և հանդես գա մակբայի պաշտոնով։ Այդ դեպքում A₁ ածականի պաշտոնում հանդես է գալու որակական-ատրիբանայան երանգաւորման իմաստ ունեցող ածական, ինչպես բավական երկար մնաց, արտակարգ վատ սովորեց և այլն։ Հիմնավորումը պարզ է։ Ինչպես մերեւում նշվեց, բայի լրացում կարող է դառնալ որակական ածականը, իսկ եթե վերջինս դիտարկենք իբրեւ միջուկ, ապա այն կարող է ընդարձակվել միայն որակական-ատրիբանայան երանգավորման իմաստ արտահայտող ածականով։

A₁(A₂V) վերլուծութայն դեպքում A₁ ածականը արդեն հանդիսանում է ամբողջ A₂V բայական բառակապակցութայն շարահյուսական ֆունկցիա, թեեւ նման դեպքերը արտակարգ դժվարությամբ են տարբերվում առաջին աշտածումից։ Առանձին դեպքերում տարբերությունը զգալի է։ Օրինակ, նա անաշխատանք երկար մնաց բառակապակցութայն մեջ բացառվում է *անաշխատանք երկար արտածումը և այդ իսկ պատճառով անաշխատանք ածականը երկար մնաց բայական բառակապակցութայն շարահյուսական ֆունկցիան է։ Այս բանը ավելի պարզ կերեւաւթն ընդարձակենք, օրինակ, երկար ածականը իբրեւ միջուկ։ Այդ դեպքում կստանանք հետեւյալ նմուշը՝ նա անաշխատանք բավական երկար մնաց։

Վերջին կառույցը այս խմբից՝ DAV-ն, նույնպես կունենա երկու դրսեւորում և համապատասխանաբար երկու վերլուծություն։ Առաջին արտածման մեջ (DA)V մակբայը ածականի շարահյուսական ֆունկցիան է, իսկ ածականական բառակապակցությունը՝ բայի բնական է, որ այս արտածման դեպքում ածական-միջուկի դերում հանդես են գալու որակական ածականները, օրինակ, նա շատ երկար մնաց։ Երկրորդ դրսեւորման ժամանակ մակբայը դառնում է ածականի ստորադասությամբ բայական բառակապակցութայն շարահյուսական ֆունկցիան՝

D(AV), Օրինակ, նա շատ ահաշխատաճ մնաց:

Հաջորդ՝ D, AD, DD, կառույցներն առանձնահատուկ են նրանով, որ բոլոր երեք կառույցների միջուկը կազմում է մակբայր, այսինքն՝ այդ կառույցների շարահյուսական ֆունկցիան կհանդիսանա բայր կամ բայական բառակապակցությունը: Ինչպես նախորդ դեպքում, նույնպես և այստեղ, երկրադարիչ կառույցների դեպքում կունենանք երկու տարբերակ՝ առաջին բաղադրիչը կամ կհանդիսանա երկրորդի շարահյուսական ֆունկցիան, կամ կընդունի մի բառակապակցություն, որտեղ մակբայր ստորադաս անդամ է: Մակբայ < բայ զուգորդումները մանրամասն դիտարկել ենք վերելում և այստեղ կրկնելու հարկ չկա: Եթե մակբային հաջորդում է գոյական, ապա այս կապակցություններն ունեն գործառական երկու ոլորտ՝ վերնագիր-անվանական և նախադասությունների բաղադրիչ կապակցություններ: Վերնագրային-անվանողական այս կապակցությունները իրենց հերթին երկու կարգի են լինում: Դրանց մի մասը նման է այն կապակցություններին, որոնցում ենթագրյալ բայ ստորոգյալը կամ ածականական ստորոգելիական վերադիրը գեղյված է և դրա հետեանքով աճիջական բային կամ ածականին հատուկ մակբայն անցել է գոյականին: Այսպես, ավիամ երաժիշտ տիպի կապակցությունն ըստ էության արտացոլում է ավիամ երաժիշտ լինել (դառնալ, կոչվել և այլն) կապակցությունը: Մնացած՝ ավելի մեծ մասը բայական կամ ածականական ծաղմամբ գոյականների և մակբայի լրացմամբ կապակցություններն են: Այսինքն՝ գուր հույսեր, շտապ կարգ սչրություն, ավիամ զարմանք և այլ կապակցություններում համապատասխան մակբայր գոյականի լրացում է դարձել բայական բառակապակցությունների նմանակությամբ (Ս. Արրահամյան, 1975, էջ 34-35): Նշված դեպքերը մեզ հետաքրքրում են այնքանով, որքանով այդ կապակցությունները մաքուր անվանական բառակապակցություններ չեն: Նշանցում բայր կամ գեղյված է, որը վերականգնելուց հետո բառակապակցությունը փոխ ոկվում է մեր կողմից քննարկված որեէ բայական բառակապակցության, օրինակ ավիամ երաժիշտ լինել, կամ փոխարինված է բայանունով, որը ոտանում է ելակետային բայի խնդրառական ինչպես և հարադրական բայություն կալմելու ունակությունը:

Եթե այդ այդպես է, ապա վերելում ինչ այլեք բայական բառակապակցությունների վերաբերյալ, նույնությամբ կարելի է կրկնել այն անվանական բառակապակցությունների համար, որոնց միջուկը բայանունն է:

Այսպիսով, ավարտելով ժամանակակից հայերենի բայական հարգությունների քննությունը, կարող ենք անել հետեւյալ եզրակա-

ցություններու

1) Բայական Հարադրությունը շարահյուսական երեւութ է և նրա վերլուծությունը անհրաժեշտ է կատարել շարահյուսական մակարդակում, թեև ժամանակակից Հայերենում առկա են դեպքեր, երբ բայական հարադրությունը ուղղակիորեն արտապատկերվում է բառային մակարդակում:

2) Այդ նկատառումով ցանկացած բայ կարող է գտնվել լեզվական այնպիսի իրադրության մեջ, որտեղ գոյականն այլ կառույցն ստանում է Հայադրության աղծք: Կան բայեր, որոնք ցանկացած լեզվական իրադրության մեջ հանդես են գալիս բայական Հայադրության ձևով: Դրանք կայուն բայական Հայադրություններ են:

3) Փանի որ նախադասության անդամների և նախադասության կազմի մեջ մտնող բառերի սահմանները ընդհանուր դեպքում կարող են չհամընկնել, ապա միեւնույն բայական բառակապակցությունը մի լեզվական իրադրության մեջ կարող է գիտվել իբրեւ հարադրավոր բայ, իսկ մեկ այլ իրադրության մեջ իբրեւ սովորական շարահյուսական կառուցվածք, որտեղ դրսևորված են բայի ու գոյականի խնդրային կամ պարագայական հարաբերությունները: Այդ նշանակում է, որ խոսքի մեջ հարադրաստեղծ գործոնը գտնվում է գոյականի բայ կառուցվածքից դուրս, որը կառավարում է NV կառույցի դրսևորումը:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ
ԲԱՌԱԿԱՊԱԿՑ ՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գոյական ստորադաս անդամ ունեցող բայական բառակապակցութ-
յուններն արտահայտում են երկու բնութի հարաբերություններ՝
խնդրային և պարագայական: Սակայն, ինքն վերանանք հոլովների
ստորոգելիական, խնդրային ու պարագայական կիրառություններից
և փորձենք որոշել բայի հոլովական լրացումների կադապարը, ապա
կստացվի $((((a*)b+)c+)d+)A.(+e/b_1)$ բանաձևը, որտեղ՝
A-ն բայն է, a-ն՝ ներգոյական հոլովով լրացումը, b-ն՝ ուղղական-
տրական (,,հայցական,,) հոլովով լրացումը, c-ն՝ գործիական հո-
լովով լրացումը, d-ն՝ բացառական հոլովով լրացումը, e-ն՝ տրական
հոլովով լրացումը, b₁-ը՝ ուղղական հոլովով լրացումը, իսկ e/b₁ -ն
(փոխանակման նշանով) ցույց է տալիս, որ տրականով և ուղղա-
կանով լրացումները հանդիպում են կադապարային միեւնույն դիր-
քում և այն էլ ոչ միաժամանակ, (Գ. Ջահուկյան, 1974, էջ 431):

Ամենից շատ խնդիրներ (նկատի ունենանք նաև թույլ խնդրառու-
թյունը) բնագրկող դարձնել բայը, շարունակում է Գ. Բ. Ջահուկ-
յանը, կունենա b₁-ով (ուղղական հոլովով՝ Բ. ՈՒ.)՝ գործարանում
ջուրը մեքենայով հեղուկից դարձնում են պինդ մարմին, իսկ նրա
համանիշ փոխել և վերածել բայերը՝ տրականով խնդր՝ գոյակա-
նական միեւնույն արժեքով. ու կադապարային միեւնույն դիրքով՝
գործարանում ջուրը հեղուկից մեքենայով փոխում են պինդ մար-
մնի: Ծարժել բայի դեպքում հանդես կգա $((((a+(b+(c+
d+)A.(+b_1)$ տարբերակը՝ գործարանում մեքենան վագոնով մի ար-
տադրամասից շարժում են մյուս արտադրամաս. այդ նույն բանը
կարելի է ասել շարունակել բայի մասին՝ այն տարբերությամբ, որ
տեղի պարագայի ելակետային և հանգակետային տարբերակների փո-
խարեն հանդես կգան ժամանակի համադասարան տարբերակներ՝

դիրքի փոփոխութեամբ՝ զործարանում աշխատանքը նոր մեքենայով շարունակուեալ եմ առավոտից երեկո:


Ամենից բիշ՝ միայն ներդոյականով, յրաջում կարող է ունենալ կառար՝ զործարանում կա: Մնացած բայերը կստանան երկուսից մինչեւ հինգ պարտադիր և ոչ պարտադիր յրաջում: Այս բոլոր դեպքերում կազապարի մեջ նկատի չեն առնուեալ բոլոր բայերի հետ որպէս ոչ պարտադիր յրաջում հանդէս եկող ժամանակի և չափի պարագաները, որոնցից առաջինը սովորաբար ձեւավորուեալ է տշականով և նախորդում (երբեմն հաջորդում) ներդոյականով յրաջմանը կեսօրին զործարանում, իսկ երկրորդը սովորաբար ձեւավորուեալ է գործիականով ու սովորաբար փոխարինուեալ է գործիականով յրաջմանը. այս պարագաների համար առաջնային է մակբայական արտահայտութիւնը (Գ. Ջահուկյան, 1974, էջ 431-432):

Ակադեմիկոս Գ. Բ. Ջահուկյանի կողմից տրված հիմունքները՝ դոյականի ստորագասութեամբ բայական բառակապակցութիւնների կազապարման վերաբերյալ, բավարար է, որպէսզի կարողանանք մշակել անմիջական բաղադրիչների քերականութեան մի տարբերակ՝ զուտ դոյականա՛յն ստորագասութեամբ բայական բառակապակցութիւնները նկարագրելու համար: Դրա համար անմիջական բաղադրիչների քերականութիւնը կիրաքնենք A, B, C, D, E. Ծայրագույն տարրերով, իսկ արտածման կանոնների բազմութիւնը՝ NP→A, NP→B, NP→C, NP→D, NP→E արտածման կանոններով (նշենք, որ A և D տառերով մենք վերեւում նշանակուեալ էինք անվանական ու բայական որոշչային բառախմբեր, այն դեպքում, երբ այդ տառերով աշտեղ նշանակուեալ ենք ներդոյական և բացառական հոլովով յրաջումներ: Այդ ստացվել է այն պատճառով, որ մենք ցանկացել ենք անփոփոխ փոխառնել հեղինակային նշանակումները, իսկ եթէ կհանդեքնի թիւրիմացութիւնների, ապա կտրվեն համապատասխան մեկնաբանութիւններ): Զուտ դոյականական ստորագասութեամբ բայական բառակապակցութիւնների քննութեան համար հիմք են ծառայել յօժամանակակից հայոց լեզու, 3, և վ. Ա. Քոստանի յօժամանակակից հայերենի բառակապակցութիւնները, աշխատութիւնները: Առանձին դեպքերում նմուշներ փոխառնված են այլ սկզբնաղբյուրներից:


Փոյականի ուղղական – հայցական կամ տրական – հայցական հոլով < բայ կոտուցվածքի բառակապակցութիւններ

Սնդ բային հարաբերութիւնները այս կառուցվածքի բառակապակցութիւններում օրյկտային են, այսինքն՝ արտահայտում է գոր-

ծ ողութ յուն և նրա անմիջական ոլորտի մեջ ընկած առարկայի հա-
րարերութ յուննր։ Անմիջական շարահյուսական կախումների քերական-
նութ յա հր արտահայտված՝ կղենենանք դադար, որը համապատաս-
խանութ յան մեջ կդրվի բային և երկու ճյուղեր՝ որոնցից մեկը կը-
համապատասխանի պրեդիկատային, իսկ մյուսը՝ օբյեկտային կապին։



Կառուցվածքային տեսակետից $N: < V$ կառուցվածքի բառակապակ-
ցութ յուններում ստորագույն անդամը (N) բայի նկատմամբ կարող է
գրավել թե՛ առաջագույն և թե՛ ետագույն դիրք։ Օրինակ, զիրք կար-
դալ, տուն կառուցել, լսել երաժշտություն, դիտել կինոնկար և այլն։
Ստորագույն անդամի առաջագույն կամ ետագույն դիրքերը չեն խախտում
արտածման պրոյեկտիվութ յուննր։ Այսպես՝



Հարկ է նշել, որ աշխատանքի այս հատվածում ղուգահեռաբար
կրերենք տվյալ բառակապակցութ յան նկարագրութ յուննր երեք՝ նա-
խադասութ յան անդամների, անմիջական բաղադրիչների և կախում-
ների ծառերի քերականութ յան օգնութ յամբ։ Առանձին դեպքերում
դրանք կտրվեն առանց հատուկ նշումների, որովհետեւ օգտագործված
տերմիններից պարզ կլինի, թե որ կադապարն է կիրառված։

Քանի որ տվյալ բառակապակցութ յան համար ժամանակակից հա-
յերենում հանդիպում ենք ստորագույն և ետագույն դիրքերի, ապա բայ-
միջուկի ընդարձակման համար կարելի է օգտագործել $VP \rightarrow (NP)(VP)$
և $VP \rightarrow (VP)(NP)$ արտածման կանոնները, սակայն, եթե այդ արտած-
ման կանոնները զանկանում ենք ընկնել, չիմուռնեցնում, տրված
կադապարից, ապա նախընտրելի է ստորագույն անդամի առաջագույն
դիրքը, այսինքն՝ $VP \rightarrow (NP)(VP)$:

Այն դեպքերում, երբ բայ-միջուկը դրսևորվում է՝ բուն պատճա-
ռական բայով, ապա ստորաբար ունենում է բուն տրականով լրա-
ցում, որով դրսևորվում է բայահիմքի ցույց տրված գործողութ
յան կատարողը։ օրինակ՝ երեխային ջուր խմեցնել, աղջկան հագուստ
հագցնել և այլն (Ս. Արրահմայան, 1976, էջ 90)։

Նախ դիտարկենք պատճառաւոր բայերը ըստ արժույթային ունակութիւններին: 1) Հիմունքներում 2) նշված է, որ ըստ բայի հետ կապվող միավորների բնութիւնը արժույթը կարող է հանդէս գալ որպէս՝ ա) ենթակառուցութիւն (բառային - քերականական ենթակա ստանալը կամ չստանալը), բ) ստորոգառութիւն (ստորոգելի կամ ստորոգելիական խնդիր ստանալը կամ չստանալը), գ) խնդրառութիւն (տարբեր տիպի խնդիրներ ստանալը), ընդ որում սրա մի դրսեւորումը կլինի անցողականութիւն-անանցողականութիւնը՝ ուղիղ խնդիր ստանալը կամ չստանալը) և դ) պարագագառութիւն (տարբեր տիպի պարապրաներ ստանալը կամ չստանալը) (Գ. Զահեկյան, 1974, էջ 467):

Եթէ զանց առնենք ժամանակակից հայերենի բուն միաբեմ բայերը, որոնք ի դեպ մեծ թիվ չեն կազմում, ամպել, անգրէլ, երեկոյանալ, լուսանալ, ձյունել, լցնել, մթնել, ցրտել, ապա ենթակառութիւնը լինելով արժույթի մի դրսեւորումը՝ ժամանակակից հայերենի բայերը առնվազն մի արժույթանի են: Այլ կերպ ասած՝ ենթակառութիւնը ժամանակակից հայերենի բայերի համար պարտադիր է, և այն դրսեւորող արժույթը՝ պարտադիր արժույթ: Ինչ վերաբերում է պատճառական բայերին, ապա 1) պատճառական բայաձևով արտահայտվող դործողութիւնը չի կարող իրականանալ առանց ուրիշ առարկայի կամ առարկաների, առանց օբյեկտի կամ օբյեկտների, 2) (Ա. Աբրահամյան, 1962, էջ 535):

Համեմատութիւն համար բերենք բայերի ու բայաձևերի հետեւյալ շարքերը (փոխառնված է Ա. Աբրահամյանի նշված աշխատութիւնից)՝

աճել	-	աճեցնել,
հիվանդանալ	-	հիվանդացնել,
վազել	-	վազեցնել,
նստել	-	նստեցնել և այլն:


Առաջին շարքում դրանցված բայերն ունեն անանցողական չեղորսւնային հատկանիշ, իսկ երկրորդ շարքի բայերի մոտ առաջ է եկել անցողականութիւն իմաստ: Իսկ եթէ փորձենք պատճառականութիւն հատկանիշով հավելնք անցողական բայերը, ապա ընդհանուր անցողական իմաստի հետ նրանք կստանան նաեւ ածանցյալ իմաստ, որը հենց պատճառական սեռային իմաստն է: Օրինակ՝

հասկանալ	-	հասկացնել,
խմել	-	խմեցնել,
ուտել	-	ուտեցնել,
նկարել	-	նկարել տալ և այլն:

Սկզբնատիպ և պատճառական բառերի համեմատութիւնը հանդէսում է ալն եղրակացութիւնը, որ պատճառականութիւն հատկանիշի

Հավելումը սկզբնատիպ բայերի մոտ բերում է արժույթի հավելում, որի հետեանքով անանցողական բայերը ստանում են անցողականության հատկանիշ, իսկ անցողականները՝ սեռային հատկանիշ, իհարկե, այն չի վերաբերում բնաճայնային գործողության պատճառականաձև բայերին, որոնք պատճառական անցումով սեռային փոփոխություն չեն կրում, լինելով չեզոք սեռի բայեր՝ ածանցումով էլ մնում են որպես ալոպիսին (Ա. Աբրահամյան, 1962, էջ 577)։

Ստորեկ ցուցաբերնք սկզբնատիպ բայերի վրա պատճառականության հատկանիշի ավելացման ալոպիսությունը կախումների ծառի վրա՝ ոչ անցողական բա :




Պատճառական բայերի քննումը նախադասության անդամների և կախումների ծառերի քերականության մասին է համարվում արդյունք. ըստ նախադասության անդամների կադապարի ցա երեխային ջուր խմեցրեց նախադասության մեջ ունենք՝ նա - ենթակա, խմեցրեց - ստորոգյալ, ջուր - խնդիր, երեխային - խնդիր, Ըստ կախումների քերականության՝ խմեցրեց - կախումնակ բառ (ծառի գագաթ), նա - իրացնում է ենթակաառություն արժույթը, ջուր - օբյեկտային արժույթը, իսկ երեխային - հասցեատիրոջ արժույթը (ընդուն : պատճառականության հատկանիշի)։

Նախադասության նկարագրությունը մնում է անփոփոխ նույնիսկ չարակալի փոփոխության դեպքում, օրինակ ցա երեխային ջուր խմեցրեց, ցա ջուր խմեցրեց երեխային, ցա երեխային խմեցրեց ջուր և այլն, Չի խախտվում նաև նախադասության պրոլեկտիվությունը.

- I նա երեխային ջուր խմեցրեց, III նա երեխային խմեցրեց ջուր,
II նա ջուր խմեցրեց երեխային, IV երեխային նա ջուր խմեցրեց։

վերլուծենք բերած չորս նախադասութիւնները անմիջական բաղադրորդների քերականութեան օգնութեամբ (Տեղի պատճառով մենք չենք տա արտածման ընթացքը, այլ կրաւորարարւոյնք միայն արտածման արդիւնքով)։

Առաջին նախադասութեան համար կստանանք հետեւյալ վերլուծութիւնը ((նա)((երեսային)((ջուր)(խմեցրեց))))



Արտածման ծառից պարզ երեւում է, որ երեսային դոյականը կազմում է ջուր խմեցրեց բաղական բառակապակցութեան շարահիշուսական ֆունկցիան եւ այդ իսկ պատճառով լրացնում է ոչ թե խմեցրեց բայը, այլ ամբողջ բառակապակցութիւնը։ Ջուր խմեցրեց բառակապակցութիւնը, տվյալ պարագայում, ստանում է հարադրութեան արժեք։ Հարադրութիւնների դասական ընդունմամբ (օրինակ, նա անասուններին ջուր խմեցրեց խոսքային իրադրութեան մէջ ջուր խմեցրեց բաղական բառակապակցութիւնը կարելի է փոխարինել ջրեց բայով) ջուր խմեցրեց բաղական բառակապակցութիւնը նույնպէս բաղական հարադրութիւն է, քանի որ կան խոսքային իրադրութիւններ, որտեղ այն կարելի է փոխարինել ջրեց բայով՝ տե՛ս ջրեց՝ ջուր խմեցնել անասուններին (է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան)։

Երկրորդ նախադասութիւնը կունենա երեք վերլուծութիւն։




ա) ((նա) (((ջուր) (խմեցրեց)) (երեսային)))

բ) ((նա) ((ջուր) (խմեցրեց) (երեսային)))

գ) (((նա) ((ջուր) (խմեցրեց))) (երեսային))

Ակներեութեան համար բերենք այդ երեք դիպքերի արտածման ծառերը (տես էջ 119)։

Նշված երեք արտածումներից ամենահնարավորն առաջին արտածումն է, իսկ ավելի քիչ հնարավոր՝ վերջինը։ Առաջին արտածումը համընկնում է նախորդ նախադասութեան արտածման հետ, իսկ վեր-



ջին արտածման դեպքում, նա ջուր խմեցրեց նախադասութիւնը, իրրե կատարւող գործողութիւն, ստանում է երեխային լրացումը: ա) և բ) արտածումներին, ինչպես նշեցինք, նախադասութիւնը կարելի է տալ առջին արտածմանը, քանի որ այն ավելի շատ դեպքեր է բնորոշում: Այսպես օրինակ, նա ջուր տվեց երեխային, նա ձայն տվեց երեխային նախադասութիւնները արտածվում են առան-

ջին կադապարով:

Նույն դատողութիւնը III նախադասութիւնը նույնպէս կուենե-
նա երեք արտածում՝

ա) ((նա) ((երեսային) (խմբերեց)) (ջուր)))

բ) ((նա) ((երեսային) ((խմբերեց) (ջուր)))))

գ) (((նա) ((երեսային) (խմբերեց))) (ջուր)))

Այս երեք արտածումներէջ հնարավորը երկրորդ արտածումն է,
եթէ հաշիւի առնենք արժեքային կապերի, այսպէս կոչված, ար-
ժեքը: Բայից դեպի հայցական հոլովով գոյական տարած կապի ար-
ժեքն ավելի մեծ է, քան դեպի տրական հոլովով գոյական տարած
կապը: Այստեղ տեղին է նշել մի աշխատանք, որն արվել է 60-ական
թվականներին և ժամանակակից հայերենի համար, ցավոք, կատար-
ված էէ Դա Knowlton K. G. Sentence parsing with a selfganizing
heuristic program- (Cambridge (Mass)) 1962, Var. pag (Mass d inst.
of technology, Reseavcle lab. of electronics. MГ group) աշխատանքն
է, որտեղ հիմք է ընդունվում յուրաքանչյուր տարբերակի հարաբերա-
կան քաջը կամ կշիռը հենված արժեքային կապերի տարբերակման
վրա:

(IV) նախադասութիւն արտածումը նման է (II) նախադասութիւն
երրորդ (գ) արտածմանը. (Երեսային)((նա)((ջուր)(խմբերեց))):

Գոյականի ուղղական-հայցական < բայ կառուցվածքի բառակապակ-
ցութիւնների զուգահեռ քննութիւնը նախադասութիւն անդամների,
կախումների ծառերի և անմիջական բաղադրիչների քերականութիւն-
ների օգնութիւնը գույց տվեց, որ առաջին երկուսի համեմատ ան-
միջական քերականութիւնը տրված նկարագրութիւնը ընդարձակ է,
որն ավելի է ընդգծում բառակապակցութիւնների իմաստային առ-
անձնահատկութիւնները:

Գոյախոսի տրակառ հոլով < բայ կառուցվածքի բաղադրապակցու-
թիւններ

Գոյականի տրական հոլով < բայ կառուցվածքի բառակապակցու-
թիւններն արտահայտում են թե՛ ինդերային, թե՛ պարագայական
հարաբերութիւններ: Երկանդամ բառակապակցութիւնների վերլու-
ծութիւնը պարզ է: Ժամանակակից հայերենում հանդիպում են ստո-
րագաս անդամի և՛ ետագաս, և՛ առաջագաս դեպքեր, որոնք համա-
պատասխանաբար արտածվում են կամ VP→(VP)(NP) կամ VP→
→(NP)(VP) արտածման կանոններով, օրինակ, վագոնից կցել, ըն-

կերոջը հանդիպել, կամ կցել վագոնին, հանդիպել ընկերոջը և այլն,

Ըստ նախադասության անդամների կադապարի, տրական հոլովով առնված, բային ստորագաս գոյականը ստանում է ինդերի կամ պարագայի պաշտոն: Կախումների քերականությամբ՝ գոյականը զբաղեցնում է օբյեկտային կամ պարագայական մակարդակը: Ըստ անմիջական բաղադրիչների քերականության գոյականը և բայը կամ անմիջական բաղադրիչներն են, որոնց մեջ հաստատված է կախումնային հարաբերություն, կամ անմիջական բաղադրիչներ հանդիսացող անվանական և բայական բառակապակցությունների միջուկները: Եթե հաշվի առնենք, որ բառակապակցությունների միջուկների շարահյուսական ֆունկցիաները համընկնում են համապատասխան բառակապակցությունների շարահյուսական ֆունկցիաներին հետ, ապա վերջիններին կախումնային հարաբերությունները անցնում են միջուկներին: Ենանդամ՝ գոյականի ուղղական հոլով < բայ < գոյականի տրական հոլով, բառակապակցությունների դեպքում նշված երեք քերականություններով տրված նկարագրությունների տարբերությունն ավելի զգալի է:

Գոյականի ուղղական հոլով < բայ < գոյականի տրական հոլով բառակապակցություններում, ուղղական հոլովով ստորագաս անդամը, որը հիմնականում իր է մատնանշում, ցույց է տալիս գործողություն կրող առարկան, իսկ տրական ստորագաս անդամը՝ այն առարկան, որին հանգում է գործողությունը (տրվում, մատուցվում է մի բան), (Ս. Աբրահամյան, 1974, էջ 92): Ահա այն հիմնական դրույթը, որն ընկած է նախադասության անդամների կադապարի հիմքում: Ծարահյուսական անմիջական կախումների ծառերի քերականությամբ՝ դա բայի երկու արժույթի իրացում է: Այն դեպքերում, երբ եղանդամ բառակապակցության անդամների շարակարգի փոփոխությունը կարող է առաջ բերել իմաստային որոշ տարբերություններ, նշված երկու քերականությունների բացատրողական ուժը բավարար է այդ նրբությունները տարբերակելու համար: Այսպես, օրինակ, մեզ թվում է, որ սնունդ մատակարարել բառակապակցություններն ունեն իմաստային տարբեր նրանքներ, որոնք նկատելի չեն, եթե ուսումնասիրության միջոցները լինեն նախադասության անդամների կամ կախումների ծառերի քերականությունները:

Փորձենք դեպքերը քննել անմիջական բաղադրիչների քերականության օգնությամբ: Նախ, ըստ չհիմունքների, ժամանակակից հայերենում ընդունված շարակարգը համապատասխանում է (b)A. (←e) կադապարային բանաձևին: Հայտնի է, որ երեք անդամների

գծալին դասավորութիւն դեպքում կունենանք 6 զուգորդ ունի. Գրենք
 ՆեՆՆՆՆՆՆ, ՆոՆՆՆՆՆՆ, ՆտՆՆՆՆՆՆ, ՆտՆՆՆՆՆՆ, ՆՆՆՆՆՆՆՆ, ՆՆՆՆՆՆՆՆ
 զուգորդութեները առանձին-առանձին:

1 VP = ՆոՆՆՆՆՆՆ ելակետային դեպքը լայն տարածում ունի ժամանակակից Հայերենում: Որպես նմուշ բնորոշենք սնունդ մատակարարել բանվորներին բառակապակցութիւնը:

Նախադասութիւն անդամների կադայարի օգնութեամբ կարող ենք պարզել, որ նա սնունդ մատակարարեց բանվորներին նախադասութիւն մեջ մատակարարել բայը կստանձնի ստորոգյալի պաշտոն, սնունդ դոյականը՝ ուղիղ խնդիր, իսկ բանվորներին դոյականը՝ անուղակի խոնդիր: (Բերած օրինակի նախատիպը փոխառնված է Ս. Գ. Արբաշանի վ. Գ. Առաքելյանի, վ. Ա. Գոսյանի «Հայոց լեզու», Բ մաս (Երեւան, 1975) աշխատութիւնից (Խրկիրը սնունդ է մատակարարում կոմիտենին, էջ 209):

Կախումների ծաւերի քերականութեամբ նկարագրելիս այս նույն նախադասութիւնը կարելի է ներկայացնել հետեւյալ կերպ.



Ամփոփական բաղադրիչների քերականութիւնը այս բառակապակցութեան համար տալիս է երկու վերլուծութիւն.


ա) $VP \rightarrow ((\text{սնունդ}) ((\text{մատակարարել}) (\text{բանվորներին})))$



$VP = NVN(VP, NPVP, NPVPNP, NVPNP,$

$NVNP, NVN):$

բ) $VP \rightarrow ((\text{սնունդ}) (\text{մատակարարել}) (\text{բանվորներին}))$





$VP = NVN(VP, VPNP, NPVPNP, NVPNP, NVNP, NVN):$

Առաջին արտածման ընթացքում մատակարարել և բանվորներին միավորները անմիջական բաղադրիչներ են, որոնց հարադրության շարահյուսական ֆունկցիան սնունդ գոյականն է՝ այս այն սնունդն է, որը մառախարավեց բանվորներին: Երկրորդ արտածման ընթացքում անմիջական բաղադրիչներ են սնունդ և մատակարարել բառերը, որոնք իրենց հերթին ընդունվում են բանվորներին գոյականով: Երկու արտածումների տարբերությունը այն է, որ վերջինում սնունդ մատակարարել բաղադրիչը ստանում է հարադրության արժեք: Այդ բաղադրիչը հեշտությամբ դառնում է մակբայի շարահյուսական ֆունկցիա, օրինակ, նա երեկ սնունդ մատակարարեց բանվորներին: Դասական ներկայացմամբ՝ եթե սնունդ մատակարարելը որոշ իրադրության մեջ սպասարկելն է, ապա տառնց իմաստի փոփոխության կատանքը նա երեկ սպասարկեց բանվորներին նախադասությունում:


2. VP NուNա, սնունդ բանվորներին մատակարարել,
սպասարկեց Գյոթեին ուղարկել:

Այս բառակապակցությունը ևս կունենա երկու արտածում, որոնցից երկրորդը ժամանակակից հայերենում հազվադեպ դրսևորում ունի: Բանն այն է, որ տրական հոլովով լրացում պարունակող անվանական բառակապակցություններն ավելի շատ փորձածական են վերնադրաին-անվանողական կառույցներում, օրինակ՝ սպասարկեց Գյոթեին, սալֆեր գլուխին և այլն:




Դժվար է նկատել, որ ըստ նախադասության անդամների կադա-
պարի, առաջին և երկրորդ արտածումները չեն տարբերակվում, մինչ-
դեռ երկրորդ արտածման մեջ պարզորոշ երևում է, որ դոյականն
(սխառասխան) ունի լրացում, և այն առնված է տրական հոլովով:

3. $VP = N \text{ տ } N \text{ տ } V$ Բանվորներին սնունդ մատակարարել,
կեսգիշերին վերադարձ տեղի չունեցավ:





Այս արտածման ժամանակ սնունդ մատակարարել բառական բա-
ռակապակցությունը ստանում է հարադրության արժեք (համեմատել
բանվորներին սպարելի բառակապակցության հետ):

Ի՞նչ երկրորդ օրինակը արտածենք առաջին սխեմայով, ապա կես-
գիշերին բառը կդառնա պարագայ Սակայն, կեսգիշերին վերադարձ
բառակապակցությունը դիտելով իբրև $NP = NPNP$, կստանանք հետե-
լիս արտածման ծառը:




4. $VP = N \text{ տ } VN \text{ տ } V$ Բանվորներին մատակարարել սնունդ:



5. VP = VN_ոN_ոտ Ուղարկել ձոն հերոսներին,
Մատակարարել սնունդ բանվորներին.


ա)



((ուղարկել) ((ձոն) (հերոսներին)))

VP = VNN (VP, VPNP, VPNPNP, VPNNP, VPNN, VNN):

բ)




(((մատակարարել) (սնունդ)) (բանվորներին))

VP VNN(VP, VPNP, VPNPNP, VNNP, VNN):
VNN):

6. VP = VN_սN_ու

Հնարավոր է, որ այս արտածումը ժամանակակից հայերենում
այն դրսևորում չունենա, որովհետեւ միանգամից երկու ետադաս
խնդիր չի հանդիպում, բայց, այնուամենայնիվ, նմուշները կրեւենք,
քանի որ նրանք հայերենին խորթ չեն:


ա)



((տալարկել) ((մեկին) (մի բան)))

VP = VNN(VP, VPNP, VPNPNP, VPNNP, NPVN, VNN):

բ)



(((տալարկել) (մեկին) (մի բան)))

VP = VNN(VP, VPNP, VPNPNP, VPNPNP, VPNN, VNN):

Գոյականի բացահայտումն հոլով < բայ կառուցվածքի բառակապակցություները

Այս կառուցվածքի բառակապակցութ յուններով արտահայտվող խնդրային և պարագայական բաղմագան հարաբերութ յունները ունեն մեկ իմաստային երանգավորում՝ անջատման, սկզբնային, ելակետային, մի իմաստ, որ բխում է բացահայտան հոլովի իմաստային առանձնահատկութ յուններից (Ս. Աբրահամյան, 1976, էջ 96): Խնդրային բացահայտանի հիմքում ընկած է անջատման, ելակետի, սկզբնակետի իմաստ, Պարագայական իմաստները սակավաթիվ են՝ տեղի, ժամանակի, ձևի, հիմունքի, պատճառի:

Այս դեպքում ևս, երկանդամ բառակապակցութ յունների նկարագրությունը առանձնակի դժվարութ յունն չի ներկայացնում. երկու բաղադրիչները զծային դասավորութ յախ կարող են հանդես գալ երկու եղանակով՝ NV, VN, օրինակ՝ սարից իջնել, իջնել սարից, տերեւներից մերկանալ, մերկանալ տերեւներից և այլն:

Եթե բայ միջուկը հանդես է գալիս երեք արժույթով, ապա արժույթներից մեկը իրացնում է ուղղական հոլովով լրացումը, իսկ մյուսը՝ բացահայտան, Այդ դեպքում, ըստ «Հիմունքների», ժամանակակից հայերենում գրաբարում է (b+)A(-d) մասնակադասարը, որտեղ b-ն ուղղականով լրացումն է, A-ն բայ միջուկն է, իսկ d-ն՝ բացահայտանով լրացումը: Մնացած հինգ գույքորդումները կարող են գրանցվել տարբեր իմաստային երանգավորումներով: Իրեր. ելակետային նմուշ ընտրենք վարկ պոկել թփից բառակապակցութ յունը և առանձին-առանձին քննարկենք NուVNը, NուNըV, NըNուV, NըVNու, VNուNը, VNըNու կառույցների գրաբարումները ժամանակակից հայերենում:
1 VP = NուVNը. Վարկ պոկել թփից


«Հայոց լեզու», աշխատութ յունից փոխ առնենք հետեւյալ նմուշը (էջ 69)՝ բերալ այն մանյալը, որ հանել էին նախնիները քաղուհու պարանոցից: Նույն աշխատութ յունից մի օրինակ ևս՝ մեղր է քամում փշից անգամ (էջ 70): Ներկա դեպքում նմուշները կարող են փոխակերպվել համապատասխանաբար մանյալ հանել պարանոցից և մեղր քամել փշից բառակապակցութ յուններին:

Ըստ նախադասութ յան անդամների կադասարի, VP = NուVNը վերլուծութ յունը միատեսակ է բոլոր վեց գրաբարումների համար՝ V-ն՝ ստորոգյալ, Nու-ն՝ ուղիղ խնդիր կամ պարագա, Nը-ն՝ խնդիր կամ պարագա, Ըստ կախումների քերականութ յան, V-ն՝ տեղ կդրողների կախումների ծառի գագաթում, Nու և Nը անդամները՝ օբյեկտային մակարդակի վրա:

Անմիջական բաղադրիչների կադասարով բոլոր վեց գրաբարումներն

էլ կունենան երկուական վերլուծութիւնն:

ա) ((վարդ) ((պոկել) (թփից)))




VP = NVN(VP, NPVP, NPVPNP, NPVNP, NPVN, NVN):

Արտածման ծառից պարզ երեւում է, որ վարդ գոյականը հանդիսանում է պոկել թփից բաղական բառակապակցութեան շարահիշուական ֆունկցիան, որի հիման վրա լրացնում է ոչ թե պոկել բալին, այլ ամբողջ բառակապակցութեանը: Սակայն, քանի որ պոկել թփից բառակապակցութեան միջուկը պոկել բալն է, ապա վարդ գոյականը լրացնում է նաեւ բալ-միջուկին: Այս բանը ցույց տալու համար կտրամադրենք հետեւյալ նմուշը: Արամը երեւ վարդ պոկեց թփից, իսկ Աշոտը՝ հագիվ մի չորացած տերեւ: Այս իրադրութեան մեջ զեղչվել է ամբողջ պոկել թփից բառակապակցութիւնը, որը ցույց է տալիս պոկել թփից բառակապակցութեան բաղադրիչների իմաստային ամբողջականութիւնը:

բ) VP = NVN: Այս դրսեւորման մեջ ունենք NուV կառուցը, որը հարադրածին է: Օրինակ՝ նա լաց եղավ հուզմունքից:

բ) (((վարդ) (պոկել)) (թփից))




VP = NVN(VP, VPNP, NPVPNP, NPVPNP, NPVNP, NPVN, NVN):

Ահա մի օրինակ՝ Աշոտը փող խնդրեց հայրիկից, իսկ Արամը՝ մայրիկից, որը ցույց է տալիս NուV բառակապակցութեան բաղադրիչների իմաստային միասնութիւնը: Ի դեպ, մենք բազմաթիւ անգամներ նշել ենք, որ NուV կապակցութիւնը հեշտութեամբ վերածվում է բաղական հարադրութեան: Օրինակ, ես փորձ արեց ֆիզիկայից նախադասութեան առաջին իմաստը ֆիզիկայից փորձ անելն է, իսկ այնուհետեւ՝ նա փորձեց ֆիզիկայից սկսել (սպասարկումներ), որտեղ փորձ արեց բառակապակցութիւնը հանդես եկավ իբրեւ բաղական հարադրութիւն:

2. VP = NVNPV


վարդ թփից պոկել

Դժկամութիւն կ'ունեցիք արտահայտել



((վարդ) ((թփից) (պոկել)))

VP = NNV(VP, NPVP, NPNPVP, NPNPV;
NPNV, NNV):




(((դժկամ ութ յուռն) (կյանքից)) (պրտահայտել))

VP = NNV(VP, NPVP, NPNPVP, NNPVP,
NNVP, NNV):

3. VP = NPNNV

Այս կառույցում գոյականի ուղղականն նախորդում է բային: Այդ նշանակում է, որ արտածման մի տարբերակում հնարավոր է, որ NուV դրսևորումը ստանա հարադրության արժեք: Ահա հարադրության օրինակ՝ Նա հուզմունքից լաց եղավ, որտեղ NուV դրսևորված է հարադրությամբ: Ամեն անգամ պաշարվածներից չարչար ջարդ կերան (օրինակը փոխանված է «Հայոց լեզու», աշխատությունից, էջ 75): Եվ ահա մի օրինակ, որտեղ NուV կառույցը նույնպես ստացել է հարադրության արժեք՝ հողմը ժայռից վազր է ձուլում (օրինակը փոխանված է «Հայոց լեզու», աշխատությունից, էջ 71), վախից բար կտրել և այլն:




((հուզմունքից) ((լաց) (լինել)))

VP = NNV(VP, NPVP, NPNPVP, NNPVP,
NNVP, NNV):

բ) Ժամանակակից հայերենում գոյականի լրացում կարող է դառնալ դերբայական դարձվածք, օրինակ՝ սառնից կարված թաշկինակ: Կան լեզվական իրադրություններ, երբ դերբայը զեղչվում է, ու նրա շարահյուսական ֆունկցիան ստանձնում է բացահայտնով դրված գոյականը, որը և դառնում է ուղղականով առնված գոյականի լրացումը,

օրինակ սառնիկից թաշկինակ: Այդ պիտի դեպքերում VP: N_pN_{ու}V կա-
սու լգր կու նենա հետևյալ արտածումը



(((սառնիկ) (թաշկինակ)) (կարելի))

VP = N_pN_{ու}V(VP, NPVP, NPNPVP,
NNPVP, NNVP, NNV):

Հետաքրքիր է, որ սառնիկից թաշկինակ կարելի բառակապակցում թույնը
կու նենա երկու վերլուծութունն էլ:

Առաջին վերլուծումը լամբ ((սառնիկ) ((թաշկինակ) (կարելի)))
դրսեօրում է ալն իմաստը, որ կա սառնիկ տոբ, որից թաշկինակ
է կարվում: Երկրորդ վերլուծումը լամբ (((սառնիկ) (թաշկինակ)) (կա-
րելի)) արտահայտում է ալն իմաստը, թե թաշկինակները պատրաստ-
ված են լինում տարբեր հումքից, մասնավորապես՝ սառնիկից, որը
և կարվում է:


4 VP: N_pVN_{ու}: Արտած ենք Ավ. Իսահակյանից վերցրած հետևյալ օրի-
նակը՝ մոլորվող սովորեց նա ձեռնիկով (օրինակի փոխարենում է
„Հալոց լեզու աշխատութունից, էջ 72): Այն նախադասութունից
եթե անհատներ ենթակառ, ապա կստանանք մոլորվող սովորել ու-
սովոր. բառակապակցում թույնը, որը խոսքի մեջ կարող է դրսեօրվել
երկու արտածումը

ա)

VP :

(((մոլորվողից) ((սովորել) (ուսովից))))

VP = N_pVN_{ու}(VP, NPVP, NPVPNP,
NPVNP, NPVN, NVN):




բ)

VP :

(((մոլորվողից) (սովորել)) (ուսովից))


VP: N_pVN_{ու}(VP, VPNP, NPVPNP,
NPVNP, NPVN, NVN):




Ահա էս մի օրինակ, որը նույնպես կարող է դրսևորվել երկու արտածմամբ՝ Այնուհետև աշխատում էր նա այդ գերանից պատրաստել մի լառափայտ (,,Հայոց լեզու,, , էջ 71):

